1830-ական թուականներից սկսած՝ Եզնիկի աշխատութիւնը գրաւել է նաեւ եւրոպացիների ու շաղրութիւնը: 1853 թ. Փարիզում լոյս է տեսնում Փրանսերէն առաջին թարգմանութիւնը, թէեւ անյաջող: Այնուհետեւ արեւելեան եկեղեցիների պատմաբաններ, մանաւանդ Գերմանացիներ «Եզնիկ իմաստասէրին»՝ հայ եկեղեցու ակնաւոր հեղինակին, տեղ են յատկացրել իրենց աշխատութիւնները մէջ, նրա երկից հատուածներ թարգմանաբար հրատարակել ու մեկնաբանել մասնագիտական թերթերում եւ հանդէսներում: Այդ ժամանակներից մինչեւ մեր օրերը Եզնիկի գործը երկու անգամ թարգմանուել է Փրանսերէն, երկու անգամ գերմաներէն, մէկ անգամ ռուսերէն, մէկական անգամ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն: Հայ ու եւրոպացի բանասէրներ, գրականագէտներ, պատմաբաններ, ազգագրագէտներ, կրօնական ու փիլիսոփայական գիտութիւններու տեսաբաններ, լեզուաբաններ եւ շատ ուրիշներ, մասնագէտ կամ ոչ, տնտղել են երկի հեղինակի ինքնութիւնը, կենսագրութիւնը, երկի հեղինակային պատկանելութիւնը, գործի վաւերականութիւնը, յօրինման մօտաւոր ժամանակը, նպատակը, կառուցուածքը, աղբիւրները, լեզուն, ջճը, սուրբգրային մէջբերումները, բնագիրը եւ այլ հարցեր: Բոլորն էլ առատօրէն օգտուել են նրա երկից:

Եզնիկ Կողբացու կեանքին մանրամասնօրէն տեղեկանալու համար բնականաբար դիմել են հայ հին պատմագիրների, ժամանակագիրների եւ ընդհանրապէս հայ հին գրականութեան պատմութեան: Նրա մասին տեղեկութիւններ հաղորդել է նախ Կորիւնը, որ, ինչպէս եզրակացուում է գրածներից, եղել է նրա դասընկերը, հոգեւոր «եղբայրը» կամ կրօնաւոր եղբայրը, նրա գործակիցն իբրեւ թարգմանիչ հինգերորդ դարի առաջին կէտում, եւ ապա մասամբ՝ Մովսէս Պորենացին: Եղիշէն եւ Ղազար Փարպեցին լոկ յիշատակել են նրան: Յետագայում նրա անունը սոսկ իբրեւ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի «երեւելի» կամ «գլխաւոր» աշակերտներից մէկի յիշատակել են միջնադարեան ժամանակագիրներ, «Յայտաւաւրք»-ներում պահպանուած անանուն գրուածքների հեղինակներ:

Նոր շրջանի պատմաբաններից Միքայել Զամչեանն է հաւանաբար առաջինը, որ մատենագրութիւնից քաղելով գոյութիւն ունեցող սակաւաթիւ տեղեկութիւնները՝ վերապատմել է Եզնիկ Կողբացու կենսագրութիւնը, երբեմն իւրովի մեկնաբանելով մատենագրական որոշ տուեալներ, «յիւրմէ» նշանակելով թուականներ, որոնք անշուշտ հիմքեր ունէին նրա մտքում²: Յետագայում ուրիշներ ձգտել են աւելի խորաթափանց լինել, ճշգրտել ու ճոխացնել Եզնիկի կենսագրութիւնը, որով այն վերապատմել են ծննդեան եւ մահուան, ուսումնառութեան, Եղեսիա եւ Բիւզանդիա կատա-

¹ Իբրեւ անձնանուն գործածուած ընտանի կենդանիների անունները՝ «... Կորիւն, Եզնիկ... կարծիք կու տան այդ կենդանեաց պատուէն առնուած՝ քան բարբէն» (Ղ. Ալիշան, Հիմ հաւատք, 1910, 176):
² Տե՛ս Յովհ. Թորոսեան, Եզնիկ եւ իւր երկասիրութիւնն, «Բազմապէս», 1889, 16:

րած թարգմանչական, ոմանք աւելացնում են ուսումնական ուղեւորութեան, այդ քաղաքներում անց կացրած տարիներին, այնտեղից վերադարձի, «Յօթնամասնից» յունարէն ձեռագրի հիման վրայ Ս. Գրքի առաջին կամ «փութանակի» թարգմանութեան վերանայման, իր երկը գրելու եւ, վերջապէս, կեանքի վերջին տարիներին եպիսկոպոսութեան անփաստ, բայց ոմանց կողմից տոմարական հաշիւներից բխեցրած եւ այդպիսով աւանդաբար կրկնուած ենթադրական տարբերութիւնով, որոնց կողքին «մօտ» կամ «մօտաւորապէս» մակբայն էլ է պակասում: Կենսագրութիւնը վերապատմել են որոշելով նրա նախնական կրթութեան դպրոցը, սովորած լեզուները, նշելով ուշիմութիւնը, բարեպաշտութիւնը, ճոխացնելով անձնական ենթադրութիւններով, խորհրդածութիւններով, գովասանական ածականներով, ոմանք վիճելով նրա եկեղեցական լինել չլինելու կամ եպիսկոպոսական աստիճան ստանալու մասին, իր երկից եզրակացնելով նրա կրօնական եւ փիլիսոփայական գաղափարախօսութիւնը, օտար բունակալութեան դէմ գրչով պայքարելու նրա ոգին, հայրենասիրութիւնը, ըստ ժամանակակից սովետահայ մի փիլիսոփայի մինչեւ իսկ նրա հերետիկոսութիւնը եկեղեցու որոշ «դոգմաների» հարցում: Իրօք որ «Երեւակայութիւնը թեւեր առած՝ սաւառներ է»: Ստորեւ ներկայացնում ենք հայ մատենագիրների տեղեկութիւնները Եզնիկ Կողբացու վերաբերեալ, որոնցով երեւում է, թէ որքա՛ն բան է յերկրուել այս անձի մասին: Ընդգծումները մերն են աղբիւրներում:

1. Կորիւն, «Վարք Մաշտոցի», հրատ. եւ թարգմ.՝ Մանուկ Աբեղեան, Երեւան, 1941, էջ 75. «Իրանից յետոյ երկու երանելիներն էլ ուշադրութիւն դարձրին, որ իրենց ազգի դպրութիւնն աւելի զարգացնեն եւ հեշտացնեն: Մեծ Իսահակն սկսեց թարգմանել եւ գրել իր առաջուկայ սովորութեամբ:

«Պատահեց դարձեալ, որ նրանք իրենց աշակերտներից երկու եղբայրների, (առաջինը) Յովսէփին, որ վերեւում յիշատակեցինք, եւ երկրորդը՝ (մէկին) Եզնիկ անուկով, Այրարատեան գաւառից, Կողբ գիւղից, ուղարկեցին Ասորոց կողմերը, Եղեսիա քաղաքը, որպէսզի նրանց սուրբ հայրերի աւանդութիւնները ասորերէն լեզուից հայերէնի դարձնեն ու գրեն:

«Իսկ թարգմանիչները հասան այնտեղ, ուր ուղարկուեցին, եւ նրանց պատուէրը կատարեցին եւ թարգմանութիւններն) ուղարկեցին պատուական հայրերին, (իսկ իրենք) անցան, գնացին յունական կողմերը, ուր եւ ուսանելով եւ հմտանալով՝ կարգուեցին հելլենական լեզուից թարգմանիչներ:

«Ապա մէջտեղում մի ժամանակ անցնելուց յետոյ՝ պատահեց, որ մեր Հայաստան աշխարհից դիմեցին, իջան յունական կողմերը մի քանի եղբայրներ, որոնց առաջինի անունը Ղեւոնդէս էր, եւ երկրորդը եւ Կորիւնս (էի), եւ Կոստանդինական քաղաքում մօտեցան, յարեցին Եզնիկին, իբրեւ ընտանեզոյն սննդակցի, եւ այնտեղ միասին կատարեցին հոգեւոր պիտոյքի խնդիրը: [էջ 77] Յետոյ նրանք աստուածատուր գրքերի հաստատուն օրինակներով եւ շատ շնորհազիր հայրերի յետագայ աւանդութիւններով եւ նիկիական ու Եփեսոսական կանոններով՝ եկան, երեւացին Հայոց աշխարհում եւ հայրերի առաջ դրեցին սուրբ եկեղեցու կտակարանները, որ բերել էին իրենք:

«Իսկ երանելի Սահակն առաջ յունարէն լեզուից հայերէն էր դարձրել եկեղեցական գրքերի ամբողջութիւնը եւ շատ սուրբ հայրապետների իմաստութիւն: Իրանից յետոյ դարձեալ նա Եզնիկի⁵ հետ միասին սկսեց (եւ) առաջուկայ յանկարծազիւտ շտապով թարգմանութիւնները հաստատեց բերուած ստոյգ օրինակներով: Եւ Գրքի շատ էլ մեկնութիւն թարգմանեցին»:

2. Մովսէս Խորենացի, «Հայոց պատմութիւն», թարգմ.՝ Ստ. Մալխասեան, Երեւան, 1940, էջ 236. «Այնուհետեւ Մեսրոպը յետ եկաւ, եւ նա ու մեծն Սահակ նոյն աշակերտներին, Յովսէփին եւ նրա միւս ընկերոջը Կողբ գիւղից, որի անուկն էր Եզնիկ, ուղարկեցին Միջագետք, Եղեսիա քաղաքը, որպէսզի ինչ գրքեր որ այնտեղ գտնուեն առաջին սուրբ հայրերից գրուած, շուտով մեր

⁵ Նորայր Ն. Բիւզանդացի (ԲՅ էջ 154ա)՝ «Թուի ուղղելի Եզնիկաւ, զի ասի անդ երկիցս Եզնիկ, 20, 21: Եզնակ. Աւան., երես 66. Սուփ. հայկ., Բ, 14. Նիսդր. Բարձրացուցեաց Դ. Անյաղթի, 99. Կիր. Գանձակ., 16, 17. Գէորգ Վրպ., Գանձ Սրբոց Քարգմանչաց (Ալիշան, Յուշիկ, Կ. Ա., 327): Եզնիկ. Ոոր., Գ. 4, 544. Վրթ. Քերթ., Ընդդէմ պատկերամարտ., 339, 340: Եզնիկ, Գառնիկ, Մրջիւնիկ, Յիւկ»:

լեզուով թարգմանեն ու բերեն, որպէսզի այնուհետեւ Բիւզանդիոն ուղարկուեն նոյն [էջ 237] գործով: Նրանք մի քանի ստախոս մարդկանցից հրապուրիչ թղթեր ստանալով՝ իբր թէ մեծն Սահակ եւ Մեսրոպ պատրաստում են ուրիշներին Բիւզանդիոն ուղարկել, իրենք, առանց ուսուցիչների հրամանին, այնտեղից ուղղակի չուեցին գնացին Բիւզանդիոն, նախանձախնդիր լինելով բարի ուսմունքի. եւ յունարէն գրագիտութեան լաւ վարժուելով՝ ձեռնարկեցին թարգմանելու եւ գրելու: Նրանց վրայ նախանձելով նրանց աշակերտակից ընկերները, որոնց անուններն էին Ղեւոնդ եւ Կորիւն, ինքնակամ ելան գնացին Բիւզանդիոն նրանց մօտ: Ապա նրանց մօտ են գալիս նաեւ Յովհանն ու Արձանը, որոնց Սահակն ու Մեսրոպը դեռ աւելի վաղ էին ուղարկել, բայց նրանք ուղեւորուելով եւ ծուլաբար տնտնալով՝ Կեսարիայում երկար մնացին: Նրանց բոլորին մեծ ընդունելութիւն ցոյց տուեց բիւզանդացոց Մաքսիմիանոս եպիսկոպոսը:

[էջ 238] «Այնուհետեւ եկան մեր թարգմանիչները, որոնց անուններն առաջուց յիշել ենք, եւ գտան մեծն Սահակին ու Մեսրոպին Տարօնի Աշտիշատում, յանձնեցին թղթերը եւ Եփեսոսի ժողովի կանոնները, սահմանուած վեց կանոն, այլ եւ Ս. Գրքի ստոյգ օրինակները:

«Մեծն Սահակ եւ Մեսրոպ ընդունելով (Ս. Գրքի օրինակը), նորից թարգմանեցին մի անգամ շտապով թարգմանուածը, նրանց հետ միասին, նորից յօրինելով ու նորոգելով...»:

3. Եղիշէ եւ Ղ. Փարպեցի

Եղիշէն, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Երեւան, 1957, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեանի, էջ 27, տ. 22, յիշատակում է, առանց ուրիշ բառերի, «Եզնիկ (Եզնակ) եպիսկոպոս Բագրեւանդայ»: Նոյնպէս եւ Ղազար Փարպեցին, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1904, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանի, էջ 44, տ. 35, գրում է՝ «Եզնիկ՝ Բագրեւանդայ եպիսկոպոս», որպէս 449 թ. թագաւորանիստ Արտաշատ քաղաքում գումարուած վճարական ժողովի մասնակից:

4. Դաւիթ Անյաղթ, Վրթանէս Բերթոյ, Ատոյիկ, Վարդան Արեւելցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելեան, Գրիգոր Տաթեւացի, ինչպէս եւ մանր ժամանակագիրներ⁴ Մաշտոցի եւ Սահակի գործունէութեան կամ հայ դպրութեան սկզբնաւորման մասին խօսելիս նրանց երեւելի կամ գլխաւոր աշակերտների հոյլի մէջ անպայման յիշատակում են Եզնակին կամ Եզնիկին, որն իր ծննդավայրի անունով կոչուել է նաեւ Կողբացի:

Ահա եւ բանասէրների կարծիքներ:

Միմոն Վեբեր

Հաշիւներից բխեցնելով՝ Եզնիկի կենսագրութեան մէջ տարբերութեւր առաջարկող բանասէրներից է գերմանացի հայագէտ Միմոն Վեբերը, յատկապէս «Եզնիկայ Եղծ կամ Ընդդէմ աղանդոց գործոյն յօրինման ժամանակն ու վաւերակութիւնը» յօդուածում (հայերէնի էլ թարգմանուած)⁵: Ն. Արդնցի կարծիքով այդ հաշիւները «համոզիչ հիմքեր ունենալուց հետո եւ»⁶: Նոյնպէս անհիմն են մեր օրերում առաջարկուող տարբերութեւրը (որոնց հեղինակներին կամ կրկնողներին նշել նաեւ որդ է), քանի որ անհերքելի փաստեր չեն յայտնաբերուել առ այսօր:

Եզնիկ Կողբացու եպիսկոպոսական աստիճան ունենալը կամ նրա եւ Արտաշատի 449 թ. (ըստ նմանց 450 թ.) ժողովի մասնակից Բագրեւանդի եպիսկոպոսի նոյնութիւնը վէճի նիւթ է դարձել, քանի որ մատենագրական յստակ տուեալներով չի փաստուում: Միմոն Վեբերն իր յիշուած յօդուած

⁴ Օրինակ՝ Յովհաննէս Աւագերէց մանր ժամանակագիրը (տե՛ս Վ. Ա. Յակոբեան, Մանր ժամանակ., էջ 14) գրել է. «Եզնիկ եւ Յովսէփ աշակերտք Սահակա»: Կամ Յակ. Տաշեան, Յուցակ, էջ 60, սիւն. 2, 2եռ. 10, «Յայտնաւորք», ԺՁ դ., թղ. 47բ1՝ «Յիշատակ վարուց սուրբ հայրապետին Իսահակայ եւ սուրբ վարդապետին Մեսրոպայ», որոնց երեւելի եւ գլխաւոր աշակերտների մէջ յիշուում է Եզնակ Կողբացին: Նոյն 2եռ., թղ. 318ա, Յուցակ, էջ 76, սիւն. 27՝ «Վարք Մեսրոպայ վարդապետին», դարձեալ Եզնակ: Յուցակ, էջ 207, սիւն. 2, 2եռ. 44, «Վրթանիսի Բերթոյի (Ձ դ.) Յաղագս պատկերամարտից», թղ. 7ա, կարդում ենք. «...որպէս երանելի սուրբ Սահակ եւ Մեսրոպ եւ Եզնիկ եւ Արձան եւ Կորիւն եւ ընգբրջ նոցա, որ ի ձեռն նոցա Հայոց դպրութիւն շնորհեցաւ ի Տեառնէ Աստուծոյ» (նոյնը՝ Սիմոն, 1927, էջ 63, տ. 380):

⁵ Նշուող աղբիւրների մատենագրական մանրամասնութիւնները տե՛ս հատորի սկզբում գետեղուած մեր Մատենագիտութեան մէջ:

⁶ «Բագմավեպ», 1925, 196:

ծում այս հարցն էլ քննելով՝ եկել է այն եզրակացություն, թէ «Նզնիկ ... պատմականորեն ապացուցեալ Բագրեւանդայ եպիսկոպոսն է»⁷: Արդոնցը սրան էլ իրաւացիորէն առարկել է, որ «Դրական ապացոյց չունենք նաեւ Նզնիկի եւ Արտաշատի ժողովի մասնակից Բագրեւանդայ եպիսկոպոսի նոյնութեան»⁸: Սակայն որոշ բանասէրներ դա շատ հաւանական են համարում, ինչպէս Մ. Աբեղեանը⁹, Ե. Տէր-Մինասեանը¹⁰, իսկ ուրիշներ ընդունում են անվերապահօրէն, ինչպէս Գ. Խրոպեանը¹¹: Վ. Չալոյեանը գրել է, թէ «Այս բանը անհնարին է պարզել որեւէ հիմքի բացակայութեան պատճառով»¹²: Բայց սա աւելի հեռու է գնացել. այլուր եւ ստորեւ նշուող աշխատութեան մէջ (էջ 85, ծան. 49) կրկնել է մի միտք, որ ժամանակին քննադատել ու մերժել էր Մ. Աբեղեանը, եւ որին հէնց հակաճառում էր Վ. Չալոյեանը. դա այն է, թէ «Նզնիկի հոգեւոր միջավայրին պատկանելը մենք, այո, համարում ենք վիճելի», եւ, առաւել եւս, «Հայոց եկեղեցու հայրերից մինը» լինելը: Մ. Աբեղեանի այն առարկութիւններին, թէ նախ՝ Կորիւնը Յովսէփ Պաղնատուն եւ Նզնիկ Կողբացուն բնութագրել է որպէս «եղբարս երկուս յաշակերտացն» (տե՛ս վերեւում նրա պատմածը), ու եղբայր նշ. «կրօնաւոր», եւ երկրորդ՝ եթէ Նզնիկ Կողբացին Հայոց եկեղեցու հայր կամ տեսաբան չլինէր, ապա նրա գրուածքներից երկուսը տեղ չէին գտնի 7-րդ դարում կազմուած «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցոյ» ժողովածուի մէջ, Վ. Չալոյեանը նշուած ծանօթութեան մէջ պատասխանել է այսպէս. «Այդպէս (այսինքն «եղբայր». Մ. Մ.) համարելը, որ ինքնըստինքեան ոչինչ չի նշանակում, վերաբերում է Նզնիկի կեանքի դպրոցական շրջանին: Ի՞նչ է տեղի ունեցել նրա հետ, երբ նա գնացել է Ասորիք ու Բիւզանդիա, երբ գրել է «Նզնիկ Աղանդոցը». այդ մասին մենք որոշակի չգիտենք... Անգամ հաստատապէս յայտնի էլ չէ, թէ այդ նամակն ու երկը՝ «Նզնիկ Աղանդոցը» միեւնոյն հեղինակին՝ Նզնիկի՞ն է պատկանում, թէ ոչ»¹³:

Նախ՝ նկատենք, որ լեզուի բառերը, այդ թւում եւ եղբայրը «ինքնըստինքեան» ոչինչ չեն նշանակում, բայց գրաբարի բառարաններում արձանագրուած է դրա «կրօնաւոր, հոգեւոր եղբայր» նշանակութիւնը, որ ունի Կորիւնի գրքում:

Երկրորդ՝ Նզնիկն իր «եղբայր» Յովսէփի հետ Նշեախ էր ուղարկուել, «գի յասորական բարբառոյն գնոցին հարցն սրբոց գաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուացեն», պարտականութիւն, որ նրա «կեանքի դպրոցական շրջանին» վերաբերող, ասորերէնից հայերէն թարգմանական աշխատանքի աշակերտական վարժութիւնն էր, այլ միանգամայն պատասխանատու գործ: Ի՞նչ խօսք, որ այդ եւ նման աշխատանքների ընթացքում նա նորանոր բաներ էլ սովորած կը լինի:

Երրորդ՝ եթէ չգիտենք, թէ «Ի՞նչ է տեղի ունեցել նրա հետ, երբ գրել է» [«Նզնիկ Աղանդոց»]-ը, յամենայն դէպս Կորիւնը տեղեկացրել է, թէ ի՞նչ է կատարուել, երբ նա գնացել է Ասորիք եւ Բիւզանդիա. տե՛ս վերեւում Կորիւնի պատմածը: Արդ՝ Նզնիկը մինչ այդ կրօնաւոր եղած եւ յետագայում հրաժարած լինէր (եթէ այս է ուզում հասկացնել Վ. Չալոյեանը), ապա դժուար թէ Հայոց կաթողիկոսը հէնց նրան ընտրած լինէր որպէս օգնական, նրա իսկ բերած յունարէն Ս. Գրքից վերանայելու կամ կրկին թարգմանելու հայերէն բնագիրը: Հակառակ նրա վիճելի եկեղեցական վիճակին, Վ. Չալոյեանը Գ. Խրոպեանի հետ ՀԱՀ, հատ. Գ, էջ 486-ում Նզնիկին բնութագրել է իբրեւ «հասարակական-եկեղեցական գործիչ»:

Չորրորդ՝ «Կնիք հաւատոյ» ժողովածուի մէջ տեղ գտած եւ Նզնիկի անունով հասած հատուածների մասին գրուած յօդուածները թերեւս կարող էին լուսաբանել Վ. Չալոյեանին. դրանք լուրջ եւ հեղինակաւոր բանասէրների գրչից են:

⁷ ՀԱ, 1898, 206բ:
⁸ «Բագրեւանդայ», 1925, 197:
⁹ Մ. Աբեղեան, Երկեր, Գ, 46. «Այդ շատ հաւանական է»,
¹⁰ Ե. Տէր-Մինասեան, Պատմա-բանաս. հետազոտ., 300. «Նա է անշուշտ Նզնիկի եւ Լազար Փարպեցու յիշատակած 449 թուի Արտաշատի ժողովական Նզնիկ եպիսկոպոսը»:
¹¹ «Նզնիկ Կողբացի» («Հայ մշակութիւնը նշանաւոր գործիչները» ժողովածու, էջ 45). «Որպէս այդ գաւառի նակներէն». ուրիշներ կողմից էլ ընդունուած անհիմն յայտարարութիւն:
¹² Վ. Չալոյեան, Հայոց փիլիսոփայութեան պատմութիւն, 64:
¹³ Ն. տ., 85, ծան. 49:

Նզնիկ Կողբացու պատկանելութիւնը եկեղեցական դասին կամ նրա եպիսկոպոսութիւնը հական եւ անմիջական նշանակութիւն չունեն, ըստ մեզ, նրա աննման երկի արժանիքների համար: Արդ՝ տեսնենք, թէ սրա մասին մատենագրական ի՞նչ տեղեկութիւններ կան, եւ ի՞նչ է այն ուսումնասիրած բանասէրների կարծիքը դրա հեղինակային պատկանելութեան, վաւերականութեան, յօրինման ժամանակի եւ այլ յարակից հարցերի վերաբերեալ:

2. Նզնիկի երկի վաւերականութիւնը, շարադրման ժամանակը, մեկնաբանութիւններ

ա. Նրկի վաւերականութիւնը

Միակ մատենագիրը, որ փոքր ինչ կուսել է տալիս, թէ Նզնիկ Կողբացին կարող էր երկ կամ երկեր գրած լինել, հաւանաբար Կիրակոս Գանձակեցիին է (ԺԴ դ.): Միւս որոշ մատենագիրների նման, Նզնիկին Մեսրոպի եւ Սահակի գլխաւոր աշակերտների մէջ յիշատակելուց յետոյ նա աւելացրել է հետեւեալը. «Ն. ի նոցանէ ոմանք ի վերայ թարգմանութեան եւ գիրս յինքեանց շարադրեցին, որպէս [Մովսէս Խորենացի, Կորիւն, Նզնիկ] եւ Նզնիկ խօսս յովսէփ եթող յօգուտ լսողաց»¹⁴: Այս խիստ անորոշ խօսքով նա կարող է ակնարկած լինել [«Նզնիկ աղանդոց»]-ին (ոչ այս վերնագրով ի հարկէ) կամ նրան վերագրուած կեղծ գրուածքների՝ Նեղոսի խրատների տարբերակներ, կանոններ, «Բան»-եր, մեկնութիւններ, հարցումներ եւ այլն, որոնք Նզնիկի անունով առատ են ձեռագրերում: Այսպիսով բոլորիս հետաքրքրող երկի հեղինակային պատկանելութեան վկայութիւնները մնում են՝ երկի առաջին տպագրութեան անուանաթերթի վկայութիւնը՝ «Արարեալ ի Սրբոյ Նզնիկայ Կողբացոյ» Հայոց Վարդապետէ: եւ յաշակերտէ մեծի Թարգմանչին մերոյ՝ Սրբոյ Մեսրոպայ», Գէորգ Պալատեցու ձեռքով այս հրատարակութեան մէկ օրինակի սրբագրութեան էջ 272-ի «գգիրքս Նզնիկայ» վկայութիւնը, 1902 թ. էջմիածնի ձեռագրատանը յայտնաբերուած եւ այսօր միակը հանդիսացող ձեռագրի մանր տառերով գրուած եւ ապա սրբագրութիւնից յետոյ «Նրանելոյն եզնակ վարդապետին կողբացոյ» դարձած վերտառութիւնը, որոնց բոլորս էլ հաւատ ենք ընծայում: Անձնական նոր յայտնաբերութիւններ չունենք եւ համամիտ ենք մեր ամենագիտակ բանասէրներին:

Ըստ Գ. Զարբախանյանի՝ Նզնիկի «Նրկասիրութեան . . . հարազատութիւնը տարակոյս չվերցրենք»¹⁵:

Ա. Մ. Գարագաշեանը գրել է. «Նզնիկայ գիրքը կ'ընդունինք իբրեւ հարազատ գործ նորա, նախ՝ վասն գի հեղինակը կը յիշուի իբրեւ աշակերտ թարգմանչաց իւրմէ՛ ժամանակակցէն Կորենէ, նաեւ Փարպեցոյն Պատմութենէն, որ է ստուգիւ նոյն դարուն գործ. իսկ լեզուն Նզնիկայ ունի թարգմանչաց ժամանակին կատարեալ նկարագիրը»¹⁶:

Ն. Արդոնցը գրել է. «Հին մատենագիրների շարքում Նզնիկ Կողբացին այն բացառիկ դէմքերից է, որ պահել է գոնէ ցայժմ իր աւանդական հոշակը ամուր եւ ամբասիր: Այնինչ ներկայումս անվճար տահութիւնն ու կասկածները մթազնել են մեր գրի սկզբնական շրջանի հորիզոնները եւ թանձր ստուեր ձգել շատ անուանների վրայ, Նզնիկը մնացել է անխոցելի եւ ամեն տարակուսանքից վեր: Ձէ թէ միայն ոճի եւ բովանդակութեան կողմից, այլ եւ հաւաստիութեան տեսակէտից Կողբացու փոքրիկ երկը հաշուում է հայ գրականութեան պարծանք»¹⁷: Այս հաստատումով սկսելով հանդերձ էջատակում նշուող իր յօդուածը՝ Արդոնցը կարծում է, թէ «գրական բարդ խնդիր» է Նզնիկի հարցը¹⁸, եւ վաղաժամ է համարում Քրիստիանիցի հայագէտ Լուի Մարիէսի այն յայտարարութիւնը, թէ

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմ. Հայոց, 28, 29: Վ. Չալոյեանը «խօսս յովսէփ եթող յօգուտ լսողաց» բառերը թարգմանել է «Ընթերցողին համար պիտանի երկ» (Հայ. փիլիս. պատմ., 64): Ըստ Գ. Զարբախանյանի՝ Կ. Գանձակեցին նկատի է ունեցել ձառնարկների մէջ Նզնիկի անունով պահպանուած, սակայն Նզնիկի «գիտութեանը եւ հանճարոյն ոչ այնչափ արժանաւոր» գրուածքներ (Հայկ. հիմ դպ. պատմ., 307):
¹⁵ Գ. Զարբախանյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, 1889, 208:
¹⁶ Ա. Մ. Գարագաշեան, Քննական պատմութիւն Հայոց, մասն Դ, 73, Թիֆլիս, 1895:
¹⁷ Ն. Արդոնց, Քննական, 196:
¹⁸ Ն. տ., 198: Անհիմն է Ա. Առաքելեանի այն յայտարարութիւնը, թէ 1940 թ. Վ. Չալոյեանը «Մերժում է Ն. Արդոնցի հակագիտական մեկնակէտը Նզնիկի [երկի] շարադրման ժամանակի մասին» (Հայ ժող. մտաւ. մշ. պատմ., Հ. Ա, 618):

«Միմոն Վեբերի յօգուածաշարի շնորհիւ չկայ Եզնիկի հարց, ինչպէս որոշ ժամանակ եղել է եւ դեռ կայ Ազաթանգեղոսի հարց, եւ գոյութիւն ունեն ուրիշներ»¹⁹:

Մեր օրերում ոչ ոք չի առարկում Եզնիկ Կողբացու հեղինակութիւնը իրեն վերագրուող երկի նկատմամբ:

բ. Եզնիկի երկի շարագրման ժամանակը

Նորայր Ն. Բիւզանդացին Բ¹²-ի էջ 5-ում ասել է. «Եզնիկ գրեալ է գայս շառքս յետ թարգմանելոյ զՈսկ. Մտք.» իսկ «Կորիւն վարդապետ», էջ 212, ծան. 2-ում՝ «Կարծեմ, թէ Եզնիկ յետ մահուան վարդապետացն գրած է զիւր շառքսն Ընդդէմ Աղանդոց»:

Վ. Սումուհնեանը (Հացուհի) շարագրման տարիներ առաջարկել է 451-452 թթ.²⁰:

Ադունցը թերեւս համամիտ է եղել Ս. Վեբերի «ապացուցմանը», թէ «Նոյն աղանդոց» կոչուած երկի հեղինակն իրօք Եզնիկ Կողբացին է, բայց հաւատ չի ընծայել նրա այն հաշուումներին, որոնցով այն գրուած է համարել 441-449 տարիների միջեւ, թէ «Ապահովութեամբ կրնանք յօրինման ժամանակը 441-449 տարիներուն մէջ դնել»²¹: Արեւելցի կասկածել է Եզնիկի պատմագրական երկի յօրինման ընդունուած ժամանակի վրայ (5-րդ դ.), իսկ Եզնիկի գործի վերաբերեալ ասել է հետեւեալը. «Չենք ուզում այժմէն իսկ պնդել, որ նոյն դրութեան մէջ է եւ հռչակաւոր «Նոյն աղանդոց»-ը: Ամենայն դէպքում խնդիրն այնքան էլ պարզ չէ, ինչպէս թւում է շատերին»²²:

Բանասէր Ե. Տէր-Մինասեանն ընդունել է Ս. Վեբերի առաջարկած ժամանակը (առանց անունը յիշատակելու). «Գրութեան ժամանակը հաստատապէս յայտնի չէ, բայց որոշ նշաններից պէտք է եզրակացնել, որ այն գրուած պէտք է լինի 441-ի եւ 449-ի միջեւ»²³:

Երկի գրութեան ժամանակաշրջանի մասին տարածուած կարծիքը Վարդանանց պատերազմին անմիջապէս նախորդող շրջանն է, քանի որ, իբր, երկը «նրա գաղափարական նախապատրաստման միջոցներից» մէկն է եղել²⁴:

Մ. Արեղեանը ճիշտ է վարուել, ըստ մեզ, գրութեան ոչ մի թուական չառաջարկելով: Եթէ այդ գիրքը, ինչպէս կարծում ենք, Եզնիկ Կողբացու գործն է, ապա դասական շրջանի է եւ դասական գրաբարով շարագրուած, այն է 450 կամ, առաւելապէս, 460 թուականից առաջ:

Եզնիկ Կողբացու այս երկից ձեռագրերում արտագրուած հատուածներ չեն յայտնաբերուել, եւ նրանից օգտուող ներքից մեզ յայտնի է միայն «Հարցումն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» միջնադարեան գրուածքի հեղինակը²⁵:

գ. Մեկնաբանութիւններ

Մեր բանասիրական նպատակներից միանգամայն դուրս է Եզնիկի երկի կառուցուածքի կամ բովանդակութեան քննութիւնը: Միւս կողմից մի առանձին գործ անհրաժեշտ կը լինէր նրա «հիմնաթիւնները հերքելու համար. դրանք, դժբախտաբար, տեղ են գտել միջնաբանութեան համալսարանական աշխատութիւններում: Ահա դրանցից պատահական մի քանի նմուշներ, ուր միայն ընդգծումներն են մերը որպէս մերժելի մտքեր:

¹⁹ L. Mariès, *De Deo*, 6.
²⁰ «Բագմավէպ», 1892, 278:
²¹ ՀԱ, 1898, 113, 206:
²² Ն. տ.:
²³ Ե. Տէր-Մինասեան, Պատմ.-բանաս. հետազոտ., 300:
²⁴ Ա. Ա. Աբրահամեան, Եզնիկ Կողբացի, աշխ. թարգմ., էջ 6 եւ յաջ.: Իսկ Ղ. Ալիշանը գրել է. «Եթէ դեռ տեղ մի յետոյ իրենց ընկերն եւ քաջ գրիչ Եզնիկ խայտառակից իր գեղեցիկ գրուածով Ընդդէմ Բեռնարդի» («Հին հեղինակութիւն էին ապահովել գրքի հեղինակի համար: Վիճաբանական նամակներում եւ պատասխան թղթերում յաճախ էին օգտուում Եզնիկի գրքից, իբրեւ փաստարկներով հարուստ մի աղբիւրից» («Ակնարկներ», 119-120):

Ա. Ա. Աբրահամեանը Եզնիկի երկի իր արեւելահայերէն թարգմանութեան առաջաբանում (Երեւան, 1970, 16) գրել է. «Եզնիկը ճակատագրի հաւատքը դիտում է որպէս խիստ վտանգաւոր երեւոյթ եւ անհրաժեշտ է համարում պայքարել դրա դէմ, թէկուզեւ ընդունուած կրօնից որոշ շեղում կատարելու գնով»:

Վ. Զալոյեանը գրել է. «Եզնիկը մի շարք հարցերում տարածայնութեան մէջ էր պաշտօնական Բիստոնէութեան դոգմաների հետ եւ Բիստոնէութիւնը պաշտպանում էր իր տիեզերական եկեղեցու տեսակետից հեքիասիկոսական ըմբռնմամբ»²⁶:

Հ. Գ. Գաբրիէլեանն ասել է. «Որպէս մետաֆիզիկ մտածող, նա միասնութեան մէջ հակասութիւն չի տեսնում, բայց միաժամանակ չի էլ ժխտում, որ բարիքի կողքին կայ նաեւ չարիքը: Անպայման կայ ինչ-որ ուժ, որ ամէն տեսակի անհարթութեան արարիչ է»²⁷:

Ս. Տ. Մելիք-Բախչեանը կարծում է, թէ «Եզնիկ Կողբացին որպէս փիլիսոփայ իդէալիստ է: Նա հոգու եւ նիւթականի փոխյարաբերութիւնը լուծում է յօգուտ առաջինի: Սակայն հակասելով ինքն իրեն, Կողբացին հանգում է այն եզրակացութեան, որ աստուածն էլ սկզբնական միակ սուբստանցիան չէ, այլ նրա հետ միասին գոյութիւն ունի նաեւ նիւթը՝ այսինքն արարչագործութեան առարկան»²⁸:

Ըստ Սեն Արեւշատեանի, Եզնիկն իբր «Կոչ է անում ուսումնասիրել բնութիւնը»²⁹. էջը նշուած չէ, եւ Եզնիկի երկում այսպիսի կոչ չգտանք:

Վ. Առաքելեանը գրել է. «Եզնիկը պէտք է հերքէր այն ուսմունքները, որոնց տեսական հիմնաւորումներով երկու հզօր հարեւանները հայ ժողովրդի պետական ինքնուրոյնութիւնը խորտակելուց յետոյ սպառնում էին նաեւ նրա ազգային գոյութեանը»³⁰. Եթէ երկու հզօր հարեւանները Պարսկաստանն ու Բիւզանդիան էին, ապա երկրորդի կրօնական ուսմունքը հէնց Եզնիկինն էր, գոնէ այն ժամանակ:

Եզնիկի երկը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է գրաբարի քաջ իմացութիւն, բայց նախապայման է նաեւ ունենալ անաչառ, անբռնազօրիկ, ազատ եւ անկախ գաղափարախօսութիւն կամ մտածելակերպ:

Գ. ԵՐԿԻ ՏՊԱԳԻՐՆԵՐԸ

Եզնիկի երկից այսօր մնացել է միայն մէկ ձեռագիր, որ գրչագրուել է 1280 թ. եւ մեծագոյն խնամքով պահուում է Երեւանի աշխարհահռչակ Մատենադարանում, թ. 1097: Սակայն նախ ներկայացնենք տպագրիչները, քանի որ դրանց շնորհիւ է, որ Եզնիկը ճանաչուեց որպէս մատենագիր. այժմեան ձեռագիրը էջմիածնի ձեռագրատանը յայտնաբերուեց 1902 թ.:

Երկի 1-ին տպագրութիւնը տեղի է ունեցել Զմիւռնիայում 1763-ին, իսկ վերջինը՝ քննականը, Փարիզում 1959 թ., ընդամենը 14 տպագրութիւն: Սակայն առաջին, երկրորդ եւ վերջին տպագրութիւններից բացի՝ միւսները երկրորդի արտատպումներն են առաւել կամ նուազ տպագրական վրիպակներով կամ փոփոխութիւններով, որոնք պատճառաբանուած չեն: Բացի վերջին երկու հրատարակութիւնից, միւսները փոքրածաւալ գրքակնի գրքոյկներ են, որոնք այդպիսով անբաժան են եղել երկի ջերմ գնահատուներից: Ահա տպագրութիւնների ամբողջական ցանկը, որոնց գրչաւորներին կ'անդրադառնանք ստորեւ:

1. Երկի տպագրիչների ցանկ

Բացի վերջինից, միւս տպագրիչներն ունեն ընդարձակ եւ համառօտ տիտղոսաթերթեր: Բացառութեամբ վերջին երկուսի, միւսները երկից յետոյ ունեն Նեղոսի «Խրատ»-ը: Առաջին տպագրու-

²⁶ Վ. Գ. Զալոյեան, Հայոց փիլիսոփայութեան պատմութիւն, Երեւան, 1975, 85, ծան. 49:
²⁷ Հ. Գ. Գաբրիէլեան, Հայ փիլիսոփայութեան պատմութիւն, Երեւան, 1976, 36:
²⁸ Ս. Տ. Մելիք-Բախչեան, Հայոց պատմութեան աղբիւրագիտութիւն, Երեւան, 1979, 127:
²⁹ Սեն Արեւշատեան, Հայոց փիլիսոփայութեան սկզբնաւորումը եւ Եզնիկ Կողբացին, «Գարուն» ամսագիր, Երեւան, 1983, 5, էջ 55-60, մէջբերումը էջ 60: Յօդուածագիրն այսպիսի միտք չի արտայայտել «Հայ ժողովրդի պատմութիւն» բազմահատորի հատ. Բ, էջ 506-510-ում Եզնիկի երկը ճիշտ վերուձելիս:
³⁰ Վ. Առաքելեան, Ակնարկներ, 119:

«միջնորդութեամբ է» հանդիպել կամ ծանօթացել Եզնիկի գրքի ձեռագրին. «Իմ տակաւին նոր առդիպեալ սոյն մեղրածորան գրքոյս միջնորդութեամբ զմիւռնոյ արքեպիսկոպոսի» եւ այլն («Առաջաբանութիւն», էջ Կ-Գ): Ուստի Աբրահամ արքեպիսկոպոսն է ներկայացրել պատրիարքին ձեռագիրը, երբ ինքն այն յայտնաբերել է (չգիտենք՝ որտեղ), կարդացել, հիացել եւ տպագրուած ու տարածուած տեսնելու փափագն է ունեցել: Ծպագրի «Յիշատակարան»-ում այս մասին ասուած է հետեւեալը. «Որ զօրինակ գրքոյս ի ձեռն բերեալ ունելով, ըստ գրասէր բարուցն իւրոց ցանկացաւ տպագրութեամբ ի լոյս ածել զսա» (էջ 288): Աւելին. նա տպագրութեան զոյգ մեկենասներն է:

դ) Առաջին տպագրութեան մեկենասները՝ Աբրահամ արքեպիսկոպոս եւ Յօհան Սիւնեցի

Աբրահամ արքեպիսկոպոսը ոչ միայն երկու ձեռագիրը ձեռք բերողն է, այլեւ տպագրութեան ծախսերը հոգացող ներքին մէջը: Արդարեւ, տպագրութիւնն ունեցել է երկու մեկենաս, թէեւ ընդարձակ անուանաթերթով նշուած է միայն «Արդեամբ նահանգիս դիտի» եւ այլն, նոյնը նաեւ «Յիշատակարան»-ում՝ «Արդեամբ զմիւռնոյ արհի Եպիսկոպոսի եւ Առաջնորդի Տեառն Աբրահամու Աստուածիմաստ Վարդապետի» (էջ 288): Ուստի նա առաջին տպագրութեան հրատարակողը կամ հրատարակիչը է՝ այս բառիս այսօրուայ իմաստով, այլ ձեռագիրը յայտնաբերողը եւ մեկենասներից առաջինը:

Թէեւ տիրող սաթերթով նշուած է, սակայն երկու մեկենասներն էլ միւսը եղել է Սիւնիքի Աղուանակ գիւղից տիրացու Յօհանը, ինչպէս վկայուած է «Յիշատակարան»-ում, էջ 289. «Յորժամ շնոր ըստ բարեսէր ըզձին իւրոյ խնդրեաց թախանձանօք ի վերոյգեալ դիտէն Ջմիւռնոյ. զի զկէս ծախն զի լինիցի այնպէս»:

ե) Երկրորդ հրատարակիչը եւ խմբագիրը՝ Կ. Պոլսի պատրիարք Յակոբ Նալեան

Կ. Պոլսի նախկին պատրիարք Յակոբ Նալեանն է Եզնիկի երկու առաջին հրատարակութեան հրատարակիչը եւ ձեռագրի բնագիրը «խմբագրողը, սրբագրողը», տպագրութեան պատրաստողը: Նա «հետամուտ էր գիրքեր հաւաքել, կարդալ, ուսումնասիրել, գրել ու հրատարակել»⁴²: Նրա երկարամիտութիւններն մէջ Մ. Օրմանեանը յիշում է նաեւ «Յառաջաբան Եզնիկի 1762»⁴³, որ բնագրում «Առաջաբանութիւն» է, բայց իրօք գրուած է 1762-ին, ինչպէս տեսանք վերեւում:

Իր «Առաջաբանութեան» մէջ Յ. Նալեանը պատմում է, թէ «Եզնիկ սուրբ վարդապետ Աթենականի» այս գիրքը, «իւրերիկ երեւի գոյով մեծ ըստ իմացուածոցն» (էջ Գ), գարմացման չորս պատճառներ է ընձեռել նրան: Առաջինն այն է, որ Հայերն անցեալում բարձրացել են Պարսիկների, Եզնիկի եւ նրա գրքի արժանիքներն են ներշնչել նրան: Ուստի ընդառաջելով Աբրահամ առաջնորդեալ. եւ զերկար ճառակերպ գրեալսն, ըստ զանազանիցն պարբերութեանց իմացուածոց ի գլուխս. 76. բաժանեցի⁴⁵: զի ընթերցողացն բարձրի ձանձրութիւն. եւ հրաման ետու տպագրեցման» (էջ Գ): Նրա խմբագրական կամ սրբագրական աշխատանքի մասին, որին դեռ կ'անդրադառնանք, գրուած է նաեւ տպագրի «Յիշատակարան»-ում. «Առ ժամայն կաթողին սիրով յարեալ՝ ոչ սակաւ կրեաց աշխատանս ի վերայ սորին թէ ի յապաւելն ի սղալանաց եւ թէ ի զանազան պրակս բաժանելն զճառակերպ ասացուածսն սրբոյ հեղինակին. որ եւ միանգամայն հրամայեալ զի տպագրիցի» (էջ 288-289): Այս վկայութիւններից յետոյ ակնյայտ է դառնում Ն. Աղոնցի հետեւեալ տողերում Աբրահամ անուան վրիպակ լինելը. «Առաջին հրատարակիչը Աբրահամ վարդապետը յայտնում է իր

⁴² Ազգապատում, Բ, սիւն. 2979. տե՛ս նաեւ պարբ. 2080-2084. Յակոբ Նալեանը մահացել է 1764 թ. յուլիսի 20-ին:
⁴³ Ն. տ., պարբ. 2082:
⁴⁴ Ն. տ., պարբ. 2082:
⁴⁵ Աւելացնելու էր «եւ վերնագրիցի»:

յառաջաբանի մէջ...» («Բագմավիւպ», 1925, էջ 198, 1-ին սիւն.): Ե. Փէչիկեանը ժամանակին նկատել է այս վրիպումը՝ «Յակոբ փիս. Աբրահամի» («Բագմավիւպ», 1928, էջ 290, ծան. 4), իսկ ինքը պատրիարքին համարել է «տպագրիչ», որ պէտք է հասկանալ Փրանսերէն éditteur կամ «հրատարակիչ», տուեալ դէպքում եւ «խմբագիր», ինչպէս կը տեսնենք, սակայն բնագիրը խաթարող:

զ) Ծպագրի «Յիշատակարան»-ի հեղինակի հարցը

«Յիշատակարան»-ն անստորագիր է: Ի տարբերութիւն Մ. Օրմանեանի, Ե. Փէչիկեանն այն համարել է «Նալեանի գրչէն ելած իբրեւ հարագատ գրութիւն»⁴⁶: Սակայն բովանդակութիւնը մեզ ենթադրել է տալիս, որ այն գրուած է երկու տպագրիչ կամ տպարանատէր մահտեսի Մարկոսի կողմից՝ եթէ ոչ նրա ձեռքով, գոնէ նրա անուանից, իբրեւ տպագրութեան պատասխանատուի: Մեր կարծիքը թերեւս ապացուցեն հետեւեալ մէջբերումները, որոնք միաժամանակ ամփոփում են այդ կարեւոր յիշատակարանը: Դրանում խօսողը, մեր կարծիքով՝ տպագրիչ Մարկոսը, փառք, պատիւ, գոհութիւն եւ երկրպագութիւն է յայտնում ամենասուրբ Երրորդութեանը, որ «ես կարողութիւն մեզ տկարացս ի կատար հասուցանել զտեճալի եւ բազմաց փափագելի նորագիւտ գիրքս» եւ այլն (էջ 287): Ապա մի առ մի յիշատակում է ամբողջ գործին սատարած անձերին եւ նրանց համար «ողորմի» հայցում. «օրինակը» կամ ձեռագիրը ձեռք բերող եւ մեկենաս Աբրահամ վարդապետին, միւս մեկենաս սիւնեցի տիրացու Յօհանին, յիշել «զճէր Մեսրոպ Առաքինաջան եւ գիտնական Վարդապետն զանձակեցին զհանգուցեալն առ Գրիստոս, որ զօրինակ սորին վերստին աշխատութեամբ գրեաց եւ ետ մեզ ի տպել [. . .], զմիւռնացի մահտեսի Սիմէօն [. . .] որ յոյժ աշխատեցաւ ի ժողովելն վկայութեանց⁴⁷ եւ զցանկ գրքոյս⁴⁸, եւ ի յակնարկելն ի տպեցեալ թուղթսն, ի վեր քան զկարն [. . .], զնօտար Մնացականն մարգարեան. զի եւ նա ըստ կարի իւրում աշխատեցաւ» (էջ 290): «Հուսկ յետոյ, - գրել է թերեւս տպարանատէրը, - յիշման արժանի վարկչիք զտպագրող գրքոյս այսորիկ զմահտեսի Մարկոս անարժան ծառայ⁴⁹ ձեր [. . .] հանդերձ աշխատաւորովք իմովք. եւ զարօղ եւ զցրուօղ կապարեացս» եւ այլն (էջ 291):

Ինչպէս նկատելի է, «Յիշատակարան»-ը, ո՛ւմ կողմից էլ գրուած լինի, շատ բան է յայտնում Եզնիկի երկու անդրանիկ հրատարակութեան վերաբերեալ. սակայն հարցեր կան, որոնց պատասխանները չենք գտնում ո՛չ «Առաջաբանութեան» եւ ո՛չ «Յիշատակարան»-ի մէջ:

է) Զմիւռնիայի ձեռագիրը եւ Գ. Տէր-Յովհաննիսեանի սրբագրած զմիւռնեան տպագիրը՝ Գ

Դա ի՞նչ ձեռագիր էր: Հարցի պատասխանը սպասելի էր բնագիրը խմբագրող եւ տպագրութեան պատրաստող Յ. Նալեան պատրիարքից, նուազ չափով կամ ամենեւին ոչ՝ տպարանատէր մահտեսի Մարկոսից, որ սրբագրանի գիտութիւնը չունէր: Սա, ըստ Մ. Օրմանեանի, «հաստատեց Գուճբաբուի Մայր-Դպրատունը, որուն նախաշաւիղ եղաւ նախ՝ սա ինքն մեծ քաբուճապետն եւ աստուածաբան [. . .] որ եւ անձամբ նոյնին մէջ կը դասախօսէր»⁵⁰: Իսկ ձեռագիրը ձեռք բերողին խօսք չի հասել տպագրի որեւէ էջում, ինչ որ շատ ավտոսալի է. նա, ինչպէս երեւում է, իսկապէս եղել է «հեղահոգի», ըստ Նալեան պատրիարքի ածականի:

Ո՛րն էլ եղած լինի Աբրահամ արքեպիսկոպոսի եզնիկեան ձեռագիրը, գիտենք, որ այն չի իջել տպարան, քանի որ, ինչպէս տեսանք վերեւում, Մեսրոպ վարդապետ զանձակեցին «վերստին աշխատութեամբ» կրկին ընդօրինակել է «օրինակ սորին» եւ յանձնել տպարանատէր մահտեսի Մարկոսին: Աւելի հաւանական է ենթադրել, որ այս վարդապետը մաքրագրել է Նալեան պատրիարքի պատրաստած կամ սեւագրած բնագիրը: Սակայն ոչ ոք չի յայտնել ձեռագրի գրչի անունը եւ գրութեան վայրը կամ թուականը:

⁴⁶ «Բագմավիւպ», 1930, էջ 500:
⁴⁷ Երկու բնագրում իսկ նշուած են, արդարեւ, Եզնիկի սուրբագրելի որոշ վկայութիւնների աղբիւրները:
⁴⁸ «Յանկ գլխաւոր բանից», էջ 278-287:
⁴⁹ Նկատենք անձնական յօդ -ւ-ն, որ խօսողին է ներկայացնում, եթէ երբեք սա էլ Յ. Նալեանի կամ մէկ ուրիշ բանցրած հետադարձական ձեւերից է:
⁵⁰ Ազգապատում, Բ, սիւն. 3037:

Նգնիկի առաջին տպագրութիւնից մի քսան տարի յետոյ տիրացու Գէորգ Տէր-Յովհաննիսեանը կամ Պալատեցին (1736-դեկ. 1812) ոչ միայն տեսել է այդ ձեռագիրը (Հաւանաբար Պոլսում), այլեւ, բանիմաց ուսումնական, այդ հրատարակութեան տպագիր մի օրինակը իր գրչով, սեւ թանաքով սրբագրել է տողերի եւ լուսանցքների վրայ, ապա 1784-ին ուղարկել Ս. Ղազարի Մխիթարեան վանքը, ուր այն հասել է նոյն տարուայ հոկտեմբերին եւ այժմ այնտեղ խնամքով պահուում է որպէս 783 թ. ա. համարի միակտր: 1784 թ. հոկտեմբերի 28-ին նա գրել է Ս. Ղազար հ. Միքայէլին. «Զեկուցէք եւս ինձ եթէ ե՞կն առ ձեզ սրբագիր օրինակն Նգնիկայ Կողբացուց, զոր առաքեցի առ ձեզ, որ յօրինակէ անտի ուստի տպեալն էր՝ մտադիր գգուշութեամբ սրբագրեալ, գրչեայ օրինակին յար եւ նման»⁵¹: Այս սրբագրուած տպագիր օրինակում Նգնիկի երկի բնագրի վերջում, էջ 272-ի ստորին մասում, վիմատիպ ծաղկանկարի տակ Գ. Տէր-Յովհաննիսեանն իր ձեռքով գրուած թողել է իրար յաջորդող հետեւեալ տողերը, առանց այլ տեղեկութեան. «Շնորհոք և ողորմութիւն այ կատարեցի զգիրքս եզնըկայ եւ ապիկար թովմա վրդապա ի վայելումն ամենագով վրդային ներսէսի. ի թուիս հայոց չիթ»: Սա, ի հարկէ, ձեռագրի գրչի⁽⁶⁾ յիշատակարանն է կամ ձեռագրի յիշատակարաններից մէկը, եթէ հաւատանք Գ. Տէր-Յովհաննիսեանին, կամ երկու յիշատակարանի խառն ամփոփում է⁵²: Սա թողել է նաեւ նոյնքան, եթէ ոչ առաւել կարեւոր իր յիշատակարանը. «Յոր ապա և մեք հայեցել ուղղագրեցաք գտալիս գայս. և ձեռագիր օրինակն այն էր, յորմէ գտալեալն հանեալ էին ի թուականութեան հայոց ումժա. յիզմիր քաղաքիս»: Նթէ նա սրբագրութիւնը իզմիր քաղաքում կատարած լինէր, հաւանաբար գրած կը լինէր «յիզմիր քաղաքիս», -ս յօդով: Հրատարակութեան (Հայաստաւ) ումժա տարեթիւր մեր թուականութեան 1762-ն է, այսինքն այն, ինչ գրոշմուած է Զմիւռնիայի տպագրութեան ընդարձակ անուանաթերթում: Ըստ Գ. Տէր-Յովհաննիսեանի յիշատակարանի Ս. Ղազարի վանքի այն ժամանակուայ մատենադարանապետ Հ. Մկրտիչ Աւգերեանը հետեւեալ տողերով է արձանագրել ստացուած սրբագրեալ տպագիրը. «Նգնիկ Կողբացի, որ Նգնակ ասի յոմանց, աշակերտ Սրբոց Թարգմանչացն Սահակայ եւ Մեսրոպայ, ի Ե. դարու. Գիրք նորա ընդդէմ հին աղանդաւորաց»⁵³: Ուղղագրեալ գրչաւ ի վերայ տպագրեալ օրինակի ըստ ձեռագրի միոյ գրելոյ ի թուին հայոց չիթ. ի Թովմայ վրձպէ՛ ի վայելումն ներսեսի վրձպի, որ այն իսկ է գաղափարն տպագրութեան իզմիրու (զոր ոչ պահեցին անփոփոխ ի տպագրելն). զոր եւ ի ձեռս բերեալ տիրացու Գէորգեայ Յովհաննիսեան՝ սրբագրեաց ըստ նմին գտալեալ օրինակ մի եւ յլեաց առ մեզ. 1784 ումժ. ի հոկտ. տե՛ս գլխատանագրութիւնը մէջբերել է իր «Նգնիկի Նդ յղանդոցի բնագրի եւ տպագրութեանց համեմատութիւն եւ քննութիւն» յօդուածում («Բազմավէպ», 1928, էջ 291, սիւն. 2): 1784-ից մինչեւ 1928-1929 թթ. Վենետիկի Մխիթարեաններն այս կարեւոր եղելութիւնը հրապարակ չեն հանել, եւ բանասիրութեան մէջ Գէորգ Պալատեցու սրբագրութեան մասին խօսք չի լինում մինչեւ 1900 թ., երբ Գ. Գալէմբեարեանը Նգնիկի երկի գերմաներէն առաջին թարգմանութեան առաջաբանում (Թարգմ. Միք. Շմիր, Գ. Գալէմբեարեանի աշակցութեամբ) յատնում է Ս. Ղազարի մատենադարանում պահուող սրբագրուած այդ օրինակի մասին⁵⁴: Կարծիք կար, թէ 1-ին տպագրութեան ձեռագիրը այրուել էր Զմիւռնիայի 1845-ի մեծ հրդեհում կամ պարզապէս անյայտացել էր: Ինչպէս գիտենք, 1902 թ. էջմիածնում յայտնաբերուեց Նգնիկի մի ձեռագիր, եւ այսօր շատեր համոզուած են, թէ սա նոյնն է. այս մասին յետոյ:

ը) Յ. Նալեանի, «խմբագրական» աշխատանքի բնոյթը

Գ. Տէր-Յովհաննիսեանի սրբագրած եւ Ս. Ղազար ուղարկած տպագիր օրինակի շնորհիւ ստոյգ գիտենք այդ աշխատանքի բնոյթը, որ քայքայիչ է եղել բնագրի համար. երկին տրուած է անուն, «սրբագրուած են» բառեր, փոփոխուած է բնագիրը, դուրս են մնացել բառեր եւ մինչեւ իսկ ամբողջ

⁵¹ «Բազմավէպ», 1983, 1-4, էջ 12:
⁵² Ինչպէս Լ. Մարիէսն է ենթադրել, De Deo, 208:
⁵³ Մեր ընդգծած բառերը կարմիր մեկանով են արձանագրութեան մէջ: Հ. Մկր. Աւգերեանը սրբագրուած տպագրի առաջին կողքի ներսում գրել է հետեւեալը. «Նգնիկայ գիրքս ուղղագրեալ է ըստ ձեռագրի միում գրելոյ ի թուին հայոց չիթ. ձեռամբ տիրացու Գէորգի օր Յովհաննիսեան, եհաս առ մեզ յամին 1784, ի հոկտեմբեր»:
⁵⁴ Նոյնը տես նորագոյն աղբերք, «Յաւելուածք», էջ 18:

տողեր (թերեւս մասամբ շարուածքի ընթացքում): Նթէ նա իր սրբագրութիւնները ձեռագրում իսկ արած լինէր, ենթադրում ենք, որ Գ. Տէր-Յովհաննիսեանը յայտնած կը լինէր իր յիշատակարանում. միւս կողմից չենք կարծում, որ պատրիարքն այդպիսով աւերած լինէր հայերէն մի ձեռագիր: Ուստի ողջամտութիւնը թելադրում է, որ նա իր տպել տուած բնագիրը պատրաստել էր անձամբ գրելով տետրում կամ թելադրելով Մեսրոպ վարդապետին (տեսն վերեւում): Ո՞ր է արդեօք մէկ կամ միւս տետրակը, եթէ երբեք պահպանուել են⁵⁵:

Իր իսկ (եւ «Յիշատակարան»-ի հեղինակի) ասելով, Նալեան պատրիարքը երկու աշխատանք է կատարել Նգնիկի ձեռագրի բնագրի վրայ: Այն բաժանել է 76 «ճառերի», որ վերնագրել է, սակայն առանց զգուշացնելու, թէ տրուած վերնագրերը, ժամանակի գրաբարով, իրենն են, թէեւ դրանք նոտրատիպ են, եւ կարեւորն այն է, որ «ի գրչասխալութեանցն ամենեւին յապաւեալ» է բնագիրը, այսինքն, իր կարծիքով, վերացրել է գրչագրական սխալները, որոնք ձեռագրերում անխուսափելի են: Այս աշխատանքն ինքնին անհրաժեշտ էր, քանի որ ձեռագիրը բուն հեղինակինը չէր: Եւ քանի որ այն ժամանակ, այսինքն 1762-ին գիտական բանասիրութիւն գոյութիւն չուներ, եւ սովորութիւն չէր ձեռագրի ընթերցուածները նշել նոյն էջում կամ այլուր, ապա Յ. Նալեանը անհրաժեշտ չի համարել ընթերցողներին (իր ամբողջ աշխատանքը սրանց համար է արել) տեղեակ պահել: Սա էլ ներքելի էր յանուն բանասիրութեան չզոյտութեան այն ժամանակ: Սակայն Գէորգ տիրացուի սրբագրած օրինակից այսօր պարզուում է, որ նա Նգնիկի հեղինակութեամբ տպագրել եւ

18
 Լ լինիցն նոցա զճշմարիտն ուսանել • Լ մեզ
 ոչ ի դուր ինչ զբանս Գալիս : Քանզի ոչ
 եթէ անիրաւութեք ինչ յաղթել ջանամք •
 այլ իրաւամբք զճշմարիտն ուսանել , որով
 յայտ է՝ թէ երկուց անարարաց ի միասին չի
 մարթ լինել : Չի ուր երկուց որ ի միասին է
 ցեն, հարկ է թէ ինչ ինչ որ զատուիցն ի միջն :
 Լ որ զն արք համարեցին զձե՝ ի բրւ ի տե
 դու ինչ յամ ի հիւն լինել , Լ թէ ի մի
 ում ինչ ի մասին նորա : Լ թէ բոլոր զձե՝
 յամի ի հիւն լինել ասիցեն, հրջալի մեծ Լ ս
 ասիցեն զձե՝ գտանի հիւն մեծ քան զնա :
 Քանզի յորում էցէ որ՝ այն յորում էն ,
 քան զայն որ ի նման էն մեծ գտանի • զի բաւ
 կան եղև տանել բոլոր զնա : Եւ եթէ ի մ
 սնն ինչ միայն ի հիւն լին , Լ այնպէս բիւրս
 զատիկ իսկ մեծ քան զնա՝ հիւն գտանի • զի
 սակաւ ինչ մասն նորա բաւական եղև ընդու
 նել զձե՝ զնա : Լ թէ եթէ ոչ ի նման , Լ ոչ ի
 մասին ինչ նթ , յայտէ թէ՝ այլ ինչէր անջը
 պետող ընդ մէջ երկոցուցն՝ մեծ քան զերկո
 սինն : Բ ստ այնմ Լ ոչ միայն երկու անսկզբ
 նակիցք գտանին • այլ երեք • այսինքն՝ Կե •
 Հիւ

19
 Հիւն • Լ անջըպետն : Եւ մանաւանդ՝ մեծ
 Լ ս անջըպետող քան զերկոսինն : Լ սկ՝ եթէ
 էր երեքք հիւն անջարդ Լ անարդ Լ անկեր
 պարան , Լ զարդարեաց զնա Կե (քանզի՝ Ե
 յուրեքն նորա ի լաւն դարձուցանել կամե
 ցաւ) ապա ուրեմն էր երեքն՝ զի յանջարդս
 Լ յանարդս Լ յանկերպարանս էր Կե • Լ հարկ
 էր թէ ի բրւ զհիւն իսկ Լ նա խառնիխու
 ուն վարէր : Եւ թէ յամ ի հիւն (որպէս
 ասենն) էր Կե • յորժամ զնա ի զարդ Լ ի
 յարդ Լ ի կերպարանս ածէր , ինքն յի մարթ
 էր ամփոփել • զի չէր ուրեք մարթ ամփոփել
 լոյ : Ս ի թէ Լ զինքն ընդ հիւնն , ի զարդս
 Լ ի յարդս Լ ի կերպարանս ածէր • քանզի՝
 ոչ զոյր ուրեք տեղն ամփոփելոյ • որ յետին
 ամբարշտութե է՝ : Ապա թէ ասիցեն թէ
 հիւն ի յամ էր , ըստ նմին օրինակի պարտ
 էր ինդրել , ոչ զատիչ ի նմանն • որպէս զ
 նասուուս ի մէջ օղոյ , որք ի նմանն • Լ զա
 տուցեալք ի նմանն : Թ ի բրւ ի տեղուց ,
 ոչ Լ զուրք յերկրի : Եւ զհիւն զայն ասեն ,
 թէ անձա՛հ Լ ան զարդ Լ անարդ՝ Լ չար էր :
 Լ թէ ըստ նց մտացն իցէ , ապա չարեաց տե
 ղի

Ահաւասիկ 2 էջ Գ. Տէր-Յովհաննիսեանի սրբագրած տպագիր օրինակից.

⁵⁵ Միւրյօժար պատասխանելով մեր հարցումներին՝ պոստաբնակ Գ. Բամբուքեան բանասէրը, որին շնորհակալու
 թիւն ենք յայտնում, մեզ տեղեկացնում է հետեւեալը. «Մեր պատրիարքարանին դիւանին մէջ դժբախտաբար ԺԼ. դարու
 պատրիարքներու վերաբերեալ սահմանափակ մի քանի նիւթ միայն կայ, որովհետեւ 1826 տարուայ Հօճափաշայի մեծ
 հրդեհը պատրիարքարանի դիւանն ալ մոխրի վերածած է [. . .] նոյնպէս պատրիարքարանիս մէջ Նդ յղանդոցի
 առաջին տպագրութեան սրբագրուած որեւէ մէկ օրինակ գոյութիւն չունի» (1980 թ. հոկ. 22-ի անձնական նամակ Պոլ
 սից):

տարածել է տուել մի բնագիր, որն այդ դասական հեղինակին զրկած կը լինէր հայ հին գրականութեան մէջ իրաւամբ վայելած առաջնութիւնից, եթէ երբեք չլինէր Պալատեցու սրբագրած օրինակը, որ մեծ մասամբ հաստատուած է 1902-ին յայտնաբերուած ձեռագրի բնագրով, անկախ դրանից, թէ սա նոյն ձեռագիրն է, թէ ոչ: Ի յայտ է գալիս, որ Յ. Նալեանը՝ բնագրի սրբագրութեան գործում շատ յանդուգն, դասական գրաբարին ամենեւին անտեղեակ, նզնիկի բնագիրը «ի գրչասխալութեանցն յապաւելու» դիտաւորութեամբ գիրքը «սրբագրել» է այնպէս, ինչպէս մի տգէտ վարժապետ սրբագրած կը լինէր Մոցարտի երաժշտութիւնը: Հարիւրներն են անցնում նրա ամէն կարգի «սրբագրութիւնները», որ նշուած են մեր հրատարակութեան էջատակերում: Բարեբախտաբար նա ունի նաեւ տեղին ձեռուներ, որ շատ քիչ են եւ յամենայն դէպս չեն արգարացնի աւերը:

Նորայր Ն. Բիւզանդացին լաւ կարծիք է ունեցել Զմիւռնիայի տպագրի բնագրի մասին. «Ո՛րչափ լաւագոյն ընթերցուածք է Զմիւռնականին, զորս Վենետականն արհամարհած է. ո՛րչափ յիմ ուղղութեանց, զորս 1895է շատ յառաջ նշանակած էի յօրինակին (Ս. Ղազարի հրատարակութեան. Մ. Մ.), Զմիւռնականն հաստատեց» (1897 թ. փետրուարի 9, անտիպ նամակակից Հ. Գ. Գալէմբեարեանին):

Յ. Նալեան պատրիարքի եզնիկեան հրատարակութիւնը գրեթէ միահամուռ դատապարտուել է բանասիրութեան մէջ: Այսպէս ՆՀԲ-ի հեղինակները «Նախադրուք»-ում գրել են. «Տպագրութիւնն զմիւռնիոյ էր այլափոխ ըստ նոր ոճոյ յետնոց յոչ սակաւ տեղիս», սակայն նրա որոշ ընթերցումներ, ինչպէս անարարիչ, մտել են ՆՀԲ-ի մէջ: Ճրանսիացի հայագէտ Վիկտոր Լանգլուան գրել է, թէ առաջին հրատարակութիւնը «Սխալաշատ է, ինչպիսին են ընդհանրապէս դասականների հրատարակութիւնները, որոնք Արեւելքում կատարուել են 18-րդ դ.»⁵⁶: Գ. Գալէմբեարը գրել է. «Այս Ա. տպագրութիւնն ստգտանելի է», այսինքն դատապարտելի կամ մեղադրելի⁵⁷: Ս. Ղազարեանը «սըրբապղծութիւններ» է կոչել կատարուած փոփոխութիւնները⁵⁸: Սակայն խստագոյնս եւ համեմատական փաստերով դատապարտողը եղել է Ն. Փէչիկեանը. «Զմիւռնեանը, ստոյգ է, բազմաթիւ տգիտական, քմահաճոյ եւն փոփոխութիւններ ունի»⁵⁹, «Զմ. տպագրին աղճատ, սխալագիր, եւ ամէն տեսակէտով թերի եւ տգիտական վիճակը»⁶⁰:

Նզնիկի երկի առաջին, անյաջող հրատարակութեան բնագրային բոլոր թերութիւնների պատասխանատուն Յ. Նալեանն է ի հարկէ: Բայց սխալներ կարող են սպրդած լինել նրա սեւագրութեան, նկատելի են վրիպակներ, որոնք սոսկ տպագրական են: Սրանց 29 հատը ուղղուել է գրքի վերջում, սակայն պարզապէս որովհետեւ երկու էջ տեղ է մնացել, «ի պարապ տեղտը», ինչպէս ասուած է, մանց բառից ոմանց գոյր սղալումն վասն ոչ գոլոյ ներհուն շարաբարդողին. զանց արարաք ժողոփ հողացդ զի կար մեր այս քան եղեւ. ողջ լերուք զարգացեալք» (էջ 292): Ճշմարտութիւնը այս յուճակեանից սկսած մինչեւ տպարանի ամենահամեստ աշխատակորի կարողութիւնը: Ինչպէս թարուելով Գէորգ Տէր-Յովհաննիսեանի սրբագրած օրինակով եւ 1902 թ. յայտնաբերուած եզնիկեան ձեռագրով:

Քանի որ զմիւռնեան տպագրութեան մասին վերջին քննադատական խօսք ասողը Ն. Փէչիկեանի գործին. «Հ. Փէչիկեանի յաճախակի ըրած ակնարկութիւններէն յայտնի կ'երեւի՝ որ Նալեանի որ իբրեւ գործին հրատարակիչը Ձեռագրին «գրչասխալութիւնները» միայն յապաւած է, եւ ո՛չ թէ

⁵⁶ Collection, հատ. 2, 1869, էջ 327:
⁵⁷ Նորագոյն աղբերք, «Յաւելուածք», էջ 19:
⁵⁸ Հայկ. նոր մատեն., էջ 550:
⁵⁹ «Բազմապիւլէպ», 1928, էջ 290, սիւն. 2:
⁶⁰ «Բազմապիւլէպ», 1929, էջ 275, սիւն. 2:

այս կամ այն բառերը ըստ կամս փոխած. իսկ գլխակարգութեանց բաժանումը բնագրին վնաս մը չէ բերած ինքնին: Եւ յետոյ, ո՛վ տեսեր ու բաղդատեր է Իզմիրեան բուն Ձեռագիրը՝ իր Տպագրին հետ, Նալեանի սրբագրութիւնները մի առ մի դուրս բերելու համար»⁶¹: Այնուհետեւ. «Մենք համակարծիք չենք ամբաստանելու Նալեանը. ո՛վ գիտէ ո՛ր հայ ունիթորի մը ձեռքէն ելած էր Աբրահամ Առաջնորդի ներկայացուցած Ձեռագիրը»⁶²: Յարգելով սրբագրանի պայծառ յիշատակը եւ այս հարցից դուրս նրա բանասիրական մեծ վաստակը՝ ոչինչ չենք աւելացնում Ն. Փէչիկեանի սպառնչ պատասխանին («Նգնիկի հարցը Նալեան Պատրիարքէն մինչեւ Դուրեան», Բազմապիւլէպ, 1930, էջ 497-502): Իր մի քանի ճիշտ սրբագրութիւններից դուրս, Յ. Նալեանի եզնիկեան հրատարակութիւնն այսօր ունի լոկ պատմական արժէք, որ բնագրի ստուգման տեսակէտից, ձեռագրի համեմատութեամբ, չենք անտեսել սոյն հրատարակութեան մէջ եւ նշել ենք նրա բոլոր այլընթերցումները:

2. Ս. Ղազարի կամ երկի 2-րդ հրատարակութիւն, Ս. Ղազար, 1826⁶³ (Վ.)

Տե՛ս նաեւ ստորեւ 3-րդ ենթավերնագիրը:
 Վերնագիր՝ ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ, առանց հրատարակողի անուան:

- Բովանդակութիւն.
 «Զեկուցումն» (անստորագիր), էջ 3:
 Բուն բնագիր, որ բաժանուած է 4 գրքի եւ 89 գլուխների, էջ 5-298.
 «Գիրք առաջին, եղծ աղանդոց հեք-անուացն», 28 գլուխ, էջ 5-111:
 «Գիրք երկրորդ, եղծ քիչիկ Պարսից», 28 գլուխ, էջ 113-198:
 «Գիրք երրորդ, եղծ կրօնից Յունաց իմաստնոցն», 17 գլուխ, էջ 199-241:
 «Գիրք չորրորդ, եղծ աղանդոյն Մարկիոնի», 16 գլուխ, էջ 243-298:
 «Նոյն եզնիկայ Վարդապետի կրատք», էջ 299-313:
 «Ցանկ», էջ 315-334:

Ոստենք այս բաժանումների եւ յարակից հարցերի մասին, մտապահելով Ն. Ակիմեանի հետեւեալ գիտողութիւնը. «Բանասիրութիւնը կը պակսէր ժԹ. դարու Հին Դպրոցի մեծ հայկաբաններուն» («Դասական հայերէնը», էջ 136):

1. Բնագիր

ա) Այս հրատարակութեան կարեւորութիւնը

Երբ այն լոյս տեսաւ, Նզնիկի առաջին անյաջող տպագրութիւնը վաթսուն տարուայ հնութիւն ունէր եւ ընկել էր մոռացութեան մէջ: Այս մէկը ոչ միայն նոր կեանք հաղորդեց երկին, այլեւ, ամենակարեւորը, այն ներկայացրեց աւելի ստոյգ բնագրով: Շատերն սկսեցին այն կարգալ, ուսումնասիրել, դրանից վկայութիւններ բերել հայոց հասարակական կեանքին, ընդհանրական եկեղեցուն վերաբերող այլեւայլ ուսումնասիրութիւնների մէջ: Յաջողութիւնն այնքան մեծ է եղել, որ այս տպագրութեան բնագիրը 12 անգամ կրկնուել է տարբեր ժամանակներում եւ մի քանի քաղաքներում, մինչեւ քննականը 1959-ին⁶⁴, որ վերջինն է: Բանասէրներ ու լեզուաբաններ վենետիկեան ըրած, մինչեւ քննականը են կատարել իրենց քննական աշխատանքները, երբեմն օգտագործ հրատարակութեան վրայից են կատարել իրենց քննական աշխատանքները, երբեմն օգտագործ հրատարակութեան համար, յարուցել են հրատարակութեան ձեռագրին, ծելով զմիւռնեանը լոկ համեմատութեան համար, յարուցել են հրատարակութեան ձեռագրին, բնագրին վերաբերող շատ լուրջ հարցեր, առաջարկել բնագրային սրբագրութիւն-հրատարակչին, բնագրին վերաբերող շատ լուրջ հարցեր, առաջարկել բնագրային սրբագրութիւն-ներ, մանաւանդ 1902-ին Նզնիկի մի ձեռագրի յայտնաբերումից յետոյ: Այս տպագրութիւնն այն-քան տարածուած եւ օգտագործուած էր, որ քննական բնագրի հրատարակիչներ Լուի Մարիէսը եւ քան տարածուած եւ օգտագործուած էր, որ քննական բնագրի հրատարակիչներ Լուի Մարիէսը եւ Շարլ Մերսիէն իրենց հրատարակութեան մէջ նշել են նրա էջերն ու բաժանումները. նոյնն ենք արել նաեւ մենք, դա միանգամայն անհրաժեշտ համարելով:

⁶¹ Ե. Դուրեան, Ամբողջ երկեր, 2, էջ 412:
⁶² Ն. տ., էջ 415:
⁶³ Ոմանք սխալ են նշել այս տարեթիւը. այսպէս Ernest Mordant-ը 1868-ին լոյս ընծայած «Eznig, docteur arménien du cinquième siècle» ուսումնասիրութեան մէջ (= REA, նոր շարք, հատ. 3, էջ 507 եւ յաջ.) նշել է 1824, Victor Langlois-ն՝ 1825 (Collection, հատ. Բ, էջ 372), Բ. Կիւլէսէրեանը՝ 1827 (ՀԱ, 1907, էջ 310):
⁶⁴ Սակայն նոյնիսկ սրանից յետոյ էլ Նզնիկի երկը կարդացել են վենետիկեան (Հայաստանում՝ նաեւ թիֆլիսեան) հրատարակութեամբ, Երեւանում նրանից պատրաստեցին, հակառակ մեր նախազգուշացմանը, Նզնիկի երկի եւ «Որատեն-հրատարակութեամբ, Երեւանում նրանից պատրաստեցին, քանի որ գոյութիւն ունէր քննականը: Աւելին. «Որատեն»-ի բառա-րի» համաբարբառը, ինչ որ սխալ էր մեր կարծիքով, քանի որ գոյութիւն ունէր քննականը: Աւելին. «Որատեն»-ի բառա-պաշարը խառնուեց Նզնիկի երկի բառերին առանց զգուշացման, թիւրիմացութիւնների մէջ գցելով շատերին:

բազրուածն է յաճախ նոյնական Գ. Տէր-Յովհաննիսեանի սրբազրածի հետ, իսկ միւսը շատ թերի է. դրանք մեր հրատարակութեան մէջ հաշուի չենք առել: Բայց Ա. Բագրատունին⁷⁶, ինչպէս այժմ պարզուում է (ըստ Ռուսացումով), Գ. Տէր-Յովհաննիսեանի սրբազրած եւ իրեն համար ձեռագիր համարած օրինակից է կատարել իր հրատարակութիւնը, ինչ որ միանգամայն ճիշտ էր գիտականօրէն, բայց անորոշ էր «օրինակ տպագրիս ձեռագրեալ է» արտայայտութիւնը:

դ) Վի խորագիրը, ներքին բաժանումները, «Սիրտը»-ը եւ «Յանկ»-ը

1. Ա. Բագրատունին⁷⁶ երկը վերանուանել է «Նոյն աղանդոց», առանց որեւէ ծանօթագրութեան, թէ իր «ձեռագրում» երկն անվերնագիր է, ինչպէս նոյն ձեռով Յ. Նալեանը հնարել էր «Գիրք ընդդիմութեան» խորագիրը: Ուստի շատեր կարծել են, դեռ կարծում են, թէ Նոյնիկն է իր երկը կոչել «Նոյն աղանդոց»: Սակայն դասական գրաբարի պաշտպանները Վիեննայի Միլիթարեանների գլխավորութեամբ առաջինը եղան նկատել տալու, որ եղծ բառը դասական գրաբարում գործածուած չէ: Մինչեւ իսկ Արսէն Լազրիկեանը գրել է. «Նրկու վերնագիրներն ալ կամայական են, իսկ ընդդիմութիւն կամ եղծ բառերը դասական չեն»⁷⁵: Գէորգ Պալատեցին իր սրբազրած գմիւռնեան տպագրում գրել է «Նրանեղոյն եզրկայ վարդապետի կողքացույց», որ Նոյնիկից չէ:

Տպագրի առաջաբանում Ա. Բագրատունին⁷⁶ տեղ եկացրել է, թէ իր տրամադրութեան տակ եղած «օրինակի» բնագիրը բաժանել է գրքերի եւ գլուխների. «Ձանյօղաւոր գմիահետ գրչագիրն արարաք ի գիրս եւ ի գլուխս», սակայն առանց զգուշացնելու, որ գրքերի համարակալումները՝ «Գիրք առաջին... Գիրք չորրորդ», եւ վերնագրերը իրենն են: Ճրանսիացի հայագէտ Լ. Մարիէսը խստօրէն քննադատել է այդ բաժանումները իբրեւ երկի ամբողջութեան ըմբռնման արգելքներ⁷⁴: Թուում է, թէ շատ բանասէրներ եւ ընթերցողներ խալառ մոռանալով հրատարակչի ազդը դրանց մասին՝ դրանք ներկայացրել են իբրեւ հեղինակային. «Նոյնկայ մատեանն՝ «Նոյն աղանդոց» կոչուած՝ ի չորս մասուսն բաժանեալ է սովորաբար ի տպագիրս եւ ի ձեռագրիս»⁷⁵: Կամ Ե. Տէր-Մինասեանը գրել է. «Գիրքը բաժանուած է 4 մասի [. . .]: Նրկորդ գրքի վերնագիրն է» եւ այլն⁷⁶:

Ինչ վերաբերում է Ա. Բագրատունու⁷⁶ հրատարակած բնագրին, ապա բանասէրները տարակարծիք են եղել:

Մինչեւ Նոյնիկի մի ձեռագրի յայտնաբերումը էջմիածնում 1902-ին, բնագիրը կամ վատ են համարել, կամ լաւ, մանաւանդ 1-ին հրատարակութեան համեմատութեամբ: Այսպէս, 1891 թ. յունուարի 22-ին հայագէտ Գ. Ա. Շրումպֆին գրած նամակում Ն. Ն. Բիւզանդացին իր յիշատակած մատենագիրների տպագրուած բնագրերը նկատի ունենալով՝ գրել է. «Նոյնիկ, Սեբէոս, Մատթէոս Ուսայեցի եւ նրանք, որոնք հրատարակուած են, անհեթեթ ու ծիծաղելի աշխատութիւններ են»⁷⁷: Իսկ Գ. Գալէմբարեանը ասել է հետեւեալը Նոյնիկի 2-րդ հրատարակութեան մասին. «Այս հրատարակութիւնը խնամքով եղած է [. . .] նախագաղափարին հետ համեմատուած եւ ուղղագրուած Ա. տպագրութեան վրայէն [նկատի ունի Գ. Տէր-Յովհաննիսեանի սրբազրած եւ Ա. Բագրատունու⁷⁶ օգտագործած տպագրի օրինակը՝ Գ]: Հրատարակութեանս եւ իր գաղափար օրինակին (իմ ըրած) տարբերութիւններ ունի, եւ սրբագրութիւններ կատարուած են՝ առանց վրան ծանօթութիւն դնելու»⁷⁸: Նոյն էջի ծանօթութեան մէջ գրել է Փրանսիացի հայագէտ է. Դիւլորիէի կարծիքը. «Այս տպագրութիւնը նախընթացէն շատ աւելի լաւագոյն է՝ բնագրին սրբագրութիւններուն պատճառաւ»:

⁷⁵ Ա. Լազրիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն, էջ, 549, ծան. 1:
⁷⁶ L. Mariès, De Deo, էջ 17 եւ յաջ.: Ուրիշներ անցողակի են քննադատել այդ բաժանումները. «Ներկայ խմբագրութեան նկատմամբ, զորս մի եւ նոյն խորագրի տակ չէ կարելի դասակարգել» (Գ. Նահապետեան, «Բագրատունի», 1908, Մոսկովի էջ 7 գրքը:
⁷⁷ Յ. Մարիէս, Նոյնիկ եւ իւր երկասիրութիւնը, «Բագրատունի», 1889, 108:
⁷⁸ Ե. Տէր-Մինասեան, Պատմ.-բանաս. հետազոտ., 300:
⁷⁹ «Լրագիր», Երեւան, 1797, էջ 95:
⁸⁰ Նորագոյն աղբերք, «Յաւելուածք», 20:

Ա. Բագրատունու⁷⁶ հարազատութեան չափը Գ-ին կամ իր աղբիւրին երեւում է հետեւալ ցանկում:

Գ-ի եւ Վ-ի էական տարբերակների ցանկ

Իրենց էջերով նշանակում ենք նախ Գ-ի եւ ապա Վ-ի ընթերցուածները, որոնք պէտք է գնահատել բնագրի մէջ եւ ոչ թէ առանձին վերցրած: Կարեւորութիւն չենք տուել կէտագրութեանը, առողջանութեան նշաններին, աւելորդ բերին, ուղղագրական ոչ էական տարբերութիւններին, մի շարք բառերի առանձին կամ միասին գրուելուն, որոնք մեծազոյն մասամբ հետեւանք են Գ-ի վատորակ տպագրութեան: Շատ կարեւոր են + նշան կրողները:

- Սորագիր Գ. Երանեղոյն եզրկայ վարդապետի Կողքացույց [ոչ հեղինակային]
Վ. Եզրկայ Կողքացույց Բագրեւանդայ եպիսկոպոսի ԵՂՄ ԱՂԱՆԴՈՑ [անուանաթերթում, իսկ էջ 5-ում՝ բնագրից առաջ՝ Եզրկայ վարդապետի Կողքացույց Գիրք առաջին Եղծ աղանդոց հեթանոսացն]

-	2	անքննի (նաեւ էջ 86)	-	63	Ենօք (93 Ենօք)
-	6	անքննի (նաեւ էջ 97)	-	73	Ենովք (104 Ենովք)
-	17	զճմարիտն ուսանել, որով	+	64	չտայցէ +
-	22	զճմարիտն ուսանել: Որով	-	74	չտայցէ
-	19	և ի յարդս +	-	65	պատուիրանօք +
-	24	ի յարդս	-	74	պատրանօք
-	19	գատիչ +	-	68	զհրէայան (միշտ)
-	24	գա՞տ ինչ * (ծ. գատիչ)	-	78	զհրէայան (միշտ)
-	21	անձնաւորք ինչ +	-	72	որ չեն մտաւարժ (վրիպ.)
-	26	անձնաւոր ինչ	-	82	որ չէն մտաւարժ
-	23	մարդիկէ	-	74	գայն տէրն իսկ +
-	29	մարդիկ	-	84	գայն իսկ
-	24	արդեօք միշտ)	-	75	հոգոց մարդոյն
-	30	արդեօք (միշտ)	-	86	հոգոց մարդոյն
-	27	և անարարքն +	-	88	զբան գտանաց +
-	33	և անարարք	-	98	զբան գտանաց
-	33	և միտք +	-	88	ի մերում գեօղ
-	39	և միտք	-	99	ի մերում գեօղ
-	35	առ եռեղանէ (վրիպ.)	-	91	նահանգ
-	41	առ եղեռանէ	-	103	նահանգ
-	37	անարարիչ +	-	92	գոչեն գիրք վիշապ (վրիպ.)
-	44	անարար ինչ * (ծ. անարարիչ)	-	103	կոչեն գիրք վիշապ
-	39	ք ծառայք (161)	-	99	գործաւն
-	45	երկու ծառայք (178)	-	111	գործօն
-	48	ամբարշտացեալ (միշտ Գ-)	-	99	եօթն { միշտ, եւ եւթանասնիցն
-	55	ամալարշտացեալ (միշտ Կ-)	-	111	եօթն { 238, 260, 261
-		(նոյնարմատներում եւս)	-	100	որմըզդ. որ
-	48	առ յապա	-	113	որմըզդ. որ
-	56	առ յապա	-	100	ի ամի (102...)
-	52	ամենեքեանք	-	113	հագար ամի (115...)
-	60	ամենեքեանք	-	100	որմըզդն ի յաշտ
-	57	գտանէի (վրիպ.)	-	113	որմըզդն ի յաշտ
-	65	գտանէր	-		(է՛լ չենք նշելու)
-	57	ուտէր ոք՝ վնասէր +	-	101	որմըզդի
-	66	ուտէր ոք՝ չվնասէր	-	114	որմըզդի
-	59	առաջնոց +	-		(է՛լ չենք նշելու)
-	63	առաջնոյ	-		

չէր կրնար ետ դառնալ եւ բարւոքել 1926ին արդէն տպագրուած օրինակը»⁸⁵: Մենք նրա կատարած բնագործիտական աշխատանքը քննադատաբար օգտագործել ենք այս հրատարակութեան մէջ:

2. «Որատք»

Հետեւելով անշուշտ երկի առաջին հրատարակչի օրինակին՝ Ա. Բագրատունին⁸⁶ իբրեւ յաւելուած վերահրատարակել է նեղ ոսին վերագրուող այն «Խրատք»-ը, որոնք հայերէն որոշ ձեւագրերում նշանակին են վերագրուած ուրիշ անվանքներին հետ, եւ «որոնց մեծագոյն մասին [ըստ մեզ՝ բոլորի] վրայէն ստուգելի ջնջելի է նշանակայ անունը [. . . եւ] տակաւին քննելի են»: Նա գիտակցել է, որ այդ խրատները նեղ ոսին են, բայց դրանք վերահրատարակել է հետեւեալ նկատառումով. «Յաւելուածն յետոյ մատենիս, նշանակայ Վարդապետի Որատք, ի վարս հարանց՝ նեղ ոսի սուրբ հօրն ընծայի. այլ սա չիք ի յոյն բնագրին, թէպէտ եւ մատենագրութիւնք իսկ նորա ոչ ամենայն անկորուստ կան» (Ձեկուցումն): Միւս կողմից նկատենք, որ Գ. Տէր-Յովհաննիսեանը դրանք էլ է սրբագրել իր տպագիր օրինակում, դարձեալ, անշուշտ, իր աչքի առաջ ունեցած ձեւագրից: Դժբախտաբար, հակառակ Ա. Բագրատունու⁸⁶ զգուշացման (գոնէ այս խնդրում), այդ «Խրատք»-ը նրեւանում ոչ միայն թարգմանուել են նշանակի երկի վերջում, թէեւ անհրաժեշտ ծանօթագրութեամբ եւ զգուշացմամբ, այլ եւ դրանք բառապաշարը նշանակի երկի համաբարբառի մաս է կազմել, եւ ոմանք ահա այդ խրատներով էլ են բնութագրել նշանակի մտածողութիւնը, լեզուն եւ բառապաշարը. «Նրա գործերից մեզ հասել է (այսպէս. Մ. Մ.) միայն «Նղծ աղանդոց» երկը եւ նրան վերագրուող «Որատները», որոնք իրաւունք են տալիս նրան համարելու ջատագովական»⁸⁵:

3. «Ցանկ»

Ս. Ղազարի տպագրի վերջում գետեղուած է հրատարակչի «Ցանկ» համաբարբառը, որ մեծագոյն մասամբ գոյականներ է պարունակում. սա երկի առաջին համաբարբառն է, որ, հաւանաբար, շատերին է օգտակար եղել:

3. Ս. Ղազարի 1850 թ. եւ 1863 թ. տպագիրները (Վ¹ եւ Վ²)

Այսօր Ս. Ղազարում էլ յայտնի չէ, թէ ի՞նչ հիման վրայ Ա. Ղազարեանն իր «Հայկական և ուր մատենագիտութեան» մէջ գրել է, որ Ս. Ղազարում նշանակի երկը երեք անգամ է լոյս տեսել պարակուել է 1826-ին, երկրորդը՝ 1850-ին, երրորդը 1863-ին: Հ. Ներսէս Տէր-Ներսէսեանի բարեհացականութեան շնորհիւ, 1985 թ. ամռանը Ս. Ղազարում տեսանք այդ երեք տպագիրների մի-մի օրինակներ, որ պայմանականօրէն կոչենք Ա, Բ, Գ օրինակներ: Նրեքն էլ փոքրադիր են:

ա) Ա կամ Արսէն Բագրատունու անձնական օրինակը, 1826 թ., Վ

Փոքրադիր, կարուած, բայց առանց խաւաքարտէ կազմի, եւ երեք եզերքները չկտրուած: Կոնակին մէկը թանաքով գրել է. «Նշանակ սրբագրեալ եւս ի Վ. Հ. Արսէն Բագրատ.», որի Վ-ն նշանակում է «Վերապատուելի», որն այժմ Մխիթարեան վարդապետներին չի տրուում:

Բ եւ Գ օրինակները թղթի համեմատութեամբ այս օրինակինը աւելի հին տեսակի է, ողորկ չէ, մազմզուկներ ունի:

- Շարուածքի տառատեսակը նոյնն է երեք օրինակներում:
- Զհամարակալուած դատարկ էջեր. սկզբում՝ երկու, գրքի վերջում՝ երեք:
- Տպագրած առաջին էջ՝ «ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ. ԵՋՆԻԿ», երեք բառերն էլ գլխագրերով:
- Պատկերներ. սկզբում սեւ-ճերմակ երկու պատկեր դէմ դիմաց, որոնց միջեւ բարակ թուղթ է դրուած: Առաջինը ներկայացնում է նշանակի նկարագրած կառքը. նկարի տակ կարդում ենք նրա խօս-

⁸⁵ «Բագրատուէլ», 1930, 501, սիւն. 2:
⁸⁶ Գ. Գալէմբեարեան, Նորագոյն աղբերք, «Յաւելուածք», 3, ծան. 1:
⁸⁵ Հ. Գ. Գաբրիէլեան, Հայ փիլիս. պատմ., 34: Առ՛ը «Խրատք»-ի բառերը նշանակին է համարել, թերեւս ենթադրելով, թէ թարգմանիչը նշանակին է:

քերը՝ «Ի չհամագրեաց լծեալ ... այս կառք զարմանալիք»: Վիմագրողի ստորագրութիւնն է՝ ձախ անկիւնում Riz. dis., եւ աջում՝ Bozza inc.: Նրկրորդ պատկերում, ալ ձեռքում եպիսկոպոսական գաւազան բռնած մի եպիսկոպոս ձախ ձեռքի ջահով հրկիզում է հեթանոսական գրքեր մի մոզի ներկայութեամբ, որ ծածկել է երեսը: Վիմագրողի ստորագրութիւնը նոյնն է: Նկարի տակ կարդում ենք «Ի Վենետիկ, 1826»: Պ. Այվազեանն այս նկարը վերարտադրել է նշանակի երկի՝ Գ. Ուստատուրեանի 1951-ին Բուէնոս Այրէսում հրատարակած տպագրի սկզբում, բայց եպիսկոպոսական գաւազանը փոխարինել է ճաճանչափայլ աւետարանով:

Անուանաթերթ (գլխագրերով)՝ «Նշանակայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ», տակը՝ ընդելուզուած ՄՂ (այսինքն՝ Սուրբ Ղազար): Ի Վենետիկ Ի Սուրբ Ղազար, ՌՄՀԵ» (այսինքն՝ 1826 թ): Սա կազմում է չհամարակալուած էջ 1-ը: Զհամարակալուած էջ 3-ը «Ձեկուցումն»-ն է:

- Զհամարակալուած էջ 5-ը բնագրի սկիզբն է:
- էջեր. եզնիկի երկը, էջ 5-298:
- «Նոյն նշանակայ Վարդապետի Խրատք», էջ 299-313:
- «Ցանկ», էջ 315-334:

էջ 334-ի դիմացի դատարկ եւ չհամարակալուած էջում՝ տպարանի հասցէն՝ Tip. Edit. li PP. Arm. di S. Lazzaro Venezia:

Այս Ա. օրինակի ներսում կայ թանաքով գրուած մէկ փոքրադիր էջ, վրիպակները ուղղումների թերթիկ՝ «Թեթեւ վրիպակք ինչ ուղղելիք յնշանակին» վերնագրուած, մեր յապաւումների մէջ՝ Ա: ()-ներում նշեցինք, թէ ո՛ր Վ-ում կան.

	Վերջ	Տող	Վրիպակ	Ուղղում
	33.	13.	*չէր անարար. (Վ, Վ ¹)	էր անարար. (Վ ²)
	139.	8.	*գտակալիկ ինչ. (Վ)	գտակալիկ ինչ. (Վ ^{1,2})
	214.	23.	ա եւ. (պատահական)	աւեւ. (ոչ մի Վ-ում)
	216.	10.	ծանրանայ. (բոլորի մէջ)	ծրանայ կամ *ծայրանայ. (ոչ մի Վ-ում)
	217.	4.	Թ. (բոլորի մէջ)	անդր չպիտի (ոչ մի Վ-ում)
	217.	12.	եւ չէր հմար. (բոլորի մէջ)	Թ. եւ չէր հմար. (ոչ մի Վ-ում)
	221.	2.	գորութիւն ինչ ինչ. (Վ, Վ ¹)	գորութիւն ինչ. (Վ ²)
	226.	21.	գկէւն յիւր. (բոլորի մէջ)	գկէւն յիւր. (ոչ մի Վ-ում)
	251.	12.	ունէր. գեթ. (Վ, Վ ¹)	ունէր, գեթ. (Վ ²)

Կասկած չկայ, որ Ս. Ղազարի այն գրքոյկները, որոնք այս Ա կամ Արսէն Բագրատունու անձնական օրինակի բնագիրն ունեն առանց որեւէ բացառութեան, բուն 1826-ի տպագիրն են:

բ) Բ օրինակ կամ 1850 թ. տպագիր՝ Վ¹

Սա ունի Ա. օրինակի սկիզբի պատկերները, «ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ. ԵՋՆԻԿ» առաջին տիտղոսաթերթը, բայց անուանաթերթում կարդում ենք ԵՋՆԿԱՅ, առանց Ա. օրինակի -Ը- տառի, որով սա առաջին տարբերութիւնն է երկու տպագիրների միջեւ: Ա. օրինակի հետ ունի նոյն էջաքանակը, նոյն բովանդակութիւնը եւ վերջում տպարանի հասցէն իտալերէն լեզուով, նոյն տառատեսակը, նոյն շարուածքն ըստ առաջին հայեացքի, բայց իրականում ունի շարուածքային տարբերութիւններ: Այսպէս օրինակ էջ 13-ում 1826-ի տպագիրն ունի 26 տող, ինչպէս միւս էջերում, իսկ 1850-ինը կամ մեր Բ օրինակը՝ 27 տող, ըստ որում վերջին տողը միայն կայանի բառն է, որը Ա. օրինակում տ. 26-ի վերջում է: Կամ էջ 26-ում 1-ին տողը վերջանում է որք բառով 1826-ի տպագրում, իսկ 1850-ի տպագրում՝ որք դի- գրերով: Կամ 1826-ի տպագիրը էջ 36-ի նախավերջին տողում վերջանում է կամա- տառերով, իսկ 1850-ի տպագրում՝ կա- ու: Շարուածքային տարբերութիւնները կարեւորութիւն չէին ունենայ, եթէ շատ տեղերում 1826-ի եւ 1850-ի տպագիրները բնագիրը մանր տարբերութիւններ չունենար: Այս բոլորից բացի, Բ օրինակի թուղթը աւելի նոր տեսակի է, քանի որ աւելի ողորկ ու փայլուն է:

գ) Գ օրինակ կամ 1863 թ. տպագիր՝ Վ²

Սա շատ կողմերով նման է 1850-ի տպագրին, բայց ունի բնագրային տարբերութիւններ: Արտաքին տարբերութիւններից նշենք, որ Ա. եւ Բ օրինակների սկիզբի երկու պատկերները եւ ամբ-

նավերջում տպարանի հասցեն չկան 1863-ի տպագրում: Էջաքանակը, բովանդակությունը, տառատեսակը, շարուածքը (մեծագոյն մասամբ) նոյնն են 1850-ի տպագրի հետ, բայց բնագրային որոշ տարբերություններով:

1826, 1850 եւ 1863 թթ. տպագիրների արտաքին նոյնությունը պատճառ է դարձել, որ շատ բանասէրներ չտարբերեն, թէ ո՞ր տպագիրն է իրենց ձեռքում, եւ քանի որ երեքն իրար հետ համեմատած՝ բնագրային տարբերություններ ունեն, որոնք աննկատելի են, եթէ մէկը միայն մէկ տպագիր ունի ձեռքում, տեղիք են տուել բազում թիւրիմացութիւնների. բոլոր բանասէրները կարծել են, թէ իրենց տրամադրութեան տակ եղածը բուն 1826-ի տպագիրն է: Այս բոլորը նկատի առնելով՝ ստորեւ հրատարակում ենք 1826, 1850 եւ 1863 տպագիրների էջ 6-12-ի շարուածքային եւ բնագրային տարբերություններ, որոնցով կարելի է գաղափար կազմել դրանց բնագրի մասին եւ որոշել, թէ ո՞րն ունէք: Պարզում է, որ 1850 եւ 1863 թթ. տպագիրներն իրար աւելի մօտ են, քան երկուսը միասին 1826-ի տպագրի հետ համեմատած:

դ) Ս. Ղազարի 1826, 1850 եւ 1863 թթ. տպագիրների շարուածքային տարբերություններից (էջ 6-12)

Ծան. - 2-րդ եւ 3-րդ սիւնակներից մէկում հաւասարութեան նշանը (=) ցոյց է տալիս ընթերցուածի նոյնութիւն մախորդ սիւնակի հետ: Նշում ենք միայն տողերի ամենավերջին գրերը: Էջերն ու տողերը նոյնն են:

Տպ. 1826 (Վ)	Տպ. 1850 (Վ ¹)	Տպ. 1863 (Վ ²)
էջ, տող		
6. 1 Լ ըզ-	Լ	=
6. 2 մի' մթար-	մի'	=
6. 3 լուսոյն	լու-	=
7.26 խնայ-	խնայի-	=
8. 1 սեպհականեալ ըզ-	սեպհականեալ	=
8. 8 զիմաստութիւնն իւր	զիմաստութիւնն	=
8.21 Լ ին-	Լ	=
9.14 զգեղեցկութիւն	զգեղեցկու-	=
9.27 1* [պրակի թիւը]	=	(չիք)
[Պրակների համարները նշանակուած են միայն առաջին երկու տպագիրներում:]		
11.18 նուա-	նուազե-	=
11.19 յարարածոցն	յարարածոցն ըստ	=
11.20 շար-	շարժե-	=
11.21 արդ	արդ չէ	=
11.22 զփոփո-	զփո-	=
11.23 Լ	Լ փո-	=
11.25 կրպագութիւն	=	=
12.12 յամենեցունց	յամե-	կըրպագութիւն
12.13 ի մշտըն-	ի գոյն	=
12.14 վասն	յանմատոյցն	=
12.15 խոնարհագու-	խոնար-	=
12.16 մատուցանեմք	մատու-	=
12.17 մատու-	զպաշտօնն	=
12.18 ող ոքել	Լ զնոսա	=
12.26 երկրպագութիւն	երկրպագութի	=
193.26 Հոգևով	=	=
257.26 կրեաց: Եւ	=	Լցին
285.26 կեր Լ	=	կրեաց: կերա-

ե) Ս. Ղազարի 1826, 1850 եւ 1863 թթ. տպագիրների բնագրային տարբերություններ

Տպ. 1826 (Վ)	Տպ. 1850 (Վ ¹)	Տպ. 1863 (Վ ²)
6. 3 զբբօբն	զբբօբ	=
8. 3 գանձին	=	անձին
8. 3 խորհիցէ	=	խորհցէ
12.13 ի Գոյն	ի գոյն	=
20. 5 երբէք (ալեհուր)	=	երբէք (ալեհուր)
26.10 շինողքէ *	շինողքէ *	=*
27.14 նիւթ	=	նիւթոյ
33.13 չէր անարար	=	էր անարար
36.14 ի վերա (169.19)	ի վերայ	=
37.13 որդոց	որդւոց	=
39. 2 սիրելոյն	սիրելւոյն	=
43. 4 այնպիսոյն	այնպիսոյն	=
43.18 եւեթ (միշտ)	ևեթ (միշտ)	=
45. 5 եւ (միշտ)	և (միշտ)	=
45.25 մի' թէ (միշտ)	=	մի' թէ (միշտ)
45.26 գտէրն	գտէ՞րն	=
48.22 թշնամոյն	թշնամոյն	=
49. 3 թշնամի	թշնամին	=
52.26 յերբայեցւոց	յերբայեցւոց	=
61. 6 իմաստնոյն	Իմաստնոյն	=
64.11 բաբիւացիքն	Բաբիւացիքն	=
72.13 զշունչ	=	զշունչ (վրիպ.)
75. 9 միւսանգամ	միւս անգամ	=
85. 7 հոգոյն	հոգւոյն	=
94.11 որդւոյ	Որդւոյ	=
94.23 Մովսէսի	Մովսէսի	=
95. 6 Մովսէսի	Մովսէսի	=
95.18 ցուցանէր	=	ցուցանէ
103.25 եթովպացւոց	Եթովպացւոց	=
104. 5 եթովպացւոց	Եթովպացւոց	=
110.27 Սնդ	Սնդ	=
115.10 որդոցն	=	որդւոցն
139. 8 զսակաւիկ ինչ	զսակաւիկ ինչ	=
141. 3 լինելույ (վրիպ.)	լինելույ	=
148.18 Լ կէսքն	Լ կէսք	=
151.23 Էհար	Էհար	=
172.17 անպիտանութեանն	անպիտանութեան	անպիտանութեանն
180. 7 յեղեղու	=	յեղ յեղ ու
190.24 ի Հոգւոյն	ի Հոգւոյն	=
196. 7 անհամութիւնն	անհամութիւն	=
207.10 Էլէա	Էլէա	=
207.13 վասնորոյ	=	վասն որոյ
207.27 *ελαία. **μερισμός	*Ε'λαία. **Μερισμός	=
209. 7 շնչաւորաց	=	շնչաւորաց (վրիպ.)
217.18 չէն մարթ	=	չէն մարթ
221. 2 գորութիւն ինչ ինչ	=	գորութիւն ինչ

* Բոլոր ենթակայական գերբայները -օ- գրով են Վ-ում, -ո- -ով միւս երկու տպագիրներում. էլ չենք նշում:

234.23 յումեքէ	=	յիմեքէ
239. 1 արդ մի՛ ոք	այլ մի՛ ոք	=
244. 1 յերկինս	=	յերկրինս
254. 5 արկեալ	անկեալ	=
257. 7 խորնել	=	խորել
257.21 խորնելդ	=	խորելդ
261.27 *օսրաօս	*Օ՛սրաօս	(չիֆ)
261.27 **ἔως τρίτον ὄυραօս	**Ἐ՛ως τρίτον οὐραօս	
280. 1 մարդոյ	մարդոյն	=

4. Եղիա Փէչիկեանի հրատարակութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, 1926 թ. (Վ⁵)

Նոյն անուանաթերթը, նոյն «Ձեկուցումն» եւ նոյն բովանդակութիւնն ունի, ինչ որ վենետիկեան առաջին հրատարակութիւնը, եւ Գ. տպագրութիւն է համարուել անուանաթերթի վրայ, իսկ իրականում 5-րդն է Ս. Ղազարում: Թէեւ այստեղ նշուած չէ, սակայն հրատարակիչը յայտնի բանասէր Եղիա Փէչիկեանն է, ինչպէս ինքն իսկ յայտնել է 1928-1929 թթ. լոյս ընծայած իր յօդուածում, ուր ասուած է նաեւ. «Եղնիկի Եղծ աղանդոցի նորագոյն հրատարակութեան ընթացքին աչքի առջեւ ունէինք Ձմիւռնիոյ 1762ի տպագրութիւնն եւ Աճառեան Գ. Տէր Մկրտչեանի կազմած «Քննութիւն եւ համեմատութիւն Եղնիկայ նորագլուխ ձեռագրին» [գործը . . .]: Յատկապէս քննեցինք յարակից այն աշխատութիւնները որոնք մեզի ձեռնտու կրնային ըլլալ Եղծ աղանդոցի բնաառաջարկած սրբագրութիւնների, բայց, ասել է. «Հազիւ տասնհինգի կը հասնին մեր կատարած դէն. մնացածն զգուշութեամբ առինք Աճառեանէն՝ յեցած իր ձեռագրի հեղինակութեան եւ բաղդատական ապացոյցներուն»⁸⁷: Լ. Մարիէսն իր քննական հրատարակութեան ներածականում, էջ 6, այս տպագրի մասին ասել է հետեւեալը. «Նախորդների համեմատութեամբ ունի աւելի լաւ եւ քիւննեք» իր յօդուածում⁸⁸ Ե. Դուրեանը խստութեամբ քննադատել է այս տպագիրը, որով հետեւ ուղղութիւններու [իմա՝ սրբագրութիւնների] մասին», եւ դրանում նկատելի են «անուշադիր վրիճարում սրբագրուած բառը բառացանկում մնացել է նախնիկը, ինչպէս բնագրում՝ հեշմակապաշտ շուշտ՝ յանդուգն ուղղագրութիւններու լայն ասպարէզ չտալ, երբ մանաւանդ հին հայ հեղինակի ուած բառեր. ՄՄ.] գտնուին, որոնք կրնան մեզի անծանօթ բառեր ըլլալ. բայց մարդկային անուած մէջ անգամ՝ որ չափազանց կը գտնենք անոնց բնա՛ւ չդպչելու երկիւղածութիւնը, սա առարկուկացութիւնը հետեւեալն է. «Լաւ կ'ըլլար գէթ հաւանականագոյն սրբագրութիւնները նշանակել, զոր օրինակ բնագրին անձնուր էջերուն տակ» (էջ 405):

Ինչպէս սպասելի էր, Ե. Փէչիկեանը խորին յարգանքով պատասխանեց «Եղնիկի հարցը Նախեան նուաճ է, թէ ինչպէս Ե. Դուրեանը «մատի փաթեթոց» է դարձրել «Եղնիկի վերջին տպագրութեան մէջ սրբագրած վերջին հրատարակութիւնը» (էջ 501): Ահա Ե. Փէչիկեանի կարծիքը բնագրի սրբագր-

⁸⁶ «Բագմավէպ», 1928, էջ 289.
⁸⁷ Ն. տ., էջ 290.
⁸⁸ Նախ՝ «Սիոն», 1930, էջ 208-215, ապա՝ Երկեր, 2, էջ 403-416, որ օգտագործում ենք (համեմատելով նախորդի հետ, որով հետեւ վերիպակներ յայտնաբերուեցին):

թեան վերաբերեալ. «Ամէն հաւանական կամ բանաւոր կարծուած սրբագրութիւնները բնագրի մէջ անցընելը յանդուգն գործ է, եւ հոս համամիտ չեմ Ս[րբագրան]ին որ կ'ուզէր փութալ յապտուրակի [կողոպտելով, յափշտակելով] բնագիրներ վերակերտել» (էջ 501): Սրբագրանի տեսակէտն այս մասին մէջբերեցինք վերեւում: Կարգացինք նաեւ Ե. Փէչիկեանի խոստովանութիւնը, որ 1926-ի (թեւեւ մի փոքր հապճեպ) տպագրութիւնից յետոյ ուզում էր «լաւագոյն տպագրութեան մը պատրաստութիւնը տեսնել ապագային համար»: Թէեւ հրատարակիչը չի յայտնել, սակայն այդ հրատարակութիւնը աւելի շուտ 1863 թ. բնագիրն է, քան 1826-ի: Բնագրական տարբերութիւնները թիւրիմացութիւնների տեղիք են տուել:

5. Գարեգին Եպիսկոպոս Սաչատուրեանի հրատարակութիւն, Բուէնոս Այրէս, 1951 թ. (Խ)

Բովանդակութիւն.

Անուանաթերթեր.

- 1-ին՝ «Եղնիկայ ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ Ի Չատագովութիւն Աստուծոյ ճշմարտի».
- 2-րդ՝ «Եղնիկ, ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ, 1951, Պուէնոս Այրէս, տպ. Արարատ».
- 3-րդ՝ 1-ինի կրկնութիւն:

«Երկու խօսք», էջ 6-2:
 «Ներածութիւն», էջ 1-2:
 Բուն բնագիրը, էջ 1-148:

Արեւմտահայերէն քարգամուտքիւն, էջ 1-148, բնագրի հանդիպակաց աջ, երբեմն ձախ էջում (էջ 54, 76, 101), էջերի նոյն թուահամարներով:

Բնագիրը եւ թարգմանութիւնը բաժանուած են վերնագրուած գրքերի, իսկ սրանք՝ վերնագրուած եւ անվերնագիր գլուխների.

- «Գիրք առաջին, ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ ՀԵԹԱՆՈՍԱՑ», 28 գլուխ, էջ 1-54:
- «Գիրք երկրորդ, ԵՂԾ ՔԵՇԻՆ ՊԱՐՄԻՑ», 28 գլուխ, էջ 55-97:
- «Գիրք երրորդ, ԵՂԾ ԿՐՕՆԻՑ ՅՈՒՆԱՑ ԻՄԱՍՏՆՈՑ», 17 գլուխ, էջ 98-120:
- «Գիրք չորրորդ, ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅ ՄԱՐԿԻՈՆԻ», 16 գլուխ, էջ 121-148:

ա) «Երկու խօսք»-ում հրատարակիչն ափսոսում է, որ եկեղեցական իր ծանր պաշտօնի պատճառով չի կարողացել, հակառակ իր «առաջադրութեան», ներածականում «տալ ամփոփումը ցարդ կատարուած ուսումնասիրութեանց՝ Եղնիկի սոյն թանկագին ձեռնարկի»⁸⁹ մասին». ուստի բաւակատարուած ուսումնասիրութեանց՝ Եղնիկի գերմաներէն թարգմանութիւնը Միք. Շմիդի կողմից, Գ. Տէրբարուել է այստեղ նշելով Եղնիկի գերմաներէն թարգմանութիւնը Միք. Շմիդի կողմից, Գ. Տէրբարուելի եւ Հր. Աճառեանի Քննութիւնը, Գ. Գալէմբեարեանի Նորագոյն աղբերքը, Լ. Մա-Մկրտչեանի եւ Հր. Աճառեանի Քննութիւնը: Նա «աչքի առջեւ» ունեցել է նաեւ Ե. Դուրեանի եւ Գ. Գալէմբարեանի բանավիճական յօդուածները գերմաներէն թարգմանութեան առթիւ եւ Մ. Աբեղեանի գրածը Եղնիկի մասին իր «Հայոց հին գրականութեան պատմութեան» առաջին հատորում:

բ) «Ներածութեան» մէջ, որ ստորագրուած է Գ.Ն.Տ. [Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնցի Սաչատուրեան] (որ Երեւանում դարձրել են «Սաչատուրեան»), հրատարակիչը իւրովի պատմել է, ինչպէս ուրիշներ, քաղելով Կորիւնից եւ Սորենացուց, Եղնիկի կեանքն ու գործունէութիւնը, ճիշտ է բնութագրել նրա երկը, չխնայելով անձնական ենթադրութիւններ եւ գովասանքներ: Անցողակի խօսել է անդրանիկ հրատարակութեան⁹⁰, միակ ձեռագրի, Եղնիկի աղբիւրների, երկի թարգմանութիւնների եւ մի քանի ուսումնասիրութիւնների մասին, յիշեցնելով ուրիշների միայն վերնագրերը. խօսել է անդրանիկ հրատարակութեան⁹⁰, միակ ձեռագրի, Եղնիկի աղբիւրների, երկի թարգմանութեանը: Նրա այս բոլորը վկայում է, որ հրատարակիչը տեղեակ էր երկին վերաբերող գրականութեանը: Նրա կարծիքով՝ «Սիւս է Հ. Գալէմբեարեանի քննադատական կեցուածքը Եղնիկի գիրքին դէմ» (էջ 148): Սուքը այն մասին է, թէ Եղնիկն ինչպէս է օգտագործել որոշ աղբիւրներ: Նա գտնում է, թէ այս հարցում գովելի է Լ. Մարիէսի վերաբերմունքը, որը նշելով կամ բացայայտելով Եղնիկի աղբիւրներ՝ նրան շատ բարձր էր գնահատում: Գ.Ն.Տ.-ն իր հրատարակութիւնը կատարել է «աչքի

⁸⁹ Տարօրինակ է այս բառով կոչել Եղնիկի երկը:
⁹⁰ Ճիշտ չեն կարող լինել այս հրատարակութեան մասին նրա այն ասածները, թէ Ե. Նախեանը «յաջող կերպով» կատարել է անհրաժեշտ սրբագրութիւնները Ձմիւռնիայի հրատարակութեան մէջ (էջ 6):

դ. Նորայրի բնագրի կիսատ մաքրագրութիւն

«Եզնիկայ Վարդապետի Կողբացոյ ճառք Ընդդէմ Աղանդոց», սկիզբի թուականն է 17 դեկտեմբեր 1896. մաքրագրուած, համարակալուած մեծադիր 108 էջ, անկազմ թերթեր: 1-ին էջի ձախ անկիւնում նշուած են բնագրի հիմք երեք տպ-ները՝ Ա, Բ, Գ, ձախ լուսանցքում նշուած են Բ-ի էջերը, որոնց վերջին տառի վրայ Նորայրը ձեռագրում գրել է «ծունկ» նշանը: Այսուհետ է տպ. էջ 5-ից (կամ բնագրի սկիզբից) եւ հասնում է էջ 118, տող 15-ի «Այլ ասեն», որից յետոյ գրուել է միջակէտ ձեռագրի 3-րդ տողում, ու բնագիրը կամ էջը չի շարունակուել. այս մաքրագրութիւնը, որ համընկնում է սեւագրութեան հետ, Թղթ. 4:օ. 7:1-5-ում է, Վաւ. 7:2 եւ 7:3: Ենթադրում ենք, որ շարունակութիւնը կորել է, բայց Նորայրը կազմել էր ամբողջ բնագիրը: Վերելում մեր նշած նա- մակում նա Հ. Գ. Գալէմբարեանին գրել է Եզնիկի բնագրի մասին. «Իմ մտածութիւնս էր դիմել յիւր աւարտմանն առ Մեծ. Ոմբագրութիւն Հանդիսիդ եւ խնդրել որ քանի մի անգամ հրատարա- կէիք (հատուցմամբ ծախսուցն) զծանուցումնս՝ որով պիտի խնդրէի 1500 փրանկ իմ Եզնիկայ համար, այն Եզնիկայ՝ զոր Վենետիկոյ Միսիթարեանք կը վաճառեն 1 (մի) փրանկի: Այժմ կը հարց- նէք թէ կարելի է՞ որ հրատարակեմ ի Հանդիսիդ զիմ քննութիւնս զԵզնիկայ: Յայտնեցի Ձեզ զիմ ծածուկս. Ձեզ կը մնայ՝ արգահատելով արհամարհելոյս, անարգելոյս, ծաղրելոյս, կործանելոյս՝ խորհուրդ տալ ինձ թէ ի՞նչպէս վարուիմ»: Նամակը գրելու կամ յաջորդ տարին այսպիսի ծանու- ցում լոյս չի տեսել ՀԱ-ում: Մենք աշխատանքի աւարտուածութեան համոզումն ունենք, թէ եւ 1911 թ. մարտի 16-ին Հ. Ներսէս Ակիմեանին գրած նամակում (Վիեննայի Միսիթարեան դիւան) նա ասել է. «Փափաքս է իմ կենդանութեամբս հրատարակել զերկրորդ տպագրութիւն «Կորիւն Վարդապետի», զ«Նախնիք», զ«Բառք Գաղիանոսի», «Բառք Գերթողականք», «Որոնեացոյ Աշ- խարհացոյց»», առանց Եզնիկին յիշելու. բայց այս մոռացումը նշանակութիւն չունի, քանի որ նա չի յիշատակել իր բոլոր անտիպ գործերը, որոնցից է հսկայական «Բառագիրք ստորին հայերէնի» վեց հատոր գործը: Եզնիկի բնագրի մաքուր օրինակի էլատակերում, ինչպէս սեւագրութեան մէջ, նշուած են տպ-ների մերժուած ընթերցումները, իր դիտողութիւնների համարները, վերջինը՝ 261, սակայն նրա դիտողութիւններից մնացել են միայն 1-ինի մի տարբերակն ուրիշ թղթապա- նակում եւ ընդհանուր սրբագրութիւններ կազմող դիտողութիւններ (տե՛ս ստորեւ):

«4 Մարտ 1897. Դիտողութիւնք. նշանակեալ երեսն են ըստ ԲԳ տպագրաց» վերտառու- թեամբ 2 էջ, որ սոսկ 1-ին դիտողութեան 1-ին տարբերակն է բնագրի սկզբի կարասցէ բայաձեւի իր կարիցէ փոփոխութեան վերաբերեալ, ըստ որում 2-րդ էջում միայն 4 տող կայ (Թղթ. 8:օ. 22:1-47, Վաւ. 22:3). հաւանաբար դիտողութիւնների մաքրագրութիւնն ամբողջութեամբ ուրիշ տեղ էր, քանի որ սա լոկ սեւագրութիւն է, եւ էջը չի շարունակուել: Բացի այդ՝ այս վաւերագրի հետ է դրուել մի թերթ, որի վրայ Նորայրը գրել է իր բն. վերնագիրը. «Մասն երկրորդ. Դիտողութիւնք. 7 Մարտ 1913», երբ Վենետիկում էր. անուանաթերթը համարակալուած է «1» նրա իսկ ձեռքով: Այս դիտողութիւնների մաս են կազմում հետեւեալ նշումները եւ գրատուները:

- Սեւագիր գանազան նշումներ՝ Թղթ. 8:օ. 25:1-66, Վաւ. 25:4.
- ա. «Եզնիկ», 1 էջ ընդհանուր բնութագրում եւ «Պայման յորում հասած է առ մեզ Եզնիկայ բնագիրն», համարակալուած էջ 1-4, որ լրիւ տե՛ս ստորեւ տպուած, եւ որի շարունակու- թիւնն է՝
- բ. «Պէտպէս ուղղագրութիւնք բառից ի տպագիրսն ԱԲԳ», այսինքն՝ 1763, 1826 եւ 1863 թթ. տպ., էջ 4-22:
- գ. «Եզնիկ. Յիշելիք եւ ջնջելիք», համարակալուած 5 էջ:
- դ. «Հայագիտական հրատարակութիւնք Վիեննայի Միսիթարեան Հարց. Գննութիւնք Եզնիկայ». Առաջին Դաս. ա տպ. 1866. - ք տպ. 1891-1893. Մասն Առաջին. Միտալ ըն- թերցումով բնագրաց. 7 Մարտ 1913», 3 էջ, համարակալուած, 3-րդ էջում՝ միայն 6 տող. երկար վերնագիր, քիչ աշխատանք, որ գուցէ հիւանդութեան կամ այլ պատճառով չի շարունակուել:
- ե. «Եզնիկ. Ուղղութիւնք ի տուչութեմ Ա տպագրին» [Չմիւռնիա], 1 էջ:
- զ. «Եզնիկ. Իմ ուղղութիւնք», 3 էջ:
- է. «Եզնիկ. Ուղղութիւնք Նոր Հայկզ.», 8 տող:

- ը. «Ուղղութիւնք Հ. Գրիգորիս Գալէմբարեանի», 7 տող:
- թ. «Կարգադրութիւն երեսաց ձառիցն Ընդդէմ Աղանդոց Եզնիկայ Կողբացոյ», 3 էջ, 3-րդում՝ մի քանի տող:
- ժ. «Փորձ կարգադրութեան 5-241 երեսաց Եզնիկայ», 8 էջ, վերջինում՝ 3 տող:
- ժա. «Ընդդէմ իմաստնոցն արտաբնոց», ա-թ էջ, ուր բնագիրը վերադասաւորելու մտադրու- թեամբ արտագրել է եւ երբեմն հայերէն գլխագրերով համարակալել հատուածներ Վ-ի հետեւեալ էջերից՝ 199-201, 218, 201, 191-193, 187-198, 185-187, 211-214, 219-220, 193, 214, 216, 215, 216: Նոյն նպատակով քննարկուած հարցերը նշել է, իրենց էջերով, Համարակալուած երկու էջի վրայ:

ե. Նորայրի կարծիք բնագրի եւ տպագիրների մասին (Թղթ. 8:օ. 25:1-66, Վաւ. 25:4) «Եզնիկ»

«Եզնիկայ ոչ առաջին տպագրութիւնն (Չմիւռնիայ) եւ ոչ երկրորդ եւ երրորդ [իրականում 4-րդ] տպագրութիւնքն (Վենետիկոյ, 1826, 1863) հաւատարիմ հրատարակութիւնք կարեն կոչ- ուել. երեցունց մէջ ալ պակաս չեն կամայական փոփոխութիւնք. աւելի պատկառանքով պէտք էր [վերա]բերուիլ Ոսկեգարու մի գործոյ:

«Եզնիկայ մատենիկն շատ խառնակ է, բայց զայդ խառնակութիւնն կարէ նշմարել միայն ուշա- դիր ընթերցողն, որ կ'ընթեռնու բան հասկանալոյ համար:

«Դժուարին է յարդարել այնպիսի մատենիկ մի ուր կրկնութիւնք պակաս չեն. զոր օրինակ Յորայ փորձանքն (թէ Սատանայ Աստուծոյ թոյլտուութեամբ) կը յիշուի երեք անգամ՝ 77, 87, 181. խոզից երամակն՝ 87, 181. Յուդայ Սկարիովտացի՝ 87, 181. մին ի հազարամեայ, եւ մեւսն առժա- մայն՝ 124, 126:

«Յայտ է թէ բազում ուրեք թերի է Եզնիկ. «Ընդ նմա (Պատոնի) իսկ մարտիցուք» կ'ըսէ 241, եւ ոչ ինչ կը մարտնչի. - «Այս ասացաւ» կ'ըսէ վասն տղայոց անմեղաց, յերես 82, եւ ոչ ինչ ըսաւ. վասն որոյ եւ Չմիւռնիայ տպագիրն (կամ Չ օրինակն) կը փոխէ գայն (Չմ. 72) Արդ՝ ասացուք, իսկ Բ եւ Գ (կամ իրենց Չ օրինակն) [որ գծով ջնջել է] նոր գլուխ կ'ըսկսին յերես 82 (ԲԱ), մինչ- դեռ այդ ԲԱ հատուածին վերջն պէտք էր ըլլար, եւ ոչ սկիզբն: - Յերես 71 ԲՏ, ԱՏ (Չմիւռնիայ) ղեռ այդ ԲԱ հատուածին վերջն տկար էր, զորս թերեւս իբր անիմաստ՝ դա ԲՏ ի բաց թողեալ է, որ- յերես 62, աւելի ունի Ապալէն տկար էր, զորս թերեւս իբր անիմաստ՝ դա ԲՏ ի բաց թողեալ է, որ- պէս ի Մտթ. Ուս. մոլորութեանց քոյն, փոխ. ընթեռնույ մոլորութեան քոյն, տպ. Երուս. ի բաց թողու գճոյն իբր անիմաստ. եւ էմին որ ի Յոհ. կթ. եւ ի Մ. Կաղ. ի բաց կը թողու երկու պատարիկս իբր աւելորդ» [երեք աղբիւրների ստոյգ տեղերը՝ սպիտակ են մնացել]:

«Պայման յորում հասած է առ մեզ Եզնիկայ բնագիրն [Սեւագիր, Թղթ. 8:օ. 25:1-66, Վաւ. 25:4]

20 Մարտ 1897

«Ամսօրեայ Հանդիսին մէջ յետ համեմատելոյ զՍրբոյն Մեթողիտի Վասն անձնիշխանութեան գրութիւնն ընդ բանաբաղութիւնս Եզնիկայ՝ կ'ըսէ Մեծ. Հ. Գրիգորիս Գալէմբարեան ի նմին ուսումնաթերթի, 1894, Սեպտեմբեր, յերես 277 ք. «Համեմատութիւնս կը ցուցնէ՝ որ Եզնիկայ գործոյն ձեռագրին այնչափ աղաւաղեալ է, որչափ կը կարծուէր առ հասարակ եւ ինչպէս մեր ուրիշ մատենագրաց ձեռագրաց վրայ կ'երեւայ: Գանի մը նախդիրներ, քանի մը բառեր ինկած են ձեռա- գրէն, որոնք կրնան նաեւ տպագրութեան միջոցին յառաջ եկած ըլլալ: Նստեալութեան տեղ մը գրէն, որոնք կրնան նաեւ տպագրութեան միջոցին յառաջ եկած ըլլալ: Նստեալութեան տեղ մը միայն կ'երեւայ, որ անշուշտ ընդօրինակողի մը կը վերաբերի: Առ հասարակ բնագիրը գրեթէ անա- րատ մնացած է. վասն զի նիւթն այնպիսի է՝ որ սակաւաթիւ ընթերցող, հետեւաբար եւ ընդօրինա- կող ունեցած է» [Գլ էջ 86]:

«Հ. Գրիգորիսի ըսածներն եթէ կը պատշաճին Եզնիկայ 19-58, եւ 236-239 երեսներուն (ըստ ԲԳ տպագրաց), ուր Ընդդէմ Աղանդոց ձառերուն միայն զփոքրիկ մասնն կը կազմեն, սակայն

¹ [9] Տե՛ս [Հանդէս ամսօրեայ, 1893, էջ 289-294, 345-351, 359-366. 1894, էջ 6-11, 87-90, 277-278. 1896, էջ 270-273. Նորայրը տեղ է թողել մեր լրացում այս տեղ եկութեան համար. ՄՄ.]:

մատենան՝ իւր ամբողջութեամբ՝ բաւական այլապէս եւ խանգարեալ կ'երեւայ ինձ: Կարգաբանութիւնն էնաւ չեմ տեսներ, մասնաւորապէս 5-241 երեսներուն մէջ, այլ անհուն խառնաբնորոշութիւն՝ որ յառաջ եկած է սկզբնազիր օրինակին թերթերուն յոմանց յետեւյառաջութենէն, (ինչպէս վաղ ըսած եմ ի Գննաւիճի, Պրակ Բ, Ստորհոյմ, 1887, յերես 3), եւ յայլոց կորստենէն, զի բազում ընդհատութիւնք (զղ. lacunes) եւս կը նշմարուին՝ աստ եւ անդ թուղթ ինկած ըլլալով: Լի են նա եւ սխալ ընթերցուածք, յոռի կիտաղրութիւնք, եւ քերականական վրիպակք. թող զմանունս, զոր օրինակ երբ ի մի եւ ի նոյն տեղուոյ զմի եւ նոյն բառ կը գրէ տարբեր կերպերով, նոյնպէս եւ Վեներականքն՝ որ կամայականութեանց եւ քմահաճութեանց կողմանէ գոգցես թէ ուզած չեն ի վայր գտանել [տողամիջում՝ «մնալ»] քան զիւրեանց նախորդն: Այս ամենայն անարժան է լեզուի կանոն եւ օրինակ սահմանեալ դասական բնագրի:

«Ջետեյառաջութիւնս Եզնըկայ Ճառերուն փորձած եմ կարգադրել մասամբ յետուսէ մատենիս. զընթերցուածսն որ յայտնապէս սխալ են ըստ իս՝ ուղղած եմ ի կարգին, զերկբայականսն թողլով անփոփոխ, եւ Դիտողութեանց մէջ կը հաստատեմ պատճառաբանութեամբ զիմ ուղղութիւնս, ուր կը յայտնեմ նա եւ զիմ կարծիս ի մասին երկբայականացն: Աստ կ'ուզեմ հաւաքել զպէսպէս ուղղաբարութիւնս բառից, որ ընդօրինակողաց եւ հրատարակչաց վերագրելիք են, եւ ոչ մատենագրին. քանզի Եզնիկ թէպէտ եւ յոյժ սիրող է պէսպիսութեան, ինչպէս պիտի տեսնենք, բայց ոչ մինչեւ յայն աստիճան՝ որ արհամարհելով զհաստատուն ուղղագրութիւնն՝ ստէպ տառ ընդ տառի փոխանակած ըլլայ պարզապէս առ ի խորշի ի միակերպութենէ. «Մանկական է այդպիսեօք զուարճանալ», ինչպէս կ'ըսէ Հ. Արսէն Բագրատունի, Ջարգ. Քեր. երես 643, ծան. 2:

«Հետագայ տախտակին մէջ ջանացած եմ ըստ կարի միօրինակութեան վերածել զայն բառերն որ կերպակերպ ուղղագրութեամբ կը գտնուին յ'ԱԲԳ տպագիրս. կ'ըսեմ ըստ կարի, քանզի անհնար է ինձ օգտել ի հին գրչագրաց որպէս զի ստուգեմ զհարազատ գրութիւնսն, եւ չունինք ո՛չ Քերականութիւն եւ ո՛չ Բառարան՝ որ փոյթ ունեցած ըլլայ ճշդել ու սահմանել թէ ո՛ր գրութիւնն է կամ թուի բուն եւ վաւերական, եւ ո՛ր խոտելի եւ խորշելի»:

գ. Նորայրի ընդհանուր սրբագրութիւններից
«Պէսպէս ուղղագրութիւնք բառից ի տպագիրսն ԱԲԳ»

(Չտուչութիւնս Ա տպագրին կը նշանակեմ անդ միայն՝ ուր կ'օտարանան ի ԲԳ տպագրաց:)

«Իիտ. 27.

«Աձ⁹⁴ եւ Ուաձ վերջիւ բայանունք². ԲԳ կը գրեն յերես 18, «Առ այսպիսի ճշմարիտ ասացածս անպատշաճ հարցումս մատուցանեն». - յերես 31, «Ի կիտոյն նորա արար բարի արարումս³, եւ զկէսն նորա եթող նոյնպիսիս (Գ սխալ՝ նոյնպիսի)՝ յապականութիւն լինելոյ բարուք արարածոցն». - յերես 26, «Քարինքն զոր ի շինածսն⁴ յաւրինեն». իսկ յերես 30, «Յորժամ ի քարանց ոք շինուածս առնիցէ»: Ուղղե՛ք ասացումս, արարածս, ի շինուածսն, ըստ Ա. 14, 25, 21: Եզնիկ - անձ վերջիւ կ'ըսէ միայն Արարած (բազում ուրեք) եւ կազմած, ԲԳ, 39, 236 երկրցս. աւելի յաճախութեամբ -ուած վերջիւ, (բաց ի վերոյիշելոցն Ասացում եւ Շինում), գործում, ԲԳ, 32, 173. Խառնում, ԲԳ, 10 երկրցս, 11. Հարցում, ԲԳ, 18, 260. Յաւելում, ԲԳ, 102 երկրցս. Յարիմում, ԲԳ, 121. Այառում, ԲԳ, 22. Ասացում, ԲԳ, 233. Ստեղծում, ԲԳ, 173, 234:

«Իիտ. 117.

«Առ յապա, Ա, 48 = Առ յապայ⁵, ԲԳ, 56. երրորդ մի եւս՝ Առ ապա⁶, Ա, 125 = ԲԳ, 234:

⁹⁴ [Վերջածանցների առաջ գծիկը մենք ենք դնում: Տրուած այս եւ միւս օրինակներում Նորայրը սովորաբար ընդգծել է միայն տառեր ու մասնիկներ, երբեմն էլ ամբողջ բառը. մենք ընդհանրացրինք ամբողջական ընդգծումը: Նրա էջատակի ծանօթագրութիւնների համարները զարձրիք հերթական:]

² Զրգ., երես 690: [Աս կամ Զարգ. Քեր. = Հ. Արսէն Բագրատունի, Հայերէն Բերականութիւն ի պէտս գարգացելոց, Վենետիկ, 1852:]

³ «Արարումս» եւ Գալէմբ., Հանդէս, 1893, Դեկտեմբեր, 361ա:

⁴ «Ի շինածսն» եւ Գալէմբ., Հանդէս, 1893, Նոյեմբեր, 350բ:

⁵ «Առ յապայ» եւ Թոռն. ա եւ բ 18. եւ Գալէմբ., Հանդէս, 1894, Մարտ, 187բ:

⁶ «Առ ապա» եւ Թոռն. ա 41 (չիք յ'բ.) ուր ի 26^o ծան. գրի առ յապա:

Յերկոսեան եւս տեղիսդ Գրե՛ք Առ յապա, որ լաւագոյն թուի ինձ: Ապայք («Յապայսն զգացոյց աներոյն իւրոյ». Սոր. Բ, ձք» 347) եւ Առ յապայք («Յիշեա՛ զառայապայսն», Սիրաք, ԻԸ, 6) բառերէն չի հետեւիր որ պէտք ըլլայ գրել Ապայ, Առ յապայ, զի աւասիկ կը գրենք նորա, նոցա եւ «քան զնորայն» Եզնիկ, 77, 271. «նորայոցն ցանկանայցեն» 271. «քան զնոցայն» 117: Իսկ Առ ապա գրութեան հանդիպած չեմ յայլ գիրս. այլ կամ Առ յապա (Ոսկ., Եփես., Ի. Յորդ., 894. Եփր., Համաք., 16. Մանդ. Ժէ, 133). «Առ յապա ժամանակ» Ոսկ., Կողոս., 2, 590 երկրցս. Ոսկ., Ես., է, 75. կամ Առ յապայ (Բ Պետր. Բ, 6):

«Իիտ. 5.

«Աւ- եւ Ով- ԲԳ կը գրեն երկրցս բաւանդակ յերես 8, 35 (տող 13), 234, եւ մի անգամ բովանդակ յերես 35 (տող 9), մինչդեռ Ա կը գրէ սամէնուրեք բովանդակ, 4, 29 երկրցս, 215: Գրե՛ք միապէս բաւանդակ՝ որ հնագոյն գրութիւնն թուի, ի բաւ արմատոյն, որում կ'երաշխաւորէ Բաւեմ, Անքաւ, Անքաւական բառերու խոնարհագոյն զարուց մէջ փոխուելն ի Բովեմ, Անքով, Անքովական, ինչպէս եւ Բնով փոխանակ Բնաւ⁷. ա. «Հողն աւրհնութեան նմա մի՛ բաւեցէ», Վճիռ գրեալ ի թուին ՄՂԳ = 844, առ Ստեփանոսի Ուուպ., ԼԹ, 153, զոր Նոր Հայկդ. ի Բովամ կը գրէ բովասցէ. տես Բովեմ եւ ի Միս. Հերացի, Լ, 84. եւ այլն. բ. «Ոչ բաւեաց եւ ոչ եմուտ ի վանս» Վն., Ա, 627, բ թրգմ. զոր Նոր Հայկդ. ի Բովեմ կը գրէ բովեաց: Տես բաւանդակ ի Սեբեր., Թ, 178: Բաւանդակիմ ի Մանդ., ԺԵ, 121: Տես եւ զայլակերպ գրութիւնսն Բովեմդակիմ ի Մամբրէ, Ի Յար. Դագ., 75. - Բաւանդակ յիւստանէս, Բ, 133:

«Բ եւ Պ. Ըմպան, Ա. 160 (ուր մեկնի Շրթունք). Ըմբան, ԲԳ, 176: Զայս բառ որ յայլ գիրս չգտնուիր եւ որոյ նշանակութիւնն որոշ չէ՝ Գրե՛ք ըստ ԲԳ. եթէ ստուգուի որ է յ'Ըմպեմ բայէ, լաւագոյն է գրել Ըմպան ըստ Ա:

«Գ եւ Կ. Անգ, Ա. 120 = ԲԳ, 135. Անկ, Ա, 244 = ԲԳ, 267: Թողի աւփոփոն, ինչպէս անխտիր կը գրուին եւ Յանգ ու Յանկ, հանդերձ անանցիւքն: Իսկ զ'Գայթակեցուցանեմ, Ա, 260 = ԲԳ, 285. Գայթակեմ, Ա, 260 հնգրցս, 261 = ԲԳ, 284, 285 չորրցս, 286. Գայթակդուքիւն, Ա, 93, 235, 260, 261 = ԲԳ, 105, 258, 285, 286. ԱՄԷՆՈՒՐԵՔ Գրե՛ք Գայթակեցուցանեմ, Գայթակեմ, Գայթակդուքիւն. զի կազմութիւն բառիցս է ի Գայթ եւ Իրի կամ Գիլ (= Գար) արմատոց. (տես Զրգ. Քեր., երես 658, ծան.): Զ'Մնկիմ, Ա, 76 = ԲԳ, 86, որ յայլ գիրս կը գրուի եւ Մնգիմ, թողի անփոփոխ:

«Գ եւ Բ. Թագուցանեմ կը գրեն երկրցս Ա, 40, 53 = 46, 61. Թոնե՛ք ի Թագուցանեմ, ինչպէս կը գրուին սովորաբար Թագչիմ, Թագուստ, Թագստոց, Թագաբարաբարոց: Ա, յերես 5 կը գրէ ընդհակառակն Թագրմանիմ՝ որ յայտնի սխալ է փոխանակ Թագրմանիմ, ինչպէս ունին ԲԳ, 9: Զրգ. Քեր., երես 654, յօդ. 1435, խառն կը գրէ. «Թագչիմ, Թագչիմ, Թագրմանեմ, Թագրմանեմ»:

«Գառեմ եւ Գայռեմ. Ա՝ յերես 119 կը գրէ Գառեիմ, եւ յերես 126 Գայռացիմ. նոյնպէս ԲԳ կը գրեն Գառէիմ, Գայռացիմ, 134, 141: Գրե՛ք ՄԻԱՊԷՍ Գայռէիմ յերկոսեան եւս տեղիսդ, զի Գայռացիմ՝ Ուղղելի է ըստ իս Գայռայիմ = Գայռէիմ. տես լիով ի Դիտ. - : Իսկ զ'Անագորոն ԲԳ, 49, զոր Ա յերես 43 կը գրէ Անագորոն, Թողի ըստ ԲԳ, թէ պէտ եւ սովորական գրութիւնն կը տեսնուի Անագորոյն, յորմէ Անագորոնագոյն ի Կիւր., Կոչ., ԺԵ, 3431, եւ Անագորոնուքիւն կամ Անագորոյնուքիւն յիսկ., Մտք., չորրցս. կայ եւ ի Մանդ., է, 67. «Անագորոն է (Վաչխն), սոյն եւ անամաւթ առնէ», որ եւ Անագորովն յիսկ., Ես.:

«Իիտ. 45.

«Դ եւ Թ. Անհեթեթ, Ա, 20, 24. Անհեթեթուքիւն, 24. Անհեթեթ, ԲԳ, 25, 29. Անհեթեթուքիւն, 29: Երի Անհեթեթ եւ Անհեթեթուքիւն ըստ ԲԳ, զի այս է սովորական ուղղագրութիւն

⁷ Ըստ այսմ եւ Մովսիսի փոխանակ Մաւալիմ յիսկ., Փիլիպ., ԺԳ, 493:

բառիցս. տե՛ս «Անկազմ եւ աներեւոյթ էր (երկիր), . . . անկերպարան, անհեղեղ» Ոսկ., Ես., ԽՆ, 324. «Անհեղեղ կերպարանաւք» Ոսկ., Ա Տրմ., Բ. Յորդ., 67. Անհեղեղ, Բիւզ., Դ, Իր., 142 ա տպ. «Եւ հանդերձն անհեղեղ մեծութեամբն». Բիւզ., Ե, Գ, 204, ա տպ. Ս. Ղազարու, անհեղեղ. անդ, ԼԷ, 239 երկրիցս. «Անհեղեղ իմն աղաղակեն» Ոսկ., Մտք, Ա, ԺԹ, 305. — «Անհեղեղս վագ-վագեն» նոյն, Կոզոս., ԺԲ. Յորդ., 664: — «Անճահ եւ անհեղեղ շինեսցէ», նոյն, Եփես., ԺԹ. Յորդ., 871: Այսպէս ստեպ եւ յայլ գիրքս. «Ստուարագոյնս ասէին զնորայն (չղթայս) եւ անհեղեղնս» Փրպ., 158, ա տպ. — «Ազգ սկայից, անհեղեղիք, յաղթանդամք մարմնով եւ վիթխարիք» Խոր., Ա, Թ, 47. «անհեղեղս», Պիտ., 2, Գ, 467. եւ այլն: Նոր Հայկազեանն հաւասարապէս կ'ընդունի թէ՛ զ'Անհեղեղ եւ թէ՛ զ'Անհեթեթ, եւ զ'Անհեթեթ կը ստուգաբանէ ի Հեթեթ-անի = Հայ-թայթ-անի բառէ. (տե՛ս անդ Հեթեթ-անի). նոյնպէս եւ Զրգ. Քեր. կը գրէ յերես 648, յօդ. 1420. «Հայթայթ-անի, Հեթեթ-անի, Անհեթեթ», որ եւ յերես 654, յօդ. 1435, կը գրէ Անհեթեթ եւ Անհեղեղ, եւ ըսելով թէ «Սակաւ ուրեք միջակք (դ) ընդ թաւս (թ) փոխանակին», կ'իմացնէ թէ Անհեթեթ է բուն ուղղագրութիւնն: Ինչ Թորի թէ Անհեղեղ է հարազատն, եւ թէ չունի ինչ աղերս ընդ Հայթայթ-անի եւ Հեթեթ-անի բառից: Այս եւս զիտելի է որ յճգնիկ եւ յՈսկերեան՝ այս բառ կը նշանակէ «Անհաճ, Անարդ, Անկերպարան, Անվայել ուն», իսկ ի Բիւզանդ., ի Փարպեցի եւ ի Խորենացի՝ «Սաստկապէս մեծ»:

«Իիտ. 144.

«Ի եւ Տ. Զնտամ, Զընտամ, Ա, 78, 111 = Զընդամ, ԲԳ, 88, 125. || Ժանդագործութիւն, Ա, 126 = ԲԳ, 142. Ժանդահոտ, Ա, 101, 110, 113, 121 = ԲԳ, 114, 124, 127, 136. Ժանտահոտութիւն, Ա, 11 = ԲԳ, 16. || ձշտիւ, Ա, 30 = ձշդիւ, ԲԳ, 35. ձշդիւ, Ա, 38 = ԲԳ, 45, ուր երկուքեան եւս սխալ կը գրեն ձշդիւ. տե՛ս ի Դիտ. 83. || Պնդեմ, Ա, 60 = ԲԳ, 70. Պնդիմ, Ա, 88 = Պնտիմ, ԲԳ, 99. Պնդիմ, Ա, 140 = ԲԳ, 156. Պընտիմ, Ա, 242 = Պնտիմ, ԲԳ, 265: Գրեթէ ըստ սովորականին Զնդամ⁸, Ժանտագործութիւն, Ժանտահոտ, ձշդիւ, Պնդեմ: — ԶՄուլա-իսինտ⁹, Ա, 58 = ԲԳ, 67, փոխէ ի Մուլաիսինդ, զի այս է սովորականն. տե՛ս Մուլաիսինդ ի Վկ. Եփեսիայ կուսի, Վարք եւ Վկ. Սրբոց, Կ. Ա, 487, եւ ի գիրքս Կազմութեան Գրիգորի Նիսասցուց. Կանոն⁹⁵, հնդամուլ յեփրեմի շատին ի Յովսէփ, Կ. Դ, 102. հնդակոթ յՈսկերեանի Եսայեայ Մեկնութեան, ԾԶ, 424, այլովքն հանդերձ: — ԶՂնտեղական, Ա. 55-56 = ԲԳ, 64. Ընտեղա-ցուցանեմ, Ա, 133 = ԲԳ, 149. Ընտեղութիւն, Ա, 59, 60 չորրիցս, 130 = ԲԳ, 68 երկրիցս, 69 երկրիցս, 146, Թորի անփոփոխ, թէպէտ եւ յայլ գիրքս յաճախ կը գրուին Ընդել, Ընդելական, Ընդելա-ցուցանեմ, Ընդելութիւն, Զեղընդել:

«Իիտ. 33.

«Ե եւ Է. Ամեմարուեստ, Ա, 16 = 21¹⁰. Գ, 75. Ամեմարուեստ, Ա, 66 = Բ, 75: Գրեթէ Ամեմարուեստ յերկոսեան եւս տեղիսդ, ըստ այնմ գոր կ'ըսէ Հ. Արսէն Բագրատունի ի Զրգ. Քեր., երես 661, ծան. 1. «Ամեմ այբիւ կապեալ՝ գրի եջիւ. առանց այբի յօդեալ ընդ ձայնաւորաւ սկսեալ բառս՝ գրի էիւ»: Այսպէս եւ Ամեմառատ (Զրգ., յօդ. 86), Ամեմարինեալ, Ամեմիմաստ, Ամե-եւս է ամեմ, քան ամեմ, որ է առաւել ուսմական», նոյն իսկ յայն բարդութիւնս՝ «որոց յաջորդ բառն բնիկ ձայնաւորաւ սկսանի»: Բագրատունուոյն կարծիքն լաւագոյն թուի ինձ: «Երբէք եւ երբեք. ԱԲ ամէնուրեք կը գրեն երբէք երբէք, երբէք, գորս Գ փոխած է յ'երբեք, նակ երբեք, երբեք երբեք, ինչպէս կը գրենք եւ Ուստեմ, Ուրեմ. (տե՛ս Զրգ. Քեր., երես 216, ծան. 1):

⁸ Զգիտեմ թէ ինչո՛ւ պիտի գրուի Զընդամ՝ մինչդեռ կը գրենք Խնդամ:
⁹ «Մուլաիսինտ» եւ Թոմ. Բ, 25:
⁹⁵ [Աղբիւրի ստույգ տեղը սպիտակ է թողել եւ չի լրացրել]:
¹⁰ «Ամեմարուեստ» եւ Գալէմբ., Հանդէս, 1893, նոյնմբեր, 343 ա:

«Երէ եւ Երէ. Երէ, Ա, 88 = ԲԳ, 99, ուր երեքեան եւս սխալ կը գրեն «առ երես» փոխանակ «առ երէս» (տե՛ս Դիտ. —). Ա, 95 = ԲԳ, 175: Գրեթէ միապէս երէ, զի այս է սովորականն, ինչպէս կը տեսնուի ի վկայութեանց Նոր Հայկազեանին. որում կ'երաշխարհէ ի ձեռագիրս Եզնըկայ «առ երէս» բառերուն փոխուիլն յ'«առ երէս», եւ յՈսկերեանի Ա Տրմ. Մեկնութեան, ԺԳ. Յորդ., 112, «Երէ խաւսուն» բառից փոխուիլն յ'«Երբ է խաւսուն». (տե՛ս Հայկ. Բառագրան., երես 44):

«Իիտ. 103.

«Էհան, Ա, 226, 244 = Էհան, ԲԳ, 248, 267. այլուր Էհան, Ա, 59, 140, 208, 241 = ԲԳ, 46, 156, 227, 264. (Էհան. Ոսկ., Մտք., 274 երկրիցս. 524. Էմոյծ, Ոսկ., Մտք., 525). || Էհաս¹¹, Ա, 44 = 51 = Էհաս, Գ, 51. այլուր՝ Էհաս, Ա, 139 = ԲԳ, 155. || Էհար զանդրանիկսն, Էհար հրեշտակ, ԲԳ, 151. || Էցել, Ա, 226 = ԲԳ, 248: Ամէնուրեք Գրեթէ ըստ սովորականին Էհան, Էհաս, Էհար, Էցել, ինչպէս եւ յայլ տեղիս կը գրուի յճգնիկ՝ Էթող, Ա, 75, 211 = ԲԳ, 86, 230. Էկեր, Ա, 42, 256 = ԲԳ, 49, 280. Էցոյց, Ա, 3, 246 = ԲԳ, 7, 270: Բագրատունին ի Զրգ. Քեր., երես 141, յօդ. 321, անխտիր կը գրէ Էլաց, Էլաց. Էլոյծ, Էլոյծ. Էհան, Էհան. Էտես, Էտես. որով եւ ներելի պիտի ըլլայ գրել Էթեր, Էկաց, Էկեաց, Էմուտ: ԸՍՏ ԻՄ՝ եջիւ գրելի են այն բայերու կատարեալ եզակի երրորդ զէմքն՝ որ միավանկ են եւ բաղաձայնիւ կը սկսին, Էթող փոխանակ Էթող, այլովքն հանդերձ. իսկ էլու գրելի են այն բայերու կատարեալ եզակի երրորդ զէմքն՝ որ կը սկսին ձայնաւորաւ, զոր օրինակ Էած, Էանց, Էառ, Էարկ, Էառծ, թէպէտ եւ կան խաղասէր գրիչք որ եւ զայտոսիկ կը գրեն Էած, Էանց, եւ այլն: (Եարկ, փ. Էարկ. Եսթեր., Զրգ., յօդ. 321)⁹⁶: || Իսրայելի կամ Իսրայելի, Ա, 135, 149, 257 = «Իանիելի, Ա, 79, 162 = ԲԳ, 89, 178. || Իսրայելի եւ Մովսէսի, Ա, 84 = Մովսէսի, Բ, 94, Իսրայելի, ԲԳ, 151, 165. Իսրայելի, 282. || Մովսէսի եւ Մովսէսի, Ա, 84 = Մովսէսի, Բ, 94, 95 = Մովսէսի, Գ, 94, 95. այլուր՝ ի Մովսէսի, Ա, 176, 177 = Մովսէսի, ի Մովսէսի, ԲԳ, 193, 194. || ի Սերուբայ, Ա, 188 = Բ, 206 = ի Սերուբայ, Գ, 206. յայլուր վայրի՝ առ Սերուբա, Ա, 210 = ԲԳ, 229: Զայս ամենայն Գրեթէ միօրինակ Դանիելի, Իսրայելի, Մովսէսի, ի Մովսէսի, ի Սերուբայ:

«Իիտ. 14.

«Ի եւ Ի, Բարիոք եւ Բարուք: Զայս բառ՝ որ շատ յաճախ կը գտնուի յճգնիկ եւ ԱԲԳ մերթ կը գրեն բարիոք, մերթ Ա՝ բարուք, եւ ԲԳ՝ բարիոք, եւ մերթ Ա՝ բարիոք, եւ ԲԳ՝ բարուք, եւ առ հասարակ Գրեթէ Բարուք որ լաւագոյն թուի ինձ, ինչպէս կը գրենք եւ Զարուք, ոչ թէ Զարիոք: Աւելորդ կը համարիմ հաւաքել աստ զամենայն վկայութիւնս եւ նշանակել զտարբերութիւնս գրութեանցն, զորս յիւրաքանչիւր տեղուց՝ դրած եմ ի ծանօթութիւնս. շատանամ մի մի օրինակաւ թեմանցն, զորս յիւրաքանչիւր տեղուց՝ դրած եմ ի ծանօթութիւնս. շատանամ մի մի օրինակաւ բարուք երակէն նորա բարուք որդին եղեւ», Ա, 113 = «Ի բարիոք երակէն նորա բարուք որդին եղեւ», ԲԳ, 128. Գ. «Ի բարիոք իրս պաշտեցաւ», Ա, 33 = «Ի բարուք իրս պաշտեցաւ», ԲԳ, 39: Ա՛յլ է Եզնըկայ ըսելն բարի ոք, զոր Ա յերես 45, եւ ԲԳ յերես 52, սխալ կը գրեն բարուք¹². (տե՛ս Դիտ. 109): Անգղոյք գրիչք ստեպ կը գրեն եւ բարեմ = բարեոք, Զարեմ = Զարեոք, որով Բարուք եւ Զարուք մակբայք կը շփոթին ընդ յոգնակի գործիականս Բարիք եւ Զարիք բառերու. «Ոչ բարեոք իմացեալ առաջնոց թագաւորացն՝ զի ոչ կալան գտելիս զայս», Թ. Արծր., ա տպ. 65, ք տպ. —⁹⁷, կարդա՛ բարուք. — «Եղբայր ոմն գնաց առ ծերն եւ ասէ. Ո՞րպէս կեսս, հայր: Ասէ ծերն ցնա. Զարեոք, որդեակ», ՎՀ, Բ, 282. կարդա՛ Զարուք:

¹¹ «Էհաս» եւ Գալէմբ., Հանդէս, 1894, Յունուար, 9 ք:
⁹⁶ [Ա. Բագրատունի նշուած յօդուածում գրել է: «Յերրորդ եզակի զէմ կատարելոյն՝ որ է արմատ բալին՝ յաւելուած առնի յաճախ եւ տառի, եթէ միավանկ արմատից: Էլաց, Էրաց, Էթաց, Էթարծ, Էկաց. իսկ ի բաղաձայնիսն ոչ եւս: Ընդ առնի յաճախ եւ տառի, եթէ միավանկ արմատից: Իսկ ի ձայնաւորաց ա միայն վարի, եւ այն սովորաբար է, եւ ոչ յոյժ յաճախ առ բաղաձայնս լինի ե կամ է [օրինակներ]: Իսկ ի ձայնաւորաց ա միայն վարի, եւ այն սովորաբար է, եւ ոչ յոյժ յաճախ առ հինն՝ մանաւանդ յատուածաչառն գիրքս. Էարկ (Եարկ. Եսթ.), Էանց, Էառ [. . .]: Սակաւ ուրեմ եւ ի կատարեալ եր-բարդ դէմս այլոց ինչ բայից գտանի յաւելեալ այս ե կամ է արտաքոյ սովորութեան ընտիր գրոց, որպէս եւ ընդ երկա-վանկ կամ ընդ եջիւ միավանկ. Էլուաց, Էզնաց, Էզնաց. Էարար, Էել, Էեդ:]
¹² «Բարուք» եւ Գալէմբ., Հանդէս, չի լրացրել. առանձնատիպ, էջ 73:
⁹⁷ [Ի տպագրութեան էջը չի նշանակել:]

«Իխտ. 130.

«Խ եւ Դ. Թախծալից, Ա, 233 = ԲԳ, 255. Թաղծիմ, Ա, 84 = ԲԳ, 95. Մեղմեխանի, Ա, 53 = ԲԳ, 61. Մեղմեխանի, Ա, 54 = Մեղմեխանի¹⁵, ԲԳ, 62: ԳրեՑԻ Թախծիմ եւ Մեղմեխանի՝ ըստ Թախծալից եւ Մեղմեխանի:

«Մ եւ Զ. Պղնձագործ, Ա, 188 = ԲԳ, 206: ԳրեՑԻ ըստ սովորականին Պղնձագործ:

«(Իխտ. 129).

«Զ եւ Յ. Աւատեմ կամ Աւատիմ, Ա, 13, 16 = ԲԳ, 17, 21. այլուր ներգործական Աւցտեմ, Ա, 78 = ԲԳ, 88: ԳրեՑԻ միապէս Աւցտեմ՝ որ բուն գրութիւնն թուի ինձ, ինչպէս կ'երեւայ Յտեմ բայի հետ չփոխելէն. «Քակեցեր զբնաւ. զաւրութիւնն նորա, եւ ցտեցեր ցրուեցեր զբանակսն», Ոսկ., Մտք., Բ, իա, Յորդ., 669. այսպէս եւ Հայկդ. ի Յտեմ որ այլ ինչ կը նշանակէ. պէտք է կարդալ աւցտեցեր ցրուեցեր, զոր համեմատէ ընդ յաջորդաւ. «Յրուել . . . եւ աւցտել», Ոսկ., Մտք., Բ, Ժգ, 608. - «Աւցտել եւ ցրէ», Եզնիկ, 88: Իսկ զ'Անցնիւր, ԲԳ, 60, 163, 296, (որ յ'Ա կը գրուի «անձանց իւրեանց», 52. - «անձին՝ իւր», 147. - «անձն՝ զիւր», 270), ԹՈՂԻ Անփոփոխ, թէպէտ Բագրատունին՝ որ ի Զրգ. Քեր., երես 70, յօդ. 161, կը գրէ «Անձիւր կամ Անցնիւր», անդ ի ծանօթութեան՝ յԱնձն բառէ կը ստուգաբանէ զԱնձիւր, որով մարթի երաշխաւորել եւ այն՝ որ բաց յՆդերկայ Ա. տպագրէն նա եւ յայլ գիրս Անձիւր չփոխեալ է Անձն եւ իւր բառերուն հետ:

«(Իխտ. 29.)

«Մին եւ Մինն. Ա կը գրէ Մինն, 15, 31, 88, 91, եւ այլն. իսկ ԲԳ՝ Մին, 19, 37, 99, 102, եւ այլն: Բայց Ա 39 = ԲԳ 45, հաւասարապէս կը գրեն. «Զմինն¹⁴ ի ծառայութեան ունիցի». զարձեալ Ա 107, կը գրէ. «Մինն քաղցր . . . մինն անոյշ եւ մինն դաժան», իսկ ԲԳ 120, «Մինն քաղցր . . . մինն անոյշ եւ մինն դաժան». եւ զարձեալ, Ա 119, «Զմինն բարի եւ զմինն չար», իսկ ԲԳ 134, «Զմինն բարի եւ զմինն չար». այլուրն հանդերձ: ՀԵՏԵՆԵՑԱՅ առ հարկի ԲԳ տպագրաց, զտարբերութիւնս Ա. տպագրին գետեղելով ի ծանօթութիւնս: Թուի թէ նախնիք անխտիր ըսած են Մին, Մին, Մին, եւ Մինն, Մինն, Մինն. «Կամիմք, ասեն, զի մինս ընդ աջմէ քումմէ, եւ միւսս ընդ ահեկէ քումմէ նստիցիմք», Ոսկ., Մտք., Գ, Ժբ, 42. (Զրգ., յօդ. 872) - «Մինն¹⁵ ի ձէնջ Աստանայ է», Յովհ., Զ, 71. - «Մինն անյագ ուտէ, եւ հանապաղ մեռանի. եւ մինն որ չուտէ, առանց աւերոյ նուաղի լոյս ճառագայթից իւրոց». Եղշ., Ը, 129 (տպ. Ս. Ղազարու, 1859):

«Ո եւ Ա. (0). ԱԲԳ ուրեք կը գրեն -ոյ, Գործող, Ա 33 = ԲԳ 39. Հերձուածող, Ա 5, 134 = 9, 150. այլուր անխտիր՝ Կարող եւ Կարող, Սպանող եւ Սպանող, Յանկացող եւ Յանկացող: Տե՛ս զօրինակաւ. Կարող, Ա 35 երկիցս = ԲԳ, 42 երկիցս. Կարող է, Կարողն է, Ա, 36 = Կարող է, Կարողն է, ԲԳ, 42. Կարող էր, Ա, 25 = Բ, 30 = Կարող էր, Գ, 30. Սպանող, Ա 31 = ԲԳ, 36. Սպանող, Ա 23 = Բ, 29 = Սպանող, Գ, 29. Յանկացող, Ա, 53 = ԲԳ, 61. Յանկացող, Ա, 54 = Բ, 62 = Յանկացող, Գ, 62: Ընդհանրապէս Գ. տպագրին փոխած է յ'ոյ զգրեալսն -ոյ յ'ԱԲ. ինչպէս եւ Արգահատող, 73. Գտող 111. Յաղթող, 58. Ներող, 73. Շինող, 26. բայց կը գրէ եւ Կամեցող, 171. Կարող, 224, 232 երկիցս, 272 երկիցս, 273. Հնձող, 266. Նմանող, 147, 251 երկիցս. Չհաւանող, 231. Պոգող, 250. Ստացող, 233. Տեսող, 285. Յանկացող, 171: ԳրեՑԻ ամէնուրեք -ոյ, որ լաւագոյն է քան զ'աւղ կամ -ոյ. զի եւ Կարողութիւն, Շինողութիւն կը գրենք, ոչ թէ Կարողութիւն, Շինողութիւն:

«Ո եւ Ով. ԲԳ կը գրեն Եթովպացուց յերես 103, եւ Եթովպացուց յերես 104: ԳրեՑԻ Եթովպացուց, ինչպէս ունի Ա յերես 92 երկիցս:

¹⁵ «Մեղմեխանի» եւ ԹՈՂԻ. ա 22, որ յ'բ տպ. 22, փոխեալ է ի «Մեղմեխանի»:
¹⁴ «Զմինն» եւ ԹՈՂԻ. ա 14, բ 13. իսկ Գալէմբ., Հանդէս, 1894, Յունուար, 7 բ, կ'ուղղէ զմինն, եւ կ'ըսէ յ'7 ծանօթութեան. «Տպ. ունի մինն». (կարգա՛ զմինն):
¹⁵ Այսպէս Զայլու-Այլուրն. Քերականութիւն, երես 288. իսկ Աստուածաշունչն հրատարակեալ Հ. Արսենի Բաղրատունուոյ (Ս. Ղազար, 1860) ունի Մին:

«-Ոյ, -Ոց, եւ -ույ, -ուց, ի հոլովս եօթներորդ հոլովման (Ո եւ Ա). Ա 40 եւ ԲԳ 46 կը գրեն միապէս Թշնամույն, իսկ Ա 42 = Բ 48՝ «Անսայցէ թշնամույն . . . ոչ ի բժշկէն, այլ ի թշնամույն». այլուրն հանդերձ: Զայտսիկ եւս ընդհանրապէս ուղղած է Գ, որ կը գրէ Այնպիսույն, 43. Թշնամույն, 48. Որդուց, 20, 37. Սիրելույն, 39, ուր ԱԲ ունին Այնպիսույն, Թշնամույն, Որդուց, Սիրելույն: Բայց յայլ տեղիս նա եւ Գ կը գրէ հանգոյն ԱԲ տպագրաց՝ Այնպիսույն, 59. Ասորեստանույն, 151. Գործողույն, 219. Թշնամույն, 89. Ոգոց, 84. յՈգոց հանել, 177 երկիցս. (Հոգուց, ԲԳ, 13). Որդույն, Որդուցն, Որդույն, 125-127, 129-131, 136, 121. Զարաֆնույ, 126: Ամէնուրեք ԳրեՑԻ -ույ, -ուց առ ի խորշել յերկրիմութենէ, զի այլ է Սիրել, սիրելույ, եւ այլ Սիրելի, սիրելույ. այսպիսի ըստ իս խոտելի՝ գրութեան հետեւանք է Ամենաւախձեղով կարդալ ի Փիլոն (ի ձառին Յդ. բան ունել կենդանեաց, 164), փոխանակ Ամենաւախձեղով = Ամենաւախձեղով յաւ. եւ անշուշտ Զարաֆնույ գրութիւնն է՝ որ ոմանց կարծեցուցած է թէ ուղղականն է Զարաֆին: («Նախանձոտ եւ չարաֆին Մլեհն», Ալիշան, Շնորհ. եւ Պար. իւր, 324):

«-Ով- եւ -Ա- (-0-)⁹⁸, ի յոգնակի գործիականս Զորրորդ հոլովման (Ո) (Զրգ., երես 23, եւ ծան. 1). Եղեղոփ, Ա 107 = ԲԳ 121. ի խորհրդոփ, ԲԳ 238, (որ յ'Ա 219 է՝ ի խորհուրդս). ի խորհուրդս. ի խորհուրդս, Ա 224 = ԲԳ 245. ի Պահոփ, Ա 75 երկիցս, 163 = Պահոփ, ԲԳ 85 երկիցս, եւ Պահովփ, 179: Զայտսիկս առ հասարակ ԳրեՑԻ-ով ըստ սովորականին»:

Սրանով վերջանում են Նորայրի ընդհանուր բնոյթի սրբագրութիւնները կամ որոշ բառերի ուղղագրութեան ճշտումները:

«Եզնիկ. Յիշելիք եւ Քննելիք» մանր նշումներ ընդ գտանք «Իխտ. 237, Կէսն, եւ Կէսք», ուր տալի էջերով նշել է այս բառի գործածութիւնը եզակի եւ յոգնակի, -ն յօդով եւ առանց յօդի, ինչպէս հանդիպում է Եզնի-ի երկում:

- «ի կիսույն նորա... եւ զկէսն նորա, 31.
- միւս կէսն... եւ կէսն ի փառս եւ կէսն յանարգանս, 210.
- զկէս եւ զկէսն, 297.
- կէսքն ... եւ կէսքն, 62-63, 213.
- կէսքն ... եւ կէսք, 148.
- կէսք ... եւ կէսքն, 97, 295.
- կէսք ... եւ կէսք, 172.
- զկէսսն ... եւ զկէսսն, 147, 149, 157.
- կիսոցն ... եւ կիսոցն, 65.
- զկիսոցն ... եւ զայլոցն, 172.
- կէսք ... եւ կէսք ... եւ կէսք, 22.
- կէսք ... եւ կէսք ... եւ այլք, 155.
- կէսքն ... եւ այլքն. 72, 111 (ուր Գ սխալ ունի այլք).
- զկէսսն ... եւ զայլս. 109»:

Այս նշումները համար եղրակացութիւն չունին: Նշենք նաեւ, որ Նորայրը երբեք չի գործածել և ու օ նշանագրերը. միշտ գրել է եթ ու թէ. Ե եւ Ի ծորղութիւնները բայերի անցեալ անկատարը գրել է -է- ու, ի տարբերութիւն Ա. Մեյքի դպրոցի:

Է. Եզնիկի երկի սրբագրութիւններ
Նորայրի գործերում եւ վերամշակած նշն-ում

Նորայրը Եզնիկի բնագրի սրբագրութիւններ ունի իր տպագրուած եւ անտիպ գործերում, ինչպէս նաեւ Նշն-ի իր սեփական օրինակում (այսօր՝ նրա դիւանում): Բոլորն էլ քաղեցինք եւ մեր բնագրի էջատակերում նշեցինք նրա ստորագրութեամբ:

Նշն-ի երկու հատորները Նորայրը մէջ ընդ մէջ թերթեր աւելացնելով վերածել է չորս հատորի:

⁹⁸ [Նորայրն այս հատուածը նախ գրել է իր ձեռագրի էջ 8-ում՝ «Ա. եւ Ով»-ից յետոյ «Ա. (0) եւ Ով» հերթականութեամբ՝ պահպանելով այբբենական կարգը, բայց «Ով եւ Ա. (0)» ձեռով գրել է Ո-ի շարքում, նախորդի վրայ գծեր քաշելով ու այդպիսով ջնջելով:]

(Բ¹⁶), ուր արձանագրել է իր բոլոր դիտողութիւնները, սրբագրութիւնները, յաւելումները, եղած բառերի նորագոյն վկայութիւնները, նշուած վկայութիւնների պակասող էջերը, բառերի Ֆրանսերէն թարգմանութիւնները եւ այլն, եւ այլն: Նրանցից ընտրեցինք Եզնիկի բնագրին վերաբերող բոլոր նշումները:

Համոզուած ենք, որ Նորայրի սրբագրութիւնների շնորհիւ մեծապէս շահեց Եզնիկի բնագիրը. ուստի շատ ցաւալի է նրա կազմած բնագրի մեծագոյն մասի կորուստը:

Ե. ԵՐԿԻ ՀԱՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՐՏԱՏՊՈՒՄՆԵՐ ա. Եզնիկի լեզուի եւ ոճի գնահատում բոլորի կողմից

Վիեննայի Միսթարեանները 1838-1840 թթ. դասական գրաբարի իրենց գիւտից յետոյ Եզնիկին համարեցին, իր լեզուի, քերականութեան կանոնաւորութեան եւ ոճի պատճառով, գրաբար դասական գրականութեան չորս դասերից առաջինի ներկայացուցիչը⁹⁹: Եզնիկի լեզուի եւ ոճի մասին շատերն են արտայայտուել հիացմունքով. ահա մի քանի վկայութիւններ, որոնք մէկ ընդհանուր կարծիք են կազմում:

Թ. Թոռնեանը գրել է. «Եզնիկայ Կողբացոյ ընդդէմ Աղանդոց գիրքը [. . .] իբր հայերէն լեզուի բովանդակ գեղեցկութեանց ու յատկութեանց գանձ, ամենայն նկատմամբ օրինակ է հայկաբանութեան կիրթ ճաշակի: Թէպէտ եւ պզտիկ հատոր մըն է բոլոր գրուածքը, բայց բազմահատոր մատենաներէ աւելի արդիւնք ունի հայկական գրագիտութեան մէջ, որովհետեւ կարծես թէ Մատենագիրն ալ ուրիշ ամէն իր ժամանակակիցներէն աւելի փոյթ տարած է իր գրութիւնն ամէն կերպով կատարեալ ընելու»¹⁰⁰:

Մ. Գարագաշեանը Եզնիկին համարել է «հրաշակերտ Հայ լեզուի» եւ աւելացրել. «Եզնիկ ոչ գրէ միայն հայերէն, այլ եւ ուսուցանէ հայերէն: Ստէպ տալով գնոյն միտս այլով բանիւ, որպէս պատուելի եւ խորիմտի, հրաման եւ օճան, քստմունք եւ սարսափիւն, կամ շարելով զմիմեանց հակառակս, որպէս քաղցր եւ դառն, սպիտակ եւ թուխ, դրաց կողմն եւ ալուց կողմն, անսպառ պէսպիսութեան Հայ լեզուին տայ մեզ հասու լինել: Միով բանիւ չիք յԵզնիկն տող որ չիցէ արժանի առանձինն մտադրութեան, եւ ոչ էջ՝ ուր չգուցէ բազում ինչ նոր եւ պիտանի, ե՛ւ բան ե՛ւ ասացուած»¹⁰¹:

Յ. Թորոսեանը իր «Եզնիկ եւ իւր երկասիրութիւնն» յօդուածում (Բազմավէպ, 1889, էջ 14 եւ յաջ.) գմայլանքով է խօսում Եզնիկի երկի, նրա լեզուի եւ ոճի մասին. «Ոչ ոք կ'անգիտանայ Եզնիկայ անուամբ կոչուած փոքրիկ մատենանը, որ իւր բովանդակութեան մէջ յերաւի անգին գոհար կամ աղամանդ մի է մեր մատենագրութեան համար. եւ ինչպէս ի բիւրեղի կամ ուրիշ պատուական ականց մէջ՝ բեկբեկելով արեւուն լոյսն՝ կը տեսնուին հրաշալի գեղեցկութեամբ ծիածանին եօթն գոյնք, այսպէս եւ սոյն հրաշալի մատենական մէջ կը փայլին Եզնիկայ հանճարոյն զանազան գեղեցիկ ձիւրք կամ գոյնք, եթէ ներելի ըլլայ այսպէս ըսել» (էջ 18): Յաջորդ էջի սկզբում՝ «Եզնիկ [. . .] միշտ անկապուտ պահեր է եւ պիտի պահէ իւր առաջնութիւնն, մանաւանդ յիմաստասիրական մասին եւ ի լեզուական հմտութեան, քան զայլ ամենայն հեղինակ մեր» (էջ 19):

Ն. Ն. Բիւզանդացիին իր ստորեւ նշուող գործում Եզնիկի եւ Կորիւնի երկերը համեմատելուց յետոյ այսպէս է արտայայտուել էջ 11-ում. «Եզնիկ եւ Կորիւն ոչ միայն ժամանակակիցք են, այլ եւ սննդակիցք եւ ուսումնակիցք. բայց ոճով կը զանազանին մեծապէս: Զարդագիր են եւ երկրորին, այսու տարբերութեամբ, որ Եզնիկ ոչ երբեք կ'ախորժի սեթեւեթել՝ տուժելով զյատակութիւն (գլ. clarté). մինչդեռ Կորեան զարդերն կ'աղօտացնեն յաճախ զմիտս բանին: Առաջինն՝ ի սկզբանէ ցկատարած իւր գրութեան՝ կը նմանի հեզասահ վտակի, որոյ ականակիտ ջրերուն միջէն պայծառա-

⁹⁹ Չորս դասերի երեք դասաւորումներն ըստ Յ. Գալթրեանի, Ք. Սպենսանի եւ Ն. Ն. Բիւզանդացու տե՛ս Ն. Ակինեան, Դասական հայերէնը եւ վիճակական Միսթարեան դպրոցը գրքում, Վիեննա, 1932, էջ 50-51:
¹⁰⁰ Հատըմտիք ըմբօքցումով, Ա, Վիեննա, 2-րդ հրատ., 1891, էջ 19:
¹⁰¹ Ճաշակ ոսկեղէն դպրութեան, Կ. Պոլիս, 1889, հատ. Բ, էջ 16, 17: Նաեւ՝ «Հարազատ հայերէնի հոյակապ մնացորդաց մէջ, որ գործ են համակ առաջնոյ կիսոյ Ե. դարուն՝ բարձր ի գլուխ կը պարծի մատենա սքանչելւոյն Եզնիկայ: Լեզուն Եզնիկայ, որ զհանգամանս առաջին եւ երկրորդ ոճոյ միանգամայն ունի՝ կ'ընծայեցուցանէ Հայ լեզուին տիպը կատարեալ՝ քան զոր չենք կրնար մտածել հայ լեզուին իւր բոլոր լրութեամբն առնլով» (Մ. Ա. Գարագաշեան, Քննական պատմութիւն հայոց, մասն Դ, էջ 72):

պէս կը տեսնենք զյատակն. իսկ երկրորդն՝ շատ անգամ կարծես ուղիւ մի է, որ կը հոսի ծածկեալ ծաղկներով, եւ այս պատճառաւ աչք մեր չկարեն թափանցիկ լինել ընդ խորութիւնն: Առ Եզնիկայ միշտ կանոնաւոր է քերականութիւնն. իւրաքանչիւր մասն բանի՝ որոշ պաշտօն մի կը կատարէ եւ անսայթաք ի նպատակն կը դիմէ. իւր ամէն բարդութիւնքն՝ յայտնի նշանակութիւն ունին. կարճ ըսեմ, ի վերջակիտէ ի վերջակէտ՝ բայ, գոյական, վերադիր, ձեւ, դարձուած, ամենայն ինչ վճիտ է իբրեւ զվանակն (գլ. cristal)¹⁰²: «Վարքն Մաշտոցի է եւ պիտի ըլլայ միշտ երկրորդ հոյակապ յիշատակարան ինքնագիր մատենագրութեանց մեր Ոսկեղարուն, առաջնութեան պարծանք մնալով Ճառիցն Ընդդէմ Աղանդոց: Փոքրիկ է Եզնիկայ մատենիկն, եւ Կորեանն՝ փոքրագոյն, այլ երկրորդն եւս բարձր նշանակութիւն ունին Հինգերորդ դարու դասական գրականութեան համար (406-462)» (ն. տ., էջ 13): Դարձեալ նոյն աշխատութեան էջ 18. «Որովհետեւ Եզնիկ գլխաւոր գործակիցն եղած է Սրբոյն Սահակայ ի թարգմանութեան Աստուածաշունչ մատենին (Կորիւն, Վարք Մաշտոցի, 21), իրաւամբք կարենք համարել զիւր ոճն՝ նորին ինքեան Սահակայ ոճ: Կանոնաւոր, դաշնակաւոր, յընտրութեան եւ ի շարուածս բառից ամենաճարտար, ասացուածովք, բացատրութեամբք եւ նոյնանշանօք շատ հարուստ, մերթ պարզ՝ բայց այնպիսի պարզութեամբ յոր քաջ արուեստագէտք միայն կը հասնին, մերթ զարդարուն առանց բռնագրօսութեան, եւ ի վեր քան զամենայն յստակ (գլ. clair). ահա նկարագիր այս [այսինքն՝ եզնիկեան] Դասու հայկաբանութեան»:

Այլ կարծիքներ. «Լեզուն եւ ոճը, որոնք դասական նկարագիրով կը փայլին այս գրքին մէջ, հաւասար բարձրութեան վրայ երեւան կու գան Ոսկեբերանի, Սեբերիանոսի, Եւսեբեայ, Աստուածաշունչի եւ այլ գրուածներու մէջ: Հաւանօրէն նոյն ինքն Եզնիկ է անոնց մեծ մասին թարգմանիչը: Ուստի լեզուի տեսակէտով դասական նկարագիրն է չափանիչը, եւ ոչ անհատի ոճը», գրել է Ն. Ակինեանը¹⁰³:

«Եզնիկ ի Կողբայ՝ վարդապետն հայ լեզուի»¹⁰⁴ (Յ. Տաշեան):
«Յզնիկի հայերէնը դասական յուներէնի չափ աղուոր է՝, կ'ըսէր օր մը ինծի պ. Մեյէ, որ գիտուն մըն է»¹⁰⁴ (Ա. Զօպանեան):

Վ. Առաքելեանը իր «Ակնարկներ»-ում, էջ 118, նշել է Ա. Զամինեանի ջերմ կարծիքը, որ արտայայտել է իր «Պատմութիւն հայ գրականութեան» աշխատութեան մէջ (1915, էջ 59-60):

Ուստի այսպիսի բարձր գնահատանքից յետոյ զարմանալի է, որ Եզնիկի գիրքը կամ նրանից լայն հատուածներ ընթերցանութեան նիւթ են դարձել գրաբար սովորողների ձեռնարկներում կամ ընթերցանութեան հատընտիրներում, արտատպուելով 1826/1863-ի տպագրութիւնից, որը, ինչպէս ասացինք, ամենատարածուածն էր (սակայն, առանց այդ էլ, միւս հրատարակութիւնները վերատրուել են նրա բնագիրը): Դասագրքերի որոշ հեղինակներ հատուածներն արտատպել են նոյնութեամբ, ուրիշներ առանց կանխազգուշացման կատարել են կրճատումներ, շատ քչեր յարմարեցրել են սովորողների մակարդակին: Արտատպումների մէջ նկատելի են վրիպակներ, երբեմն սակաւաթիւ, երբեմն էլ բազմաթիւ: Ոմանք կցել են քերականական լուսաբանումներ եւ բացատրել բառեր: Յամենայն դէպս բոլորն էլ մեծապէս նպաստել են այդպիսով Եզնիկի երկի տարածմանը, ծանօթացմանը եւ սէր են սերմանել նրա հանդէպ, որին լիապէս արժանի է: Բացի դասագրքերի եւ ծաղկաբաղ ների հեղինակներից, հասարակական գիտութիւնների այլեւայլ մասնագէտներ իրենց յօդուածներում կամ աշխատութիւններում համառօտ կամ ընդարձակ մէջբերումներ են կատարել Եզնիկի երկից զանազան նպատակներով: Գրեթէ անհնարին էր այդ բոլորը մատնանշել այստեղ. սակայն աւելորդ չհամարեցինք ստորեւ թուել ընդարձակ հատուածներ քաղած հեղինակներին՝ իրենց ազգանունների այբբենական հերթականութեամբ: Եզնիկի երկի 1826 թ. տպագրութեան էջերը, գրքերը կամ գլուխները մենք ենք որոշել ու նշել, երբ հեղինակներն այդ չեն արել: Բուն բնագրի բաղդատմամբ նրանցից կարեւորների տարբերակները՝ վրիպակ կամ սրբագրութիւն, նշուած են մեր կազմած բնագրի տողատակերում:

¹⁰² Ն. Ն. Բիւզանդացի, Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք, Տիդիս, 1900, էջ 11 եւ 18: էջ 11-ի ծանօթութեան մէջ կարդում ենք. «Ոչ սակաւ անքերական ասացուածք ի մատենական չքնաղ հայկաբանիս՝ վերագրելի են անհմուտ գրչագրաց»:
¹⁰³ Ն. Ակինեան, Մատենագրական հետազոտութիւններ, 2, 266:
¹⁰⁴ Յ. Տաշեան, Ուսումն, էջ 465:
¹⁰⁵ Ա. Զօպանեան, «Անախտ», 1909-1910, թ. 9-10, էջ 198:

բ. Երկից արտատպումներ հայերէն հրատարակութիւններում

Հրատարակողների ազգանունների այբբենական կարգով ենք յիշեցնում:

1. Արեղեան Մ., «Հայոց հին գրականութեան պատմութիւն» (Երկեր, Գ, Երեւան, 1968, էջ 150-151). արտատպել է Թիֆլիսի հրատարակութիւնից (= Ս. Ղազարի տպ., 1826, էջ 14-18), նմուշի համար:

2. Աբրահամեան Ա. Ա., «Գրաբարի ձեռնարկ», 4-րդ տպ. Երեւան, 1976, «Գրաբարի ծաղկաբաղ», Եզնիկ Կողբացի, էջ 314-322. արտատպուած են, որոշ վրիպակներով, հետեւեալ հատուածները (որոնց գրքերն ու գլուխները նշուած են հեղինակի կողմից), սակայն ո՞ր տպից.

Ա, գ կիսատ, էջ 14-18 (1863-ի հրատարակութեամբ):

Ա, ժե կէսից, էջ 62-68. -օղ վերջաւորութեամբ դերբայները այստեղ եւ միւս հատուածներում գրուած են -ող-ով: Կախման կէտերով են փոխարինուել «եւ սպան զնա Աստուծոյ սիրելին՝ նովին ընտելական կերակրովն» բառերը: Այստեղ եւ այլուր Աստուած գոյականը գրուած է փոքր սկզբնատառով:

Ա, իե, էջ 99-107. քէ-ն դարձել է եթէ. կախման կէտերով փոխարինուել են կոյսից Գրիստոսի ծնունդը պատմող մի քանի տողեր (էջ 101), ինչպէս նաեւ Հրեաների ակնկալութիւնը պատմող հինգ տող:

Բ, ա, էջ 113-115:

Բ, գ (կիսատ, էջ 117-120). բնագրի յումմէ՞ ձեւը մնացել է, թէեւ հեղինակը սովորեցրել է յումմէ (որ հիշտ է). սակայն բնագրի էջ 130-ի նոյն ձեւը դարձրել է յումմէ էջ 324-ում:

Բ, ե, էջ 128-131:

Եզնիկի հատուածներին վերաբերում են հատորի վերջում տեղադրուած 128 ծանօթութիւնները (էջ 414-428): Հատուածների կէտադրութիւնը հիմնականում Վ՛-ինն է: Կինելով Երեւանում, ուր է նաեւ Եզնիկի միակ ձեռագիրը, ձեռնարկի հեղինակը կարող էր օգտագործել ձեռագիրը եւ բանասիրական բնագրի նմուշ կամ ճաշակ տալ Համալսարանի եւ բարձրագոյն դպրոցների ուսանողներին:

3. Ալան Յ. Յ., «Եզնիկ Կողբացի» («Պատկեր», Կ. Պոլիս, 1892, թ. 15, էջ 245-254): Այս քաղուած է Պ. Ֆէտտէրի «Եզնիկ եպիսկոպոս Բագրեւանդայ» յօդուածից. հայերէն թարգմանել է Յ. Տաշեանը (տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ), որ Ալանի գրուածքը որակել է իբրեւ «Մասնական [կամ ոչ ամբողջական] բայց ոչ միշտ յաջող թարգմանութիւն» (Ֆէտտէր, էջ 83, ծան.): Իսկ Ալանն այս համարել է իր «ուսումնասիրութիւնը»: Ի՛նչ էլ եղած լինի նրա համար, Ֆէտտէրի մէջբերած եզնիկեան տողերը նա կրկնել է 1-10 համարակալուած ենթավերնագրերի տակ, թէեւ սրանք, ինչպէս գերմանացի հայագէտի յօդուածում, ինն են. մոռացել է 7-րդը (էջ 250-253): Ալանի մէջբերումները վրիպակալից եւ քերի են. ուստի ծիծաղելի է, երբ նա ասում է, թէ այդ մէջբերումները «Կրնան ալ ծառայել իբրեւ նմուշ այդ ազնիւ եւ սքանչելի ոսկեղէն լեզուի» (էջ 250): Հակառակ Ֆէտտէրի, Ալանը չի ասել մէջբերումների տեղերը. մենք դրանք նշում ենք էջերով, առանց ամբողջովին փոխ առնելու Յակ. Տաշեանի թարգմանութիւնից, որով հետեւ բնագրերն այստեղ չկան, լոկ մատնացոյց են արուած իրենց տեղերով, իսկ Ալանը երբեմն որոշ մէջբերումներ փոխարինել է ուրիշներով.

1. «Թէ բազմաստուածութիւնն ընդդէմ մտաց է» (Եզն., էջ 11.7 - 12.5):
2. «Արարչագործութիւն» (235.22 - 236.5), «Ոչնչէ ստեղծութիւն» (26.9 - 27.17):
3. «Թէ չար գործողութիւնն ազատ կամաց գէջ կիրարկութենէ կը ծաղի» (59.1 - 17):
4. «Կարծականութիւն Doketismus - Docétisme» (265.6 - 266.2):
5. «Հրեշտակախօսութիւն» (90.9 - 91.12):
6. «Արբոց ու անոնց մասունքներուն հրաշագործ գործութիւնը» (89.5 ն. - 90.8):
7. «Ս. Պետրոսի գլխաւորութիւնը» (263.19-24):
8. «Կուսութիւն» (287.15 - 288.7):
9. «Պահապան հրեշտակը» (107.2 ն - 108.23):

4. Անառեան Հր., «Հայոց լեզուի պատմութիւն», Բ մաս, Երեւան, 1951, էջ 78-79, [1826] էջ 5-18:

5. Առաքելեան Վարագ, «Գրաբարի հատընտիր», մասն Ա (Բ-ն լոյս չտեսաւ), Երեւան, 1946, էջ 43-97: Նշուած չեն հատուածների տեղերը, եւ ցատկումներ կատարուել են առանց կախման կէտերի կամ այլ զգուշացման: Արտատպուած են հետեւեալները.

- Ա, ա, գ, դ, ե, ժէ, ժք (կիսատ), ի (կիսատ), իդ, իե:
- Բ, ա, դ (կիսատ), ժգ (կիսատ), ժը, ժք, ի (հատուածներ):
- Գ, գ, է (երկրորդ կէսից), ք (կիսատ):
- Դ, ժգ:

1-13 համարակալուած հատուածներն անվերնագիր են. էջատակերում նշուած են Վ-ի ընթերցուածները եւ ծանօթագրութիւններ: Վրիպակներ կան: Հեղինակը թէեւ չի ասել, սակայն օգտագործել է ոչ թէ Երեւանում գտնուող ձեռագիրը, այլ՝ Աճ-ն եւ ըստ այնմ քննական վերաբերմունք է ունեցել տպագրի նկատմամբ: Կէտադրութիւնը հիմնականում սրանն է:

6. Աւետիսեան Հ. Մ. եւ Ղազարեան Ռ. Ս., «Գրաբարի ձեռնարկ», Երեւան, 1976: էջ 252-256-ում բերուած են անվերնագիր հատուածներ Ա, ժե (երկրորդ կէսից եւ ընդհատումներով), իե (բացթողումներով). նշուած են տպագրութեան գրքերն ու գլուխները, առանց ցատկումների զգուշացման: Բացատրուած են մի քանի բառեր:

7. Գարամանեան Սիմոն, «Նոր քերականութիւն հայերէն գրաբար լեզուի», Կ. Պոլիս, 1897, էջ 303-ում կայ 12 տող (հրատարակութեան էջերով՝ 46.10 - 47.2):

8. Գալիմֆեարեան Գ., «Նորագոյն աղբերք Եզնիկայ Կողբացոյ Ընդդէմ աղանդոց մատենի», Վիեննա 1919: Եզնիկի հատուածները, որոնց տեղերը նշուած են էջերով, գուգադրուած են իրենց աղբերներին ուսումնասիրութեան հետեւեալ էջերում, բայց նկատելի են չձանուցուած բնագրային շեղումներ Վ-ից.

- էջ 10-13, Եզն. էջ 14-16 (հատուածներ).
- էջ 15, Եզն. էջ 8.24.
- էջ 16, Եզն. էջ 25.5, 29.4 եւ շար.
- էջ 22-86, Եզն. էջ 19.8-58.
- էջ 92-94, Եզն. էջ 75.17-26, 76.3 եւ շար.

էջատակերում կան ծանօթագրութիւններ:

9. Գարագաշեան Ա. Մ. եւ Գուրգէն Յ., «Ճաշակ ոսկեղէն դպրութեան», հատ. Ա, Կ. Պոլիս, 1887 եւ հատ. Բ, 1889:

Հատ. Ա, էջ 109-129, Ա.Մ.Գ.-ն իր «Հաւատալ սնտոեաց» յօդուածում (էջ 113-120) մէջբերել է հատուածներ Եզնիկի Ա, իդ եւ իգ գլուխներէր:

Հատ. Բ, դարձեալ Ա.Մ.Գ.-ն իր «Ցաւելուած ի պատմութիւն մեր գհայ լեզուէ» յօդուածի (էջ 1-43) 35-36 էջերում «Պատմութիւն Մարկիոնի յԵզնիկայ» ենթավերնագրի տակ արտատպել է Եզն. Դ, ժգ (էջ 296-298), թէեւ հատուածի վերջում նշել է միայն «Եզն. 296»:

Նոյն հատորում, էջ 36-37, «Սուք ի մէջ Զրուանայ եւ որդւոց նորա, Արհմենին եւ Որմզդի, յԵզնիկայ» ենթավերնագրի տակ նոյն յօդուածագիրը արտատպել է Եզն. Բ, ա, առանց հրատարակութեան գրքի կամ էջի նշման:

10. Գարագաշեան Ա. Մ., «Հատընտիր քաղուածք», Կ. Պոլիս, 1891, 5-րդ տպ.: 211-213 էջերում բերուած են Եզնիկից տողեր, որոնք բնագրի համեմատութեամբ համառօտուած են, պարզեցուած, աշակերտների գիտելիքների մակարդակին յարմարեցրած, փակագծերում որոշ բառերի բացատրութեամբ: Աւելորդ է տեղերը որոնել Եզնիկի գրքում, որի անունն անգամ յիշատակուած չէ: Այս եղանակը մեզ դատապարտելի է թուում:

11. Դուրեան Ե., «Ընթացք ի Գրոց բարբառ», Գ տարի, Երուսաղէմ, 1930, էջ 49-50, Եզն. Բ, ժը-ժք (թերի): էջ 55-58, Եզն. Գ, դ, ժա-ժգ: Այս տեղերը նշանակուած են, բայց թերիները կախման կէտերով ազդարարուած չեն: Տրուած են բառերի պացատրութիւններ եւ քերականական լուսաբանումներ:

12. Դուրեան Ե., «Պատմութիւն հայ մատենագրութեան», Երուսաղէմ, 1933, էջ 90-92, Եզն. Ա, ժե եւ Բ, ժք. տեղերը նշանակուած են: Հատուածները նմուշի համար են:

13. Եզնիկ Կողբացի, «Եղծ Բէշին Պարսից», Տիգրիս, 1913, 30 էջ. դպրոցական գործածութեան համար, առանց նախաբանի, ծանօթագրութեան կամ բառերի պատգամութեան: Եզնիկի Մատենագրութեան մէջ այս մասնակի հրատարակութիւնը չի յիշատակուել ուրիշների կողմից: Հրատարակիչ՝ անյայտ:
14. Թոռնեան Թ., «Հատրնտիք ընթերցումով ի մատենագրութեանց նախնեաց», հատ. Ա, Վիեննա, 1-ին տպ., 1866. 2-րդ տպ. (որ օգտագործել ենք), 1891: էջ 1-65, «Եզնիկ Կողբացի, Բնորդէմ աղանդոց», 1-21 համարակալուած եւ վերնագրուած հատուածներ, չորս գրքերից ընտրուած: Նշանակուած չեն տեղերը, ընդհատումներ կատարուած են առանց տեղեկացնելու, ինչ որ խրախուսելի չէ: Էջատակերում տրուած են քերականական եւ բառագիտական արժէքաւոր բացատրութիւններ. քերականական կանոնների համար յղումներն ուղղուած են Վ. Չալբխեանի եւ Ա. Այտրենեանի աշխատասիրած «Բերականութիւն հայկազնեան լեզուի» ցարդ չգերազանցուած աշխատութեան (Վիեննա, 1885): Առաջարկուած են բնագրային սրբագրութիւններ: Գրաբար բնագրերի ուսուցողական ուսումնասիրութեան տիպար կը լինէր այս «Հատրնտիք»-ը, եթէ սխալ տպագրութիւն չտար Եզնիկի երկը կառուցուածքի մասին՝ իրար կցելով հատուածներ, որոնք բնագրում նոյն շարունակութիւնը չունեն:
15. Խաչիկեան Լեւոն, «Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը», որպէս հայ մատենագրութեան երախայրիք» («Բանբեր Մատենագրարանի», 1964, թ. 7). էջ 315-ում ըստ Մարիէի 1959 թ. հրատարակութեան էջ 37, տ. 11-12, էջ 319-328-ում զանազան հատուածներ, որոնց տեղերը նշուած են: Այս հատուածները համադրուել են «Հարցում»-ի բնագրին, որը, իբր, Եզնիկի հայերէն մէկ աղբիւրն է եղել: Ունի վերպակներ:
16. Կարիէր Օ., «Եզնիկայ մէկ նոր աղբիւրը», ՀԱ, 1900, էջ 183-186. Բար Սուսի բնագրին զուգարուած է Եզն. Բ, ա:
17. Կոռնեան Անդ., «Գրաբար» [լասագիրք], Պէյրութ, 1967: Եզնիկից (Ա, ա, բ, գ) բերուած են առանձին նախադասութիւններ, առանց տեղերի նշանակման: Տրուած են որոշ բառերի բացատրութիւններ եւ քերականական 9 ծանօթութիւն:
18. Լազարեան Ռ. Ս. եւ Աւետիսեան Հ. Մ., տե՛ս Աւետիսեան Հ. Մ. վերելում:
19. Լազարեան Ա., «Գրաբարի դասագիրք», Երեւան, 1951: էջ 158-181, նոյնութեամբ արտատպուած են Թ. Թոռնեանի «Հատրնտիք»-ի եզնիկեան հատուածները՝ առանց որեւէ տեղեկացման (ինչ որ դատապարտելի ենք գտնում): Անտեսուած են վերջինիս թանկագին ծանօթագրութիւնները, ինչպէս նաեւ հատուածներին տուած վերնագրերը: էջ 319-321, «Եզնիկ», համառոտ տեղեկութիւններ հեղինակի, նրա լեզուի եւ ոճի մասին:
20. Միքնասեան Մարտիրոս, «Գրաբարի գործնական դասընթաց», Անթիլիաս (Պէյրութ), 1976, 367 էջ: Զանազան էջերում դրուած են Եզնիկի երկից ընտրուած նախադասութիւններ, լրիւ կամ մասնատուած, սակայն չբառարկուած, չարմարեցուած, որոնց տեղերը նշուած չեն, եւնեւ ղ դասագրքի սկզբունքից: Սրանցից բացի տրուած են նաեւ ամբողջական հատուածներ, որոնց տեղերը նշուած են ըստ Լ. Մարիէի եւ Շ. Մերսիէի հրատարակութեան (Փարիզ, 1959), որից արտատպուած են: Դասագրքի բովանդակութեան, ըստ որում եւ ընթերցանութիւնների, ինչպէս նաեւ քերականութեան ցանկերը անտեսուել են հրատարակչի կողմից, առանց հեղինակի գիտութեան: Հատուածներին չեն ուղեկցում բացատրութիւններ կամ ծանօթագրութիւններ:
- Ծանօթ.՝ Փարիզեան 1959 թ. հրատարակութեան էջ 106-ը ուսումնասիրութեան համար արտատպուած է մեր «Եզնիկի մի հատուածի մասին» յօդուածում («Բազմավէպ», 1974, թ. 1-2, էջ 106-107): Կան վերպակներ. 1-ին նախադասութեան ի ծնունդս կարդա՛ ծնունդս, 2-րդի համարի-ն կարդա՛ համարին, 3-րդի գիտել-ը կարդա՛ հետ: Սեր բոլոր սրբագրութիւնները չէին իրականացուել:
21. Նազարեան Թ., «Հաւաքածոյք յընտիք մատենագրաց ի պէտս ազգային վարժարանաց», Կ. Պոլիս, 1870, հատ. Ա, էջ 94-125, վերնագրուած հատուածներ Եզնիկի չորս «գրքերից» առանց տեղերի նշանակման, որոշ բառերի բացատրութեամբ: Որտե՛ս սխալաշատ:
22. Ներսիսեան Վ. եւ Մաղոյեան Ա., «Հայոց հին եւ միջնադարեան արձակի քրեատումատի», Եր., 1981, էջ 307-308, Ա, գ, «Արդ... արշաւեցուցանել»:

23. Կարաբախեան Պ. Ե., «Գրաբարի ուղեցոյց», Երեւան, 1967: էջ 112-113, հատուած՝ «Որմիզդ եւ Արհմն» վերնագրուած, Թիֆլիսի տպագրութիւնից (1914 թ.) արտատպուած, էջ 79-80, այն է՛ Բ, ա, որոշ բառերի բացատրութեամբ:
24. Կարաբախեան Պ. Ե., «Գրաբարի դասընթաց», Երեւան, 1964: էջ 103-108, Եզնիկ, Ա, գ, դ, ե եւ Բ, ա, բ, որոնց տեղերը նշանակուած են: Որոշ բառերի բացատրութիւն:
25. Պողարեան Ն., «Հայ գրողներ», Երուսաղէմ, 1971: էջ 19-20, Եզնիկ Բ, ժք, տեղը նշուած, առանց ծանօթագրութեան կամ բացատրութեան. հատուած նմուշի համար:
26. Տաշեան Յ., «Յուցակ հայերէն ձեռագրաց մատենագրարանի Միքիսարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895. էջ 337, սիւն. 2, 2եռ. 79 (ԺԹ դ.), թղ. 4բ, երկու հատուած՝ Եզնիկ, էջ 109 եւ 188-189: Թղ. 53ա-61, «Հատուածոյք ինչ բանի ընտիր հեղինակացն Հայոց»՝ «Քանի մը կտոր բան Եզնիկէն, Սորենացիէն եւ Լամբրոնացիէն» («Յուցակ», էջ 338, սիւն. 2). Եզնիկից մեզ յայտնի միակ հատուածը մի ձեռագրում:
27. Տէր-Միքնասեան Ե., «Միջնադարեան աղանդների ծագման եւ զարգացման պատմութիւնից», Երեւան, 1968, էջ 53. բազմակէտերով ընդհատուած հատուածներ Եզն. էջ 243-250-ից, որոնք նշանակուած են:
- Կը լինեն անշուշտ այլ արտատպումներ. Եզնիկի երկն անսպառ աղբիւր է:
- գ. Երկից արտատպումներ օտարալեզու հրատարակութիւններում
1. Adontz N., *Le Questionnaire de saint Grégoire l'Illuminateur et ses rapports avec Eznik* (ROC, 3^e série, t. V (XXV), 1925-1926, No. 3-4, էջ 309-357): Յօդուածի 322-328 էջերում արտատպուած են Եզնիկ, էջ 75. 24-26 - 81.11-12, 153.21 - 154.3-5, 82-197 (Ա, իա-իե), որոնց տեղերը նշուած են: Յօդուածագրի կարծիքով՝ այս հատուածները կապ ունեն «Կանոն Սրբոյն Գրիգորի Պարթեւի Հարցումն եւ պատասխանիք նորա» գրուածքի հետ, որն իբր Եզնիկի հայերէն մի աղբիւր է:
2. Ermoni V., *Marcion dans la littérature arménienne* (ROC, 1896, էջ 461-480): էջ 466-469-ում Եզնիկ Դ, ա, ժգ: Կայ նաեւ առանձնատիպ:
3. Jensen H., *Altarmenische Chrestomatie*, Heidelberg, 1964, էջ 85-103, Եզնիկ Ա, ժբ-ժդ եւ Բ, ա-ժ, ծանօթագրութիւններով:
4. Mariès L., *Le De Deo d'Ezrik de Kotb*, Paris, 1924. զանազան էջերում կարճ հատուածներ Եզնիկից՝ ուսումնասիրութեան համար:
5. Mariès L., *Étude sur quelques noms et verbes d'existence chez Ezrik. À propos de la page 241*, Paris, 1928. էջ 109-110-ում՝ Եզնիկ, էջ 239.25 - 241.26. տեղերը նշուած են. ուսումնասիրութեան համար են բերուած:
6. Meillet A., *Altarmenisches Elementarbuch*, Heidelberg, 1913, էջ 154-158, գիրք Դ, ա, սովորողների ընթերցանութեան համար:
7. Minassian M., *À propos d'un passage d'Ezrik: P. 241, «Le Muséeon»*, 1973, t. 86, 3-4, էջ 341-363. էջ 341-343-ում ուսումնասիրութեան համար բերուած է Եզնիկ, 1959, պարբ. 356-357:
8. Minassian M., *Manuel pratique d'arménien ancien*, Genève, 1976. 1959 թ. հրատարակութիւնից հատուածներ եւ առանձին տողեր ընթերցանութեան եւ թարգմանութեան համար, առանց բացատրութիւնների, ինչպէս պահանջում է դասագիրքը:
9. Petermann H., *Grammatica linguae armeniacae*, Բեռլին, 1837. էջ 44-ում Եզնիկ, Բ, ա, ընթերցանութեան համար:
10. Туманян Э. Г., *Древнеармянский язык*, [ուսուերէն՝ «Հին հայերէն»], Մոսկուա, 1971. էջ 438-ում թիֆլիսեան հրատարակութիւնից, էջ 13, էջ 439-ում՝ էջ 140-141-ից. նմուշի համար:

Զ. ԵՐԿԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ա. Ամբողջական թարգմանություններ (Լեզուների այբբենական կարգով)

Երկը մէկ անգամ թարգմանուել է արեւելահայերէն, մէկ անգամ արեւմտահայերէն, երկու անգամ գերմաներէն, մէկ անգամ ռուսերէն եւ երկու անգամ ֆրանսերէն:

1. Արեւելահայերէն թարգմանություններ

Աբրահամեան Ա. Ա., Եզնիկ Կողբացի, Աղանդների հերժոււմը, թարգմանություններ, ներածություններ եւ ծանօթագրություններ, Երեւան, 1970:

Գրախօս. Մինասեան Մ., «Ինտոլոգիաներ «Եղծ աղանդոց»-ի նոր թարգմանութեան մասին» («Միտն», Երուսաղէմ, 1974, թ. 1-2, էջ 89-93. թ. 3-6, էջ 166-173. թ. 9-12, էջ 376-388): Սխալաշատ թարգմանություններ:

2. Արեւմտահայերէն թարգմանություններ

1. Ուշատուրեան Գարեգին Տրապիզոնցի, Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Պուէնոս Այրէս, 1951. Ընագրի հրատարակչի թարգմանությունը բնագրի հանդիսակաց էջում է. սխալաշատ թարգմանություն, որին մասամբ անդրադարձել է Մ. Մինասեանը ՊՀ, 1970, 2, էջ 179-196-ում Եզնիկի ռուսերէն թարգմանությունների զրախօսութեան մէջ:

2. Բալուցեան Յակոբ, Եզնիկ Կողբացի, Բագրեւանդայ եպիսկոպոս, Աղանդներու հերժոււմը, անտիպ, Երուսաղէմ, Ս. Յակոբեանց վանքի դիւան. ունի յառաջաբան, Պոլիս, 1912 թ., ներկայացուցած է Իզմիրեան մրցանակի համար. բաւականին յաջող:

3. Գերմաներէն երկու թարգմանություններ

1. Schmid (Joh. Michael), Des Wardapet Eznik von Kolb. Wider die Sekten. Aus dem Armenischen übersetzt und mit Einleitung, Inhalts-Übersichten und Anmerkungen versehen, Wien, 1900, Միտիթաբեան Միթաբեան հրատարակություններ:

Ծան.— Ներածութեան եւ ստորեւ նշուող 1-5 զրախօսությունների հայերէն թարգմանությունները (թարգմ. Գ. Գալէմբեարեան) տե՛ս վերջինիս «Նորագոյն աղբերք», «Յաւելուածք». այս զրախօսությունները դրական են, որոշ դիտողություններով: Ուստի բոլորովին անհիմն է Վ. Զալոյեանի արձակած «չատ թէ քիչ բաւարար թարգմանութեամբ» վճիռը («Հայոց Փիլ», 63, ծ. 21):

Գրախօսություններ

1. N. Bonwetsch, „Theol. Literaturblatt“, Leipzig, 1900, Nr. 19.
2. P. Vetter, „Allgemeines Literaturblatt“, 1. Sept. 1900, Nr. 17, Wien. Տեղեկություն հանդէսներում „Literarische Rundschau“, Freiburg, 1901, Sept., No. 9: „Theologische Quartalschrift“, 1901, S. 447-448.
3. Meillet A., „Revue critique“, 12 nov. 1900, No. 46, p. 374-376. Մ. Մինասեանի թարգմանություններ տե՛ս Ա. Մեյլե, «Հայագիտական ուսումնասիրություններ», Երեւան, 1978, էջ 575-576:
4. S. Weber, „Oberrheinisches Pastoralblatt“, 1900, Nr. 24, S. 351-353.
5. Մելիք Ս. Գալիթ-Բէլի, «Paris-Nouvelles», 1900 թ. մայիսի 7, որից օգտուելով տեղեկություններ հաղորդել են 1900 թ. ապրիլի 29-ի իրենց թուերում հետեւեալ պարբերականները. «Բիւրակն» (թ. 30), «Արեւելք» (թ. 4311), «Բիւզանդիոն» (թ. 1081), «Մաղիկ» (թ. 153), «Սուրհանդակ» (թ. 357):
6. Տաշեան Յ., ՀԱ, 1900, թ. 5-6, էջ 179-180: - Գրախօսողը յայտնում է (էջ 179), թէ Գ. Գալէմբեարեանի «զրոմամբ ձեռնարկած է թարգմանիչն այս գործին, եւ որ այլեւայլ տեսակետով մասնակցած է», այն է՝ տրամադրելով իր բնագրային սրբագրությունները եւ վերանայելով թարգմանությունը. իսկ Ռ. Պարոնը «յատկապէս մտադրել էր լո՛ւրջ քննարկելու թարգմանութեան ըստ կարելույն ճշգրտելու հայ բնագրին համեմատ» (ն. տ., էջ 180):
7. Եղ. Դուրեան Ե., «Մասիս», 1900, թ. 24, 28, 31, որ եւ «Ամբողջ երկեր», 2, էջ 185-196, 1935 թ.: - Դրական կարծիք մի քանի դիտողություններով: Այնուհետեւ բանավէճ Գ. Գալէմբեարեանի հետ. մանրամասն մեր Մատենագիտութեան մէջ:
8. Գալէմբեարեան Գ., «Եզնիկի գերմաներէն թարգմանություններ», «Մասիս», 4, Պոլիս, 1900, թ. 26, 403-406: - Պատասխան Ե. Դուրեանին:

9. Նոյն, «Իարձեալ Եզնիկի գերմաներէն թարգմանութիւնը», «Մասիս», 1900, թ. 30, 472-476: - Պատասխան Ե. Դուրեանին: Այս առթիւ՝ «Բիւզանդիոն», 1904, թ. 2397:

10. «Արարատ», Վաղարշապատ, 1903, թ. 7. Հենք տեսել:

2. Weber (Simon), Eznik von Kolb, Wider die Irrlehren. Bibliothek der Kirchenväter, 57, „Ausgewählte Schriften der armenischen Kirchenväter“, I, München, 1927.

4. Ռուսերէն թարգմանություններ

Чалоян В. К., Езник Кохбази, Книга опровержений (О добре и зле).

Վ. Կ. Զալոյեան, Գիրք հերժմանց (Յաղագս բարւոյ եւ չարի) Եզնիկայ Կողբացոյ, Երեւան, 1968, առաջաբան, թարգմանություններ եւ ծանօթագրություններ:

Քննադատություններ

Մ. Մինասեան, ՊՀ, 1970, 2, 179-196, «Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի ռուսերէն թարգմանութեան մասին». սխալաշատ թարգմանություններ:

Նոյն զրախօսութեան ֆրանսերէն տարբերակ՝ M. Minassian, La traduction russe d'Eznik de Kolb, REArm, NS, IX, 1972, 79-101:

5. Ֆրանսերէն երկու թարգմանություններ

1. Florival (Le Vaillant de), Réfutation des sectes des Païens, de la religion des Perses, de la religion des Sages de la Grèce, de la secte de Marcion, par le Docteur Eznig, auteur arménien du V^e siècle... Paris, 1853, in -8°, VIII + 213 էջ. սխալաշատ եւ անյաջող թարգմանություններ:

Քննադատություններ

1. Wickering (Armand de), Eznik de Goghph, évêque de Pakrévant, auteur arménien du cinquième siècle et son traducteur français (ROA, t. III, Paris, 1856, p. 207-216). Խիստ, բայց իրաւացի քննադատություններ:

2. «Եւրպա» (անտորագիր), 1854, թ. 21, էջ 85. տեղեկատու, հայերէն թարգմանութեամբ մէջբերումներ է կատարել թարգմանչի առաջաբանից:

3. V. Langlois, Collection, II, 1869, 372. «Դժբախտաբար այս թարգմանությունը շատ անհարազատ է բնագրին եւ շատ թերի գաղտնի միայն կարող է տալ Եզնիկի գրքի արժանիքների մասին»:

4. Միք. Միքի, գերմաներէն իր թարգմանութեան առաջաբանում. Գ. Գալէմբեարեանի հայերէն թարգմանությունը տե՛ս նրա Նորագոյն աղբերքի «Յաւելուածք»-ում. «Լը Վայեան դը Ֆլորիվալի անճիշտ եւ այս պատճառաւ քիչ գործածուած եւ զրեթէ անգործածելի գաղղիերէն թարգմանություն»:

2. Mariès (Louis), Mercier (Charles), Eznik de Kolb, De Deo. Traduction française, Notes et Tables, Paris, 1959, «Patrologia Orientalis», t. 28, fasc. 4.

Գրախօսություններ

1. Leroy (Maurice), «L'antiquité Classique», t. 99, 1960, fasc. 1, էջ 216-217. Դրական կարծիք:
2. Froideveaux (Léon-Marie), «Recherches de science religieuse», t. 36, p. 453-459. Դրական կարծիք:
3. Խաչերեան Լ., ՊՀ, 1962, 2, էջ 188-193: Դրական գնահատման մէջ անճիշտ դիտողություններ:
4. Մինասեան Մ., «Հայագիտ. կուի Մարիէս», գրական կարծիք եւ Լ. Ուշտուրեանի անճիշտ քննադատութեան ճերբում:
5. Minassian M., Remarques sur la traduction française d'Eznik, «Cahiers Ferdinand de Saussure», 1977, t. 31, 177-184, որի հիմնական մտքերն են. Եզնիկի երկի ոչ մի թարգմանություն չունի այս թարգմանութեան ճշգրտությունը, բայց սա ծանրաբեռնուած է ընդմիջարկություններով եւ տեղ-տեղ ունի սխալներ:

բ. Երկի հատուածային թարգմանություններ

Նշում ենք Լեզուների անունների այբբենական կարգով:

1. Ա ն գ լ եր է ն

R. C. Zaehner, Zurvan: A Zoroastrian Dilemma, Oxford, 1955 = New York, 1972. էջ 438-439, Բ գրքի ը գլխի ամբողջական թարգմանություն երկի 1926-ի վենետիկեան հրատարակությունից, եւ էջ 448-ում էջ 154-ի թարգմանություններ:

2. Գ եր մ ա ն եր է ն

1. Hübschmann H., Armeniaca, I, 15. Zur persischen Eschatologie, Straßburg, 1880 = Kleine Schriften zum Armenischen, New York, 1976, S. 110: Եզնիկ էջ 142.8 - 143.18.

2. Neumann C. Fr., „Hermes“, 33. Bd., Leipzig, 1892. S. 177 ff.
3. Neuman C. Fr., „Zeitschrift für die historische Theologie“, IV Bd., Leipzig, 1834, S. 71 ff.. Եզն. Բ գրքից հատուածներ.
4. Vetter P., in Nirschl J., „Lehrbuch der Patrologie und Patristik“, III, Mainz, 1885, S. 231–239, հատուածներ.
5. Vetter P., „Katholik“, 1898, S. 214–230, 311–325.
6. Weber S., Zur Geltung der Hl. Schrift bei den alten Armeniern, „Theolog. Quartalschrift“, 1896, S. 463–489, հատուածներ.
7. Windischmann Fr., „Bayerische Annalen für Vaterlandskunde und Literatur“, München, 1834, II. 25 Jan., S. 81 ff.. Բ գրքից հատուածներ.

3. Լ ա տ ի ն ե Ր Է Ն

1. Mariès L., Étude sur quelques noms et verbes d'existence chez Eznik. A Propos de la page 241, Paris, 1928, p. 111–112. Եզն., 141–142.
 2. Esbroeck M., Եզնիկ, 1959, էջ 106, տ. 1–26, «Le Muséon», t. 83, fsc. 3–4, 1974, 141–142.
- Ֆ. Նեւ (F. Nève) հայագետն իր L'Arménie chrétienne աշխատութեան էջ 21-ի ծան. 3-ում յայտնել է, թէ Windischmann-ը թողել է Եզնիկի երկի լատիներէն մի անտիպ թարգմանութիւն, որը մեզ անծանօթ է:

4. Հ ա յ Ե Ր Է Ն

1. «Քերականութիւն գործնական. Քիչ ատենի մէջ շարադրութեան վարժելու համար», անստորագիր, Ս. Ղազար, 1836, էջ 72–73, Եզն. 1826, էջ 17–18-ի արեւմտահայերէն անստորագիր թարգմանութիւն, որ Հայկ Պէրպէրեանը բնագրին զուգահեռ վերահրատարակել է «Եզնիկ Կողբացիի մէկ հատուածին...» խորագրի տակ (տե՛ս մեր Մատենագիտութիւնը):

5. Թ ու ս Ե Ր Է Ն

1. Кучун-Ионнесева, X. И., Кратный очерк армянской литературы V вена («Восточный сборник в честь А. Н. Веселовского», Москва, 1914, էջ 379–392), էջ 383, Բ գրքից մի հատուածի թարգմանութիւն:
2. Туманян А., Дуализм персов (Извлечение из армянских писателей V вена) («Восточный сборник . . .», էջ 393–410). Փոքր հատուածների թարգմանութիւն:
3. Эзов Г. А., Об учении нерсидских магов. Сочинение Езника, армянского писателя V вена (СПБ, 1858, № 97–98). Եզնիկ, Բ գրքի մասնակի¹⁰⁶ կամ լրիւ¹⁰⁷ թարգմանութիւն: Վ. Չալոյեանն այս հրատարակութեան տարին սխալմամբ դնում է 1958, փիս 1858 («Հայոց փիլ.», էջ 63, ծ. 21):

6. Տ Ր ա ն ս Ե Ր Է Ն

1. Académie (Un membre de l') arménienne de Saint-Lazare, Eznik de Goghph, Réfutation des sectes. Extrait du ch. II. Réfutation de la religion des Perses (V. Langlois, Collection, t. II, 1869, p. 375–382). Թարգմանել է Բ, ա-ժա: Եզնիկի իր գերմաներէն թարգմանութեան առաջաբանում Միք. Շմիդն այս թարգմանութեան մասին գրել է. «Թէեւ իմաստին կողմանէ հաւատարիմ է, բայց ամէն տեղ բառական չէ», (Գ. Գալէմբարեան, Նորագոյն աղբերք, «Յաւելուածք», էջ 7, ծան. 1): Վ. Էրմոնին ստորեւ նշուող իր յօդուածում այս թարգմանութիւնը վերագրել է Վ. Լանգլուային, որովհետեւ սա Collection-ի հրատարակիչն է եղել: Նոյն սխալը գործել է Նիբերգը, տե՛ս ստորեւ:
2. Darmesterer, James, Ormazd et Ahriman. Leurs origines et leur histoire, Paris, 1877. էջ 326–327-ում թարգմանել է Եզնիկ Բ, ա:
3. Dulaurier Ed., Cosmogonie des Perses d'après Eznig [. . .] (ROA, nouv. (3^e) série, V, Paris, 1857, p. 253–262 = REArm, Nouv. série, VII, 1970, p. 528–535). Թարգմանել է Եզնիկ, Բ, ա եւ կարճ հատուածներ Բ գրքի Գ, Ը, Ք, Ժ գլուխներից: Տե՛ս «Արարատ» Վաղարշապատ, 1882, թ. 8, էջ 253–254:

4. Ermoni V., Marcion dans la littérature arménienne (ROC, 1896, p. 461–480). էջ 470–473, թարգմանել է Եզնիկ, Դ, ա, ժգ: ՀԱ, 1897, էջ 123-ում ասուած է. «Ոչ այնչափ լաւ թարգմանութիւն . . . Ermoni Եզնիկայ կտրուկ եւ խորիմաստ բացատրութիւնները չէ կրցած շատ տեղ ըմբռնել, որ եւ անշուշտ գլխաւոր պատճառներէն է կատարեալ գաղափար կազմել չկարողանալուն»: Թարգմանութեան մասին բացասաբար տե՛ս նաեւ «Բիւրակն», 1898, էջ 374, եւ 390: «Էրմոնիի այն տկար փորձը, որ լեցուն է անճշտութիւններով» (Ե. Դուրեան, Ամբողջ երկեր, Զ, 185):

5. Mariès L., Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de «Contre les sectes», Paris, 1924. Չանագան էջերում ուսումնասիրութեան պահանջի բերմամբ թարգմանել է հատուածներ, որոնց տեղերը նշելն աւել որդ է:

6. Mariès L., Étude sur quelques noms et verbes d'existence chez Eznik. A propos de la page 241, Paris, 1928. էջ 109–115-ում լատիներէնի եւ Ֆրանսերէնի թարգմանել է Եզնիկ, էջ 239.25 – 241.26, իր ուսումնասիրութեան պահանջով:

7. Nyberg H. S., Questions de cosmogonie et de cosmologie mazdéennes (JA, 1931, t. 218, 72–73, 102). Հեղինակն իր ուսումնասիրութեան մէջ հատուածներ է արտատպել Վ. Լանգլուայի Collection-ի 2-րդ հատորում լոյս տեսած Ֆրանսերէնի թարգմանութիւնից, որ տե՛ս վերեւում Ֆրանսերէն, թ. 1. սխալմամբ թարգմանիչը համարել է Լանգլուային: Արտատպուած են՝ Եզնիկ, Բ, ա էջ 72–74-ում, Եզնիկ, Բ, գ էջ 102-ում, Եզնիկ, էջ 140-ից մի հատուածի արտատպութեամբ էջ 224–225-ում:

Է. ԵՐԿԻ ԱՅԺՄԵԱՆ ԵՒ ՉՄԻՒՌՆԵԱՆ ՁԵՌԱԳԻՐԸ

1. ԵՐԿԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՂ ԱՅԺՄԵԱՆ ՁԵՌԱԳԻՐԸ՝ ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ Թ. 1097 (Մ 1097)

ա. Ձեռագրի յայտնաբերումը, նկարագրութիւնը

Ասացինք, որ Եզնիկի երկի առաջին կամ զմիւսնեան տպագրութիւնից յետոյ նրա ձեռագիրը կորած կամ վառուած էր համարուում. վերջին անգամ 1784-ին այն տեսնողը եւ դրա վրայից այդ տպագրութեան մի օրինակը սրբագրողը եղել է Գ. Տէր-Յովհաննիսեանը: Եւ ահա ՀԱ-ն 1902 թ. յունիսի իր համարում, էջ 191, տպագրում է Հր. Աճառեանի հաղորդագրութիւնը Վաղարշապատից այն մասին, թէ էջմիածնի մատենադարանում յայտնաբերուել է Եզնիկի մի ձեռագիր, բայց ոչ որեւէ ձեռագիր. «Ուրախութիւնն ունիմ աւետելու Ձեզ [Յ. Տաշեանին] եւ Հ. Գալէմբարեանին թէ Եզնիկի միակ ձեռագիրը, որ «այրած էր Զմիւսնիոյ հրդեհին մէջ», գտնուեցաւ Ս. էջմիածնայ ձեռագրատան մէջ Եշ. Ապրիլ 25: Երէկ սկսանք համեմատել տպագրեալին հետ՝ նուաստս եւ Գալուստ Սարկաւազը: Մեր քննութեանց եւ համեմատութեանց արդիւնքը շատ շուտով լոյս կը տեսնէ տպագրութեամբ»: Արդարեւ, ՀԱ-ում 1904 թ. հատուածաբար հրատարակուելուց յետոյ, այդ «քննութեանց եւ համեմատութեանց արդիւնքը» առանձնատիպ լոյս տեսաւ նոյն տարում Գ. Տէր-Մկրտչեանի (կամ Միաբանի) «Քննութիւն եւ համեմատութիւն» խորագրով, 105 էջ: Եփրեմի եւ Եպիփանի սուրբգրային մեկնութիւնների հետ Եզնիկի երկը բովանդակուած է այդ ձեռագրում իբրեւ նախավերջին գրուածք: Այդ «Քննութեան» (համառօտ) վեց հատուածներից կամ գլուխներից հինգը գրել է Հր. Աճառեանը, իսկ երրորդը՝ «Ձեռագրական տարբերութիւնք», նա գրել է Միաբանի հետ: Թերեւս այս է պատճառը, որ մինչեւ օրս լոկ նրան են համարում Եզնիկի ձեռագիրը յայտնաբերողին, ինչ որ մի փոքր անարդարութիւն է Միաբանի նկատմամբ¹⁰⁸: Այս մասին գրեցիկի առաջաբանում (էջ Ե-Զ) լսեմք Հր. Աճառեանին իսկ, որ դեռեւս 1900-ից սկսած էջմիածնի ձեռագրատանը պատրաստելիս է եղել հայերէն տաղերի եւ գանձերի մի «լիակատար հաւաքածոյ». «Միաբանը կասկած յայտնեց թէ Կարին-

¹⁰⁸ Տե՛ս, օրինակ՝ L. Mariès, De Deo, էջ 10 եւ 14, կամ Վ. Չալոյեան, «Հայոց», էջ 63, ծան. 20: Այս մասին աւելի զգուշաւոր է Ա. Ա. Աբրահամեանը, որ գիտար Հր. Աճառեանին վերագրում է աւելացնելով «նախօք ունենալով Գ. Տէր-Մկրտչեանի ցուցումը» (Թարգմանութեան ներածութիւն, էջ 27): Ն. Ակիմեանը իրաւացիօրէն գրել է. «Գ. Տէր-Մկրտչեանի ցուցումը» (Թարգմանութեան ներածութիւն, էջ 1111 (Կար. Ցուց. 1091) ձեռագրին մէջ յերեւան հանցին» եւ այլն (Գ. չեան եւ Հ. Աճառեան 1902-ին էջմիածնի Թ. 1111 (Կար. Ցուց. 1091) ձեռագրին մէջ յերեւան հանցին» եւ այլն (Գ. Գալէմբարեան, Նորագոյն աղբերք, Յաւելուածք, էջ Թ):

եան [ցուցակով] թիւ 1111¹⁰⁷ եւ ուրիշ թիւ ձեռագիր մը (որ այժմ մոռցած եմ)¹⁰⁸ Եզնկայ անունը կը կրեն եւ հաւանականաբար Եզնկայ Ընդդէմ Աղանդոցն ըլլալու են. յանձնարարեց անպատճառ նայել այն երկու ձեռագրերը: [. . . 1902] ապրիլ 25, հինգշաբթի օրն էր, առջեւ շարուած խումբ մը ձեռագիրներու մէջէն մէկը բացի պատահաբար. աչքիս [էջ 2] հետեւեալ տողերը հանդիպեցան [. . .]. Եզնիկն էր, 1111¹⁰⁹ թիւ ձեռագիրը, այն որ Միաբանը յանձնարարած էր նայել». միւս ձեռագիրը «կը պարունակէր միայն Եզնկայ եւ Արձանի հարցմունքը»: Ինչպէս պարզուած է, Միաբանը աւելի վաղ էր նկատել Եզնիկի երկը նշուած ձեռագրում: Հր. Աճառեանը «Քննութեան» մէջ չի ասել, թէ այդ ձեռագիրը ե՛րբ եւ որտեղի՛ց էր բերուել էջմիածնի ձեռագրատունը, գուցէ դա յայտնի չէր: Ստորեւ կ'անդրադառնանք այն հարցին, թէ այդ ձեռագիրը Գլաճորի՛ համալսարանում էր գրուել արդեօք, բայց, հաւանաբար, այնտեղի՛ց էր փոխադրուել էջմիածին: Փրանսիացի հռչակաւոր հայագէտ Անտուան Մեյէն արդեօք ա՛յլ ձեռագիրը նկատի ունէր, երբ 1891 թ. յունիսի 14-ին էջմիածնի վանքից իր մի ազգական օրիորդի գրում էր. «Այստեղ ձեռքիս տակ ունեմ մի ձեռագիր, որ, եթէ չեմ սխալուում, կորած են համարում¹¹⁰»: Իսկ Ն. Ն. Բիւզանդացին աւելի վաղ՝ 1888 թ. օգոստոս 22-ին, Պոլսից ստացած Եզնիկի երկի 1863 թ. տպագիր իր օրինակի էջ 3-ում նշել է. «Ձեռագիրը» Չիթ = 1280 թուին յորում կայ եւ «Գիրք Եզնիկ վրայ Կողբացույ». ունի 2 եւ Յիշատակարան (Մայր Յուցակ էջմիածնի, թիւ 1091, 1, բ, էրես 144)»: Ուստի երեւանեան ձեռագիրը յայտնի էր բանասիրութեանը:

Ինչպէս գիտենք, Եզնիկի երկը բովանդակող ձեռագիրն այսօր Մաշտոցեան մատենադարանի (կամ պարզապէս աշխարհահռչակ Մատենադարանի) թ. 1097-ն է: Վերոյիշեալ «Քննութեան» մէջ Հր. Աճառեանը նկարագրել է այն, թէ եւ ոչ յատկօրէն եւ անելով չհիմնաւորուած ենթադրութիւններ: Ձեռագրի մի քանի յիշատակարաններին անդրադարձել է Գ. Յովսէփեանը (Հր. Աճառեանի նկարագրութիւնից յետոյ, դրանք տեսած լինելով անձամբ, թէ լոկ «Քննութեան» հիման վրայ¹¹¹), իր մի գրքում Գլաճորի համալսարանի մասին խօսելիս: Այս նոյն բարձրագոյն դպրոցի հիմնադրման թուականի եւ տեղի հարցը ուսումնասիրելիս ձեռագրի յիշատակագրութիւնների քննութեամբ զբաղուել է նաեւ Արտաշէս Մաթեոսեանը¹¹², իր տրամագրութեան տակ ունենալով Մ 1097 ձեռագիրը: Մենք ձեռքի տակ ունենք նոյն ձեռագրից՝ Եփրեմի մեկնութիւններից նմուշներ, էջ 145ա-ից եւ 321ա-ից բացի՝ միւս յիշատակագրութիւնները, Եզնիկի ամբողջ երկի եւ նրան յաջորդող մի կարճ գրուածքի 1-ին էջի լուսանկարները: Երկի լուսանկարներն արտատպել ենք Լուի Մարիէսին պատկանած մանրաժապակէնից:

Ըստ Հր. Աճառեանի, Մատենադարանի թ. 1097 ձեռագրի երկայնութիւնն է 16,5 սմ, լայնութիւնը 13 սմ, հաստութիւնը 6,3 սմ: Կողքերը կաշեպատ տախտակ են: Սկզբում եւ վերջում ունի երկաթազիր մի հին աւետարանից կտրուած մագաղաթեայ մէկական պահպանակ: Նիւթը բամբակէ թուղթ է: Առանց երկու մագաղաթեայ պահպանակները հաշուելու, ձեռագիրն ունի 323 թերթ (նախկինում «թուղթ»): էջմիածնի ձեռագրատանը մէկը մատիտով համարակալել է թերթերը, չհաշուած առաջինը, որի առաջին էրեսը կամ էջը վերջին անգամ նորոգել տուողի յիշատակարանն է: դատարկ են 321ա-ը: Համարակալողը երկու անգամ սխալուել է. մոռացել է թերթ 282-ն, կրկնել է թերթ 223-ը: Բուն գրիչը էջերի ստորին լուսանցքներում հայերէն փոքրատառերով, որոնք առնուած են հորիզոնական երկու գծիկների միջեւ եւ իրենցից առաջ ու յետոյ ունեն մէկ կէտ, համարակալել է պրակները, որոնք ունեն 12-ական թերթ կամ 24 էջ. պրակների համարները գրուած են նրանց թէ՛ առաջին եւ թէ՛ վերջին էջի տակ: Ձեռագիրն ունի 27 պրակ, որոնցից ժա-ն թերթի է եւ ունի 11 թերթ, իսկ ծգ-ն, նոյնպէս թերթի, ունի 9 թերթ. պակասող թերթերը դանակով կտրել է մէկը:

¹⁰⁷ Վրիպակ փիւ. 1091, որ ուղղել է նոյն Քննութեան էջ 1-ում. «Եզնկայ նորագիւտ ձեռագիրը կը կրէ 1111 թիւը, Կարինեան ցուցակով 1091»: Սակայն նրա վրիպակը տարածուել է տե՛ս օր. Վ. Զալոյեան, նշ. աշխատ., էջ 64: Գ. Յովսէփեանը գրել է «Ձեռ. էջմ. 1111/1907» (Խաղբակեանք, էջ 203, ծան. 1), որի երկրորդ թիւը վրիպակ է փիւ. 1091:
¹⁰⁸ Յատազբանը ստորագրուած եւ թուագրուած է Շուշում, 1903 թ. դեկտեմբեր:
¹⁰⁹ էջմիածնի վանքի ձեռագրատան այն ժամանակուայ համարով:
¹¹⁰ A. Meillet, *Lettres de Tiflis et d'Arménie*, Vienne, 1987, p. 91.
¹¹¹ Գ. Յովսէփեան, Խաղբակեանք, էջ 202-203:
¹¹² Ա. Մաթեոսեան, Յիբրաի, էջ 55-59.

բայց այդ թերթները Եզնիկի երկից չեն: Ձեռագիրն այլ մասերում պակաս թերթեր չունի: Կազմաւորի կամ վերանորոգողի սխալմունքով Եզնիկի երկում որոշ թերթեր յետ ու առաջ են ընկել, որի պատճառով էջերը պէտք է կարդալ 229, 301, 300, 302, 303, 305, 304 հերթականութեամբ: Եզնիկի երկն սկսուում է էջ 187բ-ի կէսից եւ վերջանում է 314բ-ի վերջին կամ 19-րդ տողով: Գրչագրուած է սեւ թանաքով, սակայն, ըստ Հր. Աճառեանի, գրուածքների խորագրերը եւ գլխագիր սկզբնատառերը կարմիր են, մի քանի շատ համեստ զարդերով: Գրութիւնը բոլորգիր է, միասիւն, միահետ կամ առանց բառերի անջատման (գրեթէ միշտ), ունի երկաթազիր կամ այլ ձեւի գըլխագրեր: էջերն ունեն 19-ական տող, բացի առաջին գրուածքի չորս էջերից, որոնք աւելի տողեր ունեն, խիտ են: Գրուած էջի մակերեսն է՝ 13 սմ բարձրութիւն եւ 9,5 սմ լայնութիւն: Չկան մանրանկարներ կամ լուսանցագրեր: Ձեռագիրը լաւ եւ մաքուր է պահպանուած, թէեւ գրչագրուել է 1280 թ.:

բ. Մ 1097 ձեռագրի բովանդակութիւնը, յիշատագրութիւնները, գրիչը, յիշատագրող ներքը
 1. Բովանդակութիւնը

Եզնիկի երկից առաջ 1ա-18բ-ի առաջին կէսը եւ յետոյ 315ա-320բ Ս. Գրքի մեկնութիւններ են: Դրանք մեզ հետաքրքրում են լոկ իրենց գրչութեամբ, ուղղագրութեամբ, սրբագրութեան ձեւերով, գրչի ո՛վ լինելով, յիշատակագրութիւններով եւ ոչ թէ բովանդակութեամբ: Դրանց 28 էջի լուսանկարները մեզ սիրով տրամադրեց Փրանսիացի հայագէտ Բերնար Ուտիէն (B. Outtier). չնորհակալութիւն:

2. Ձեռագրի յիշատակագրութիւնները

Եզնիկի երկում ոչ մի յիշատակագրութիւն չկայ: Առաջինը 1-ին թերթի չհամարակալուած 1-ին էջում է. մի փոքր կեղտոտուել է. գրուած է անվարժ ձեռքով. լրիւ մէջ բերուած է Հր. Աճառեանի «Քննութեան» էջ 4-5-ում: Դա ձեռագիրը վերջին անգամ նորոգել տուողի յիշատակարանն է. նորոգել է տուել իր եւ իր հարազատների հոգու փրկութեան համար: Նա «բարեմիտ եւ անասէր տանուտէր պաւղոսն» է¹¹³. «Սուրբ տառ» (յիշատակարանի վերջում «զուրբ գիրք») նորոգել է տուել «թվ. ի. ճ. ի.» (մ. թ. 1671)¹¹⁴ «եւ եղ ի դոն...», որի անունը մէկը ջնջել է: Յիշատակարանի 4 բառ «եղ ձեալ» են, ըստ Հր. Աճառեանի, որ չի նշել Ս. Արեւշատեանն այս յիշատակարանը մէջ բերելիս իր «Հայոց փիլիսոփայութեան...» յօդուածի էջ 57-ում:

Ըստ Հր. Աճառեանի նկարագրութեան, Ձեռ. 321ա-ում, որ մեր տրամագրութեան տակ չունենք, երկու յիշատակարան կայ, որոնց գրութեան որակը նշուած չէ: Առաջինը մասամբ է ընթեռնելի, որովհետեւ մէկը քերել է գրբերը. մնացածից, որ Հր. Աճառեանի «Քննութեան», էջ 16-17-ում է, տեղեկանում ենք, որ անունը -ոս վերջաւորուող մի անձ պատմում է, թէ «...ոչ ձոր» գնալիս՝ հանդիպել է Յակոբ անունով այրաբնակ մի ճգնաւորի, որը նրան է նուիրել այս ձեռագիրը. «ոչ գողով մեր նիւթ վարդապետութեան որ են գիրք՝ գմատեանս զայս յաճախապատում¹¹⁵ թագաւորութեանց մեզ շնորհաց»¹¹⁶: Տարեթիւ չկայ ընթեռնելի մասում: - Ձեռագրի նոյն 321ա էջի միւս յիշատակագրութիւնը մի ոմն Զաքարիայինն է. «Նս զաքարիա գնեցի գգիրքս ի հալալ եւ յարդար վաստակոց իմոց: Եւ ետու յովհաննէս վարդապետին յիշատակ...», նոյնպէս անթուական¹¹⁷:

¹¹³ Հր. Աճառեանը «Քննութեան» էջ 4-ում այս Պողոսի մասին գրել է. «Երկրորդ նորոգող մըն է տանուտէր Պողոս»: Արդ՝ քանի որ այս բառերից առաջ նա գրել էր, թէ թովմա վարդապետը ձեռագիրը սրբագրել է իր աշակերտի հետ, եւ ոչ թէ նորոգել, այդ երկրորդն աւելորդ էր: Դա թիւրմտացութեան մէջ է գցել Լ. Մարիէսին, որը Պողոսին վերաբերող նորոգող թարգմանել է correcteur («սրբագրիչ»), *De Deo*, 207-208:
¹¹⁴ Հր. Աճառեանը «Քննութեան» էջ 4-ում նորոգման թուականը գրել է ՌՊԻ = 1671, որի Զ-ն լինելու էր ձ: Լ. Մարիէսը նկատել է այս վրիպակը եւ ուղղել իր «*De Deo*» աշխատութեան մէջ, էջ 208. ուղղուած է նաեւ «Քննութեան» երեւանեան վերահրատարակութեան մէջ, Երեւան, 1976, էջ 111:
¹¹⁵ Ձեռագրի առաջին գրուածքի՝ Նպիվանի մի մեկնութեան, խորագրի առաջին բառն է սա, որ չփոթելու չէ յայտնի «Յախախապատում» գրքի հետ:
¹¹⁶ Հր. Աճառեան, Քննութեան, էջ 16:
¹¹⁷ Ն. տ., էջ 17:

Տարբեր բնույթի եւ զանազան ձեւաչափերով յիշատակագրութիւններ կան նաեւ Զեռագրի 2բ, 6բ, 37բ, 60բ, 108բ, 145ա եւ 320բ էջերում, որոնցից բոլորը նոյն կարեւորութիւնը չունեն բանասիրութեան համար:


Վէճի առարկայ է դարձել, թէ Մ 1097 Զեռ-ը քանի՛ գրիչ է ունեցել, եւ ովքեր են յիշատակագրութիւններ թողել դրանում, եւ որո՞նք են վերջիններս հեղինակները: Զեռագրի ԼՈՒՍԵՐ գրչի յիշատակարանից բացի, Հր. Աճառեանը միւսները տարբերակել է իրենց ձեւաչափով, «նոյն», «առաջին գրչով», «տարբեր գրչով», «բարակ գրչով», որոնք միանգամայն գիտական տարբերակումներ չեն: Ըստ դրանց ձեւաչափերի, բայց եւ ըստ յիշատակագրողների անունների, մենք հետեւեալ կերպ ենք դասակարգում յիշատակագրութիւնները:

Ա. ԼՈՒՍԵՐ գրչի վեց յիշատակագրութիւնները

Նրա անունը գլխաւոր յիշատակարանում է, իսկ միւսները նոյնացնում ենք ըստ ձեւաչափի նոյնութեան:

1) Ըստ Հր. Աճառեանի («Քննութիւն», էջ 7) եւ Գ. Յովսէփեանի («Խաղբակեանք», էջ 202 եւ 203), Զեռ. էջ 145ա-ում, «Մնացորդաց» մեկնութեան վերջին տողից յետոյ, որի պատճառով յիշատակագրողը գործածել է «աստուածաշունչ» բառը, կայ հետեւեալ յիշատակարանը, որ ամենից կարեւորն է որպէս ձեռագրի գրչի յիշատակարան իր տարբերով:

«Շնորհաւ և ողորմութիւն այ կատարեցի ցոտս ածաշունչ եւ փցուն և ապիկար գրող լուսերի վայելումն քր և ամենագով. վնն ներսէսի¹¹⁸. աղաչեմ ցոտսս լուսերամից յիշել գրագմամեղ գրողիկս և գծառանկարդ գրիս գիտետոր գվղն և ան յիշողացտ ողորմեսցի. Ի թուիս հայոց. չիք գրեցաւ.»:



ԼՈՒՍԵՐ գրչի յիշատակարանը:

Ներքեւում՝ Թովմա վարդապետի յիշատակագրութիւնը (Զեռ. 145ա): (Ա. Գ. Աբրահամեան, Գլաճորի համալսարանը. Համաոտ ակնարկ, Երեւան, 1983)

¹¹⁸ Գ. Յովսէփեանն այս յիշատակարանը մէջ է բերել մինչեւ այս բառը. (Խաղբակեանք, էջ 202). մի քանի անգամ անտեսել է յապաւումների պատիւը. այն դարձրել է Աձյ, ածաշունչը՝ Աձաշունչ, վղնը կարգացել է «վարդառնի». գրել է ներսէսին (Զեռ-ում անճանաչելի են Ե-ն ու Է-ն). յիշատակարանի լուսանկարը՝ ն. տ., էջ 203, ինչպէս ունի Ա. Գ. Աբրահամեանը ՊՁ, 1982, 1, էջ 171, եւ նոյնը՝ «Գլաճորի համալսարանը. համաոտ ուրուագիծ», 1983, էջ 32-ից յետոյ, նկ. 12:

2) Զեռ. էջ 2բ, տ. 21, բնագրի վերջին տողից անմիջապէս յետոյ. «Զմեղապարտս յիշեսցիք ի քս աղաչեմ և գծնողսն իմ.»։ Հր. Աճառեանը, «Քննութիւն», էջ 5, բնագրի նախապէս է քս (բուժով) ու քս (փխ և):

3) Զեռ. էջ 37բ, տ. 3, բնագրի տողի շարունակութեան մէջ. «Զմեղապարտս յիշեսցիք ի քս.»., վրան կէտերով, ըստ որում ք-ն ուղղուած է ց-ից:

4) Զեռ. էջ 60բ, տ. 6 ն., բնագրի տողի վերջում. «աւգնէ քս.»., վրան կէտերով:

5) Նախորդին յաջորդող տողում, 4 տառաչափ ներսից. «Կատարեցաւ մեկնութիւն սամուելի. մեկնիչ թագաւորութեանն.»., վրան կէտերով: Այս բառերը նոյն Լուսերի ձեւաչափով են, բայց գրչածայրն աւելի բարակ է, ու թանաքն աւելի թոյլ, ինչպէս նոյն էջի բնագրային 4 տողերը եւ յաջորդող էջ 61ա-ի 14 տողերը, ուր, սակայն, կան հաստ գրչով գծուած երկաթազիր գլխագրեր. շարունակութիւնը դարձեալ հաստ գրչով է:

6) Զեռ. էջ 108բ, տ. 6-7. «Կատարեցաւ մեկնութիւն թագաւորութեանն շնորհոցն այ.»., դարձեալ բարակ գրչածայրով, ինչպէս յաջորդող բնագրային մէկ տողը միայն, մնացածը նորից հաստ գրչածայրով եւ աւելի թոււնդ թանաքով. նկատենք օ-ն:

Լուսեր գրչի գրերի բարակութիւնից, միջակ հաստութիւնից եւ հաստութիւնից կարելի է եզրակացնել, որ նա աշխատել է մի քանի գրիչներով՝ բարակ, միջակ ու հաստ գրող, թոււնդ, նուազ թոււնդ ու կարմիր մեկնով: Վերջակէտ չի գործածել յիշատակարանների վերջում:

Բ. ԵՍՍԵՐ ԵՎ ՅՈՒՍԵՒՆԻՆԻ ԳՐՈՒՄ

Զեռ. էջ 6բ, տ. 4-7. «Զպատահեալսդ այսմ մատենի աղաչեմ յիշել յաղաթս ցոտացաղ սորին գմեժ հոտտորն ներսէս. նոյնպ և գնուաստ ոգիս եսայի հետևող և աշակերտ քր առնն այ ներս վգի.»։ Սրա ձեռագիրը Լուսեր գրչի ձեռագրից տարբերում է, գրերն իրարից փոքր-ինչ աւելի անջատ են, թէեւ բառերը միահետ են, ու տառերն աւելի նոտրատիւ: Վերջակէտ է գրել:



1) Յանդիմանութիւն, Զեռ. էջ 108բ, ստորին լուսանցում, մանր եւ բարակ տառերով, որոնք մի փոքր տգեղ են, բառերն՝ անջատ:

«Աւա՛ղ և եղո՛ւկ է անգէտ գրագրին¹¹⁹. ահա՛ժ հոգի. ի՞նչ կառնես¹²⁰. գիտեմ բանակա՛ն ես. զգիքս տողել ես և մեկիմեկ¹²¹ յինչ ես կցել.»¹²²: «Գրագրին» բառի 2-րդ բ-ն գ-ի աջով երևում է, իսկ ն-ն սրբագրուած է բ-ից, որով նախ գրել է «գրագիր». «տողել» եւ «կցել» բառերի լ-երը սրբագրուած են ս-ից, որով նախ գրել է «տողես», «կցես», քանի որ ես-ը տողելի լ-ի վերևում է, յետոյ աւելացուած: Ունի վերջակէտ: Այստեղ անուն չկայ, բայց ձեռագիրը նոյնն է, ինչ հետեւեալինը:

¹¹⁹ Հր. Աճառեանը միջակէտի փխ վերջակէտ է գրել («Քննութիւն, էջ 5), իսկ Գ. Յովսէփեանը՝ ստորակէտ (Խաղբակեանք, էջ 203):

¹²⁰ Խաղբակեանք, էջ 203, «կու առնես»:

¹²¹ Խաղբակեանք, էջ 203, «մէկ մէկ»:

¹²² Ըստ Հր. Աճառեանի՝ «Իմա՛ թէ կ՛ուզէ դատապարտել առաջին գրիչը՝ որ առանց բաժանումներու՝ տարբեր գրքեր միայն կը գրէ» («Քննութիւն, էջ 7): Համոզիչ չէ. նախ չի ասում, թէ յանդիմանողն ո՛վ է, մի 2-րդ գրիչ, քանի որ «դատապարտել է առաջին գրիչը». անկարելի է, քանի որ այս յիշատակարանի ձեւաչափով ոչ մի էջ չկայ Զեռ-ում: Բացի «դատապարտել է առաջին գրիչը». անկարելի է, քանի որ այս յիշատակարանի ձեւաչափով ոչ մի էջ չկայ Զեռ-ում: Բացի այդ, Լուսերը գարդարուն գլխագրերով կամ կարմիր կամ թոյլ թանաքով է սկսել տարբեր գրուածքները (եւ ոչ թէ գրքայի, եւ դրանք միայն չեն: Դատապարտում-յանդիմանութիւնը, մեր կարծիքով, միահետ կամ անանջատ գրութեան դէմ է, քանի որ քննադատողի բառերն անջատ-անջատ են:

աշկնին ուղմեցի. որ սկզբն ը մեզ տանջի ամէն:» (տե՛ս Գ 2) յիշատակարութիւնը: Ինչո՞ւ Ներսէսի մահից յետոյ. արդեօ՞ք «ողորմեցի»-ի պատճառով: Սակայն նկատենք, որ Թովման «ողորմեցի» է հայցում թէ՛ իրեն եւ թէ՛ այն աշակերտի համար, որ «տաւնջի» «տանջւում է» ներկայումս իր հետ: Բայց ի՞նչ անելիս են տանջուել վարդապետ ու աշակերտ. ո՛չ ձեռագրի գրչագրութիւնը շարունակելիս, քանի որ այս վարդապետի ձեռքով գրուած էջ չկայ նրանում. Հր. Աճառեանը կարծում է՝ սրբագրելիս: Նրանց այս «աշխատանքի» բնոյթը համոզիչ կերպով որոշել է Ա. Մաթեոսեանը իր յիշեալ յօդուածում. «Շփոթութեան մէջ է գցել «գիրս յաւարտ ածի» նախադասութիւնը, որ նշանակում է «գիրս աւարտեցի», բայց ի՞նչ անելը աւարտեցի: Գրելու մասին խօսք լինել չի կարող, որովհետեւ Լուսերը ձեռագրի գրչութեամբ գրում է, որ ձեռագիրը ինքն է գրել: Թովման աւարտել է ընթերցանութիւնը»¹²⁸: Ա. Մաթեոսեանը Ձեռ-ում Թովմայի Գ 1 եւ 2 յիշատակագրութիւնների գիրը եւ նոյն անձի այս կարգի ընթերցողական կարճ նշումներ յայտնաբերել է Մատենադարանի այլ ձեռագրերում, որոնց գրիչը ինքը՝ այս Թովմա վարդապետը չէ: Ձեռագրերի բաղադրութիւնը եւ նոյնութիւնը նրան բերել են այն եզրակացութեան, որ «Այդ ընթերցողը պատմիչ եւ մանկավարժ, Մեծոփայ վանքի ընթերցող Թովմա Մեծոփեցին է, որը կարդացած կամ դասախօսած ձեռագրերի վրայ մակագրութիւն անելու սովորութիւն ունէր: [. . .] Ուրեմն ոչ միայն ձեռագրի երկրորդ գրիչը չէ Թովմա վարդապետը, այլեւ Լուսերից հետո է հարիւր քառասուն տարի»¹²⁹: Ա. Մաթեոսեան նոյն բանասէրը ՀՄՀ-ում գրել է, թէ Թովմա Մեծոփեցին ապրել է մօտաւորապէս 1378-1446 թթ., ուստի Նզնիկի ձեռագրի գրչութեան թուականից (1280) շատ յետոյ:

բ. Ձեռագրում ի՞նչ դեր է կատարել Նսայի վարդապետը

Նա ձեռագրի էջ Եբ-ի յիշատակագրութեան հեղինակն է (տե՛ս վերեւում, Յիշ. Բ), որ ներկայացել է իբրեւ «նուաստ ոգիս եսայի հետևող և աշակերտ սբ առնն այ ներս վղի»: Ըստ Հր. Աճառեանի, Լուսեր գրիչը այս ձեռագիրը «գրեր է Ներսէս վարդապետի եւ իւր աշակերտ Նսայի համար» (Քրճն-նութիւն, էջ 4): «Նսայի համար»-ը սոսկ ենթադրութիւն է: Գ. Յովսէփեանի հետևողութեամբ ենթադրում են, թէ դա Նսայի Նչեցին է, ինչ որ գուցէ ստոյգ է: Սակայն Հր. Աճառեանի կարծիքին աւարկում ենք նկատել տալով, որ Լուսերն իր յիշատակարանում յայտնում է, թէ ձեռագիրը գրել է «ի վայելումն սբ և ամենագով. վղն ներսէսի» եւ իբրեւ «ժառանկորդ գրիս» ճանաչում է միայն «զհետոր զվ դն» Ներսէս, առանց Նսայու անունը տալու: Ուստի նա ձեռագրի «ստացողակից» չէ Ներսէս վարդապետի հետ, որը բանասէրների կարծիքով, Վայոց Ձորում Գլաճորի համալսարանի հիմնադիրն է եղել:

Գ. Յովսէփեանի կարծիքով՝ Նսային ձեռագրում «ունի փոքրիկ լրացումներ ու սրբագրութիւններ (159ա, 166ա)» (Խաղբակեանք, էջ 202): Գուցէ այս դիտողութիւնն է կարծել տուել Ա. Գ. Աբրահամեանին, թէ Նսայի Նչեցին «խմբագրել» է այս ձեռագիրը (տե՛ս նրա յօդուածը «Գարուն» ամսագրում, 1978, 9): Նրա համար ի՞նչ էր նշանակում արդեօք այս բայը. ինչպէ՞ս կարելի էր «խմբագրել» (այսինքն «Բնագիրն ստուգել եւ մշակել՝ հրատարակելու համար, բնագիրը վերջնա-րուել, իսկ Նզնիկինը գրուել էր 5-րդ դարի առաջին կեսում: Ա. Մաթեոսեանի հետ մերժում ենք խմբագրութեան այդ վարկածը, եթէ խմբագրել բայն առնենք իր այսօրուայ իմաստով: Հաւանա-կան է, որ Նսայի Նչեցին ուղղել է Լուսեր գրչի չնկատած վրիպակները: Ա. Մաթեոսեանն էլ գրել է. «Նսայի Նչեցին Նզնիկ Կողբացու «Նդ ծ աղանդոցը» չի խմբագրել: Նսայի Նչեցին [Լուսեր գրչի] արտագրուել է, եւ ուղղել այն տառասխալները, որոնք թոյլ էր տուել Լուսերը» (ն. տ., էջ 59): Այս բանասէրը Նսայուն վերագրել է նաեւ ձեռագրի վերջին մի քանի թերթերի գրչութիւնը. «Բացի սըր-արտագրել» (ն. տ., էջ 59): Վերեւում ասացինք, որ ձեռագրագրերի տարբերութեան պատճառով մենք համաձայն չենք այս կարծիքին:

¹²⁸ Ա. Մաթեոսեան. ն. տ., էջ 59:

¹²⁹ Ն. տ., էջ 59:

¹³⁰ Էդ. Աղայեան, Արդի հայերէնի բացատրական բառարան, Երեւան, 1976:

գ. Մ 1097 ձեռագրի գրչութեան թուականն ու վայրը

Ե՞րբ-ը պարզ է Լուսեր գրչի յիշատակարանից՝ «ի թուիս հայոց. չիք գրեցաւ», այսինքն մ. թ. 1280 թ.. բանասէրներն այս թուականի մասին համակարծիք են: Իսկ ինչ վերաբերում է գրչութեան տեղին, ապա դա ամենեւին պարզ չէ ձեռագրի յիշատակագրութիւններից, որոնցում այս մասին ոչ մի ակնարկում չկայ: Սակայն այս լուսերը չի խանգարել Գ. Յովսէփեանին գրելու. «Գլաճորի գրչութեան ամենահին տեղեկութիւնը ստանում ենք մի շատ թանկարժէք ձեռագրից, որ գրուած է այնտեղ 1280 թուին» (Խաղբակեանք, էջ 202, ընդգծումները մերն են): Նա այս ենթադրութիւնը բխեցրել է անտարակոյս նրանից, որ ձեռագրի ստացողը կամ պատուիրատուն եղել է «մեծ հոետոր Ներսէս» վարդապետը, որ Գլաճորի համալսարանի հիմնադիրն է, ինչպէս յայտնի է այլ ստոյգ աղբիւրներից:

Ըստ Ա. Գ. Աբրահամեանի (1982, էջ 160)՝ Նզնիկի երկի ձեռագիրը գրչագրուել է 1280 թ.՝ Գլաճորի համալսարանի հիմնադրման տարում:

Ըստ Գէորգ Աբգարեանի (1983, էջ 20)՝ Գլաճորի համալսարանի հիմնադիրը Ներսէս Մչեցին է. նա սկզբնական կրթութիւնն ստացել է Մշոյ Առաքելոց վանքում, կատարելագործուել է Ուրվիրա-պի վանքի բարձրագոյն դպրոցում, որի ղեկավարը դառնալով՝ այն տեղափոխել է Մշոյ Առաքելոց վանքը, «1281-ին գնացել է Մեծոփայ վանքի դպրոցը, որից յետոյ 1282-ին տեղափոխուել է Վայոց ձոր եւ այնտեղ [. . .] հիմնել է համալսարան, որը յետագայում հռչակուել է Գլաճորի հա-մալսարան անունով»: Յօդուածի էջ 21-ում բերել է Նզնիկի ձեռագրի Լուսեր գրչի յիշատակարանը, որի վերջին տողն է՝ «ի թուիս հայոց ՁիԹ» (1280) [յօդուածագրի կողմից] գրեցաւ», եւ ուր, ինչպէս յայտնի է, գրչութեան վայրը նշուած չէ, ոչ էլ ակնարկուած: Սակայն մեր բանասէրը գրել է. «Նթէ նրանք [Գլաճորի համալսարանի հիմնադիրները] չլինէին, չէինք իմանայ, որ դեռեւս հայոց դպրու-թեան արշալոյսին, 5-րդ դարում Հայաստան աշխարհում փայլել է Նզնիկ Կողբացի անունով մի մեծ փիլիսոփայ, որի գրուածքներից շատերը մեզ չեն հասել [անհիմն ենթադրութիւն. ՄՄ.], եւ չէր հաս-նի նաեւ միակը՝ «Նդ ծ աղանդոցը», որը 1280 թ. արտագրել եւ մեզ է հասցրել «ապիկար» Լուսերը: Գլաճորի գրչատանը ձեռագրի վրայ կրթնած [գուցէ հակուած՝ ՄՄ.] այս համեստ մարդու մտքից արդեօք կարո՞ղ էր երբեւէ անցնել» եւ այլ ն, ընդգծումը մերն է: Այսպիսով Գլաճորի համալսարա-նը հիմնադրուել է 1282-ին, եւ Լուսեր գրիչը իր ձեռագիրն արտագրել է 1280-ին Գլաճորի հա-մալսարանի գրչատանը. վստահ լինենք, որ տարբերութիւն մէջ տպագրական վրիպակ չկայ:

Իր վերոյիշեալ յօդուածում Ա. Մաթեոսեանը Գլաճորի «բարձրագոյն» դպրոցի հիմնադրման թուականի եւ տեղի հարցերը քննելիս անդրադարձել է նաեւ Նզնիկի ձեռագրի գրչութեան վայրին: Նա եկել է այն եզրակացութեան, թէ այն գրուած է ոչ թէ Գլաճորում, այլ Տարօնի Առաքելոց վան-քում, նախքան Գլաճորի դպրոցի հիմնադրումը, որ, ըստ նրան, 1282 թ. է, եւ ոչ թէ 1280, ինչպէս կարծում են: Նոյնը՝ Ա. Լազարոսեան, էջ 59 (տե՛ս մեր Մատենագիտութեան մէջ):

2. ԵՐԿԻ ԲՈՒՆ ՁԵՆԱԳԻՐԸ

«Նզնիկի ձեռագիր» ասելով նկատի ունենք Մատենադարանի թ. 1097 ձեռագրում Նզնիկի երկը պարունակող 187բ (10-րդ տողից) – 314բ էջերը:

1. Ձեռագրի արտաքինը

188ա-բ էջերն ունեն 18-ական տող, իսկ միւսները,՝ 19-ական: Վերջին կամ 19-րդ տողի բառամասեր յաճախ գրուած են յաւելեալ տողի վերջում նոյն գրչի կողմից, որ հաւանաբար ծուլա-ցել է յաջորդ էջն անցնել, ուր նոյն բառամասերը չեն կրկնուել: Ինչպէս ամբողջ ձեռագրում, այստեղ էլ գրչութիւնը բոլորգիտ է, բառերը գրեթէ միշտ անանջատ են, թանաքը սեւ է, բացի խո-այստեղ էլ գրչութիւնը բոլորգիտ է, բառերը գրեթէ միշտ անանջատ են, ըստ Հր. Աճառեանի: Որոշ տառերի թանաքը թուլացել է կամ թոյլ է եղել: Գլխազրերը սովորաբար երկաթազիր են: Կան եռատամ նոտրագիր գլխազիր Ա-եր ինչպէս ոմանք սովոր են գրել այսօր էլ: Գրիչը Լուսերն է, թէեւ Նզնիկի երկում, ինչպէս ասուեց, յիշատակարան չկայ: Նրա ձեռագիրը հաստաւուն է, հաստատուն, լաւ ըն-երկում, ինչպէս ասուեց, յիշատակարան չկայ: Նրա ձեռագիրը հաստաւուն է, հաստատուն, լաւ ըն-երկում, որի ձեռագիրը աւելի բարակ գրչով է գրուած եւ, ի հարկէ, աւելի մանր է, ինչպէս ման-րատառ են, բնականաբար գրչի իսկ սրբագրութիւնները տեղի սակաւութեան պատճառով տողա-մէջերում, երբեմն էլ լուսանցքներում յաւելման «ծունկ» նշանով:

2. Բնագրի սրբագրութեան ձևերը

Բնագրային սրբագրութիւններ կատարուած են երկու անձի կողմից, որոնցից մին Լուսեր գրիչն է, ինչպէս վկայում է ձեռագագիրը: Միւս սրբագրիչը գուցէ նաայի վարդապետ Նչեցին է:

ա) Լուսեր գրչի սրբագրութիւնները

Կատարուած են հետեւեալ ձևերով:

1. Միալ գիրը, գրերը կամ բառը վերացրել է քերելով կամ այլ միջոցով ջնջելով եւ հէնց տեղում գրել է ճիշտը. նոյնիսկ մեր լուսանկարները վրայ աւելի կամ նուազ թուլութեամբ դեռ երբեմն նկատուում են նախկին տառերը:

2. Աւելորդ տառը կամ տառերը քերել է եւ տեղը բաց թողել, որով սպիտակներ են առաջացել միահետ գրութեան մէջ, եւ նոյն բառի գրերը երբեմն իրարից անջատուել են այդպիսով:

3. Միալմամբ սկսուած կամ ամբողջութեամբ գրուած տառը պահանջուածին վերածել է առանց ջնջելու կամ քերելու, որով երբեմն կոհակուում է, թէ ճիշտը ո՞ր գրիչ է սրբագրուած:

4. Աւելորդ տառը, որ չքերուած, բայց ջնջուած պէտք է համարել, վերեւում կրում է ջնջման երկու կէտ, կողք-կողքի դրուած, որ կոչում ենք «ջնջման կէտ»: Ջնջման կէտը երբեմն մէկն է:

5. Մոռացուած գիրը աւելցուած է տողամիջում (կամ տողավերեւում, որ նոյնն է). այս գիրը բնականաբար միւսներից աւելի մանր է:

6. Մոռացուած տառը կամ տառերը, մանաւանդ բառը աջ կամ ձախ լուսանցքում դրուել են յաւելման «ծուակ» նշանի տակ. նոյն նշանը, որ նման է ուղղահայեաց դրուած բացազանչական նշանին (՝), գտնուում է նաեւ տառի կամ բառի պակասած տեղում» տողամիջում (կամ տողավերեւում):

Սրբագրութեան մեր նկատած ձևերը հանդիպում են հայերէն ուրիշ ձեռագրերում եւս եւ մասնաւորապէս Մ 1097-ի միւս գրուածքներում, գրիչը՝ Լուսերը:

Շատ բնական եւ մարդկային էր, որ Լուսեր գրիչը սխալուէր. գովելի է, որ նա հոգ է տարել իր նկատած վրիպակները ուղղելուն, բայց եւ ուրիշներ էլ չի տեսել: Հր. Աճառեանը նրան որակել է իբրեւ «չատ գագջ», շատ հոգատար եւ շատ խնամտո գրիչ» (Քննութիւն, էջ 3, տ. 2). գուցէ «չատ»-երը մի քիչ շատ են: Յամենայն դէպս պատի՛ւ եւ յարգանք նրան. նրանից շատ աւելի համբակներ են եղել:

բ) Սրբագրչի սրբագրութիւնները

Սրբագրիչի (ո՛վ էլ եղած լինի) սրբագրութիւնների գիրը աւելի մանր ու բարակ է, նոյնպէս կանոնաւոր. դրանք գրեթէ միշտ տողամիջում են, առանց սխալը քերելու կամ սրբելու: Սրբագրութիւնները բնագրի մանաւանդ առաջին մասերում են. կա՛մ այս էջերն են սրբագրուած, կա՛մ միւսների վրիպակները նկատուած չեն, քանի բոլոր սրբագրութիւններից յետոյ էլ նկատելի են թերացումներ: Երբեմն նկատելի են մի երրորդ անձի տգեղ սրբագրութիւններ:

3. Գրչութեան որակը, ուղղագրութիւնը

ա) «Տառասխալ չկայ» ձեռագրում ըստ Հր. Աճառեանի (Քննութիւն, էջ 3), ինչ որ զարմանալի կը լինէր: Սոյն հրատարակութեան էջատակերում գրուած ձեռագրային ընթերցուածները ցոյց կը տան, որ շեղումները բազմաթիւ են գրաբարի դասական ուղղագրութիւնից (որքանով սա յայտնի է): Արդէն Հր. Աճառեանն իսկ Քննութեան էջ 83-ում գրել է, թէ «Կան այնպիսի պատահական սխալներ, որոնցմէ ոչ մէկ մարդկային ձեռք կրնայ բոլորովին զերծ մնալ: Այս սխալները առհասարակ ուղղագրական են»: Նկատելի են յատկապէս յ տառի պակասներ ա եւ ուրից յետոյ, որոնք արտացոլում են յի միջնադարեան արտասանութիւնը:

բ) Յապաւումներ կան, գրեթէ երբեք չմոռացուած «պատիւ» նշանով. բայց յատկապէս ուրիշում վերջաւորութեամբ գոյականների յօդաւոր եւ անյօդ հոլովածեւերի յապաւումները անխախտ եւ սոգան ընթերցումների: Բացի այս անհետեւողութիւնից, նոյն բառերը մերթ լրիւ են գրուած, մերթ յապաւում: Յապաւում են թէ՛ «ամենասուրբ» եւ թէ՛ սովորական նշանակութեամբ գոյականներ:

գ) Գլխագրեր գործածուած են (յաճախ երկաթագիր), բայց ոչ յատուկ անունների սկզբում, եթէ (.)-ից յետոյ չեն:

Ըստ Աճ՝ էջ 5-ի՝ հին ձեռագրերի «մէջ գլխագիր կը գործածուէր միայն նոր հատուածներու սկիզբը. իսկ յատուկ անունները գլխատառով գրելու սովորութիւնը գրեթէ չկար»: Մեր Ձեռ-ում գլխագրերը շատ անգամ տողում են, միջակէտից յետոյ. նախապէս գուցէ այդ բառերը հատուածների առաջին բառերն էին:

դ) Եւ է գրերը փոքրատառերը շա՛տ հազուադէպ կարելի է տարբերել միմեանցից, որով հետեւէ-ն կարծէք միշտ ե լինի: Այս նոյնութիւնը եւս կարող է բանավէճեր յարուցել Ձեռ-ում որոշ բառերի հնագոյն ուղղագրութեան շուրջը, ինչպէս տերութիւն կամ տէրութիւն, թե կամ թէ, եթե կամ եթէ, ասեին կամ ասէին եւ այլն:

ե) Եւ փոքրատառերի փոխարէն շատ յաճախ գրուած է և: Միակ միւս նշանագիրը երբեմն ամենայն բառինն է՝ մ:

զ) Աւ-ին երբեք չի փոխարինել օ-ն. ուստի այս մասին Հր. Աճառեանի գրածի մէջ աւելորդ է «առհասարակ»ը. «Ձեռագրիս մէջ օ ձայնին տեղ առհասարակ աւ է գրուած. այս տարբերութիւնը նշանակած չենք, բայց ուր որ օ պատահի փոխանակ աւ գրութեան, նշանակած ենք» («Քննութիւն», 21): Ձեռ. 272ա, պատուօք-ի օ-ն քերուածքի վրայ է. մէկը ու-ն դարձրել է օ. ուրիշ օ չկայ Ձեռ-ում:

է) Ի նախդիրը երբեմն կրում է ապաթարց՝ ի:

ը) Արտասանուող, բայց սովորաբար չգրուող ը-եր յաճախ են հանդիպում թէ՛ տողավերջում եւ թէ՛ այլուր:

թ) Ղ տառի վրայ (՝) փշիկ կայ Ձեռ-ի հիւղն բառում:

4. Կէտագրութեան նշաններ

Միջակէտը գրեթէ միշտ փոխարինում է միւս նշաններին. ստորակէտը շատ հազուադէպ է. վերջակէտը (195ա.8) եւ բութը (194ա, վերջին տողի վերջում) առաւել հազուադէպ են:

Ենթամնամ երբեք գործածուած չէ տողադարձի ժամանակ, եւ բառերը տողադարձուած են այնտեղ, ուր տողը վերջացել է, պատահականօրէն, առանց վանկատման որոշակի կանոնի, ինչ որ յատուկ է միահետ գրութիւն ունեցող ձեռագրերին:

Առոգանութեան նշաններն են՝ շեղը (՝), պարոյկը (՝) եւ բացազանչական նշանը (՝), որոնք գործածուած են ձեռագրի մանաւանդ սկզբնական էջերում: Շեղը երբեմն օգնում է բառերի ճիշտ անջատմանը: (՝)-ը եւ (՝)-ը շատ անգամ չեն տարբերուում:

5. Բնագրի քերականութիւնը

Դասականն է ի հարկէ. սակայն նկատելի են բայածեւերի եւ յատկապէս հոլովածեւերի միջնադարեան շեղումներ:

Բնագրի գրչութեան առանձնայատկութիւնների վրայ աւելի երկար կանգ չենք առնում, ոչ էլ օրինակներ բերում, քանի որ այդ բոլորը նշուած է մեր բնագրի էջատակում:

6. Դարձեալ Լուսեր գրչի մասին

Եզնիկի ձեռագրի գրչագրական բոլոր առանձնայատկութիւնները՝ ձեռագագիրը, գրչի սրբագրութիւնները, բնագրի ուղղագրութիւնը, քերականական եւ ուղղագրական շեղումները դասական գրաբարից, գտնում ենք Մ 1097 ձեռագրի մեր ձեռքի տակ ունեցած միւս էջերում եւս: Այդ բոլորը խօսում է այն մասին, որ ամբողջ ձեռագիրը մի դպրոցի, մի արհեստանոցի գործ է, եւ սկզբի էջերի ու Եզնիկի բնագրի գրիչը նոյն Լուսերն է: Եզնիկի երկի բնագրի ձեռագիրը պատահաբար չէ որ միացել է նախորդող միւս գրուածքներին, այլ սկզբից եւեթ միասին են կազմուել իբրեւ մէկ մատեան, քանի որ էջ 187բ-ի կէսից է սկսում երկը:

Մի ենթադրութիւն. նկատելի է, որ դասական գրաբարի խոլ բաղաձայնները Եզնիկի երկի ձեռագրում (եւ ձեռագրի միւս գրուածքներում) յաճախ փոխարինուել են իրենց համապատասխան ձայնողներով, ինչպէս մանգութիւն փխ. մանկութիւն, անդի փխ. անտի, ընգեր փխ. ընկեր, ըմբից փխ. ըմպից եւ այլն: Այս փոխանցումները կարող են ենթադրել տալ, թէ Լուսեր գրիչը արեւելահայերէնի արտասանութիւն ունէր բայց դասական գրաբարի ուղղագրութեանը կատարելապէս չէր տիրապետում, կամ թէ, գուցէ, բնագիրը նրան թելադրում էր, եթէ ոչ շարունակ, գոնէ յաճախ, արեւմտահայերէն արտասանութեամբ մէկը, որն այդպիսով ազդում էր գրչի ուղղագրու-

վարդապետ գրչի» եւ Գ. Տէր Յովհաննիսեանի զոյգ յիշատակագրութիւնների հետ: Նա յետոյ է յայտնաբերել վերջինիս իսկ ձեռքով սրբագրուած տպագիր օրինակը, բայց երեք տպագիրների յիշատակագրութիւնները նոյնն են: Նա նկատի է առել նաեւ նորագիւտ ձեռագրի եւ «Թովմա վարդապետի (կամ զմիւռնեան) ձեռագրի» գրչութեան թուականը, որ նոյնն է՝ ՉԻԹ = 1280 թ., մանրամասն վերլուծել է երկու ձեռագրերի բնագրային բազում տարբերութիւններ, պատասխանել է Հր. Աճառեանի քննադատութիւններից մի քանիսին, ցոյց տալով դրանց անարդարացիութիւնը, քանի որ Բագրատունեան¹⁵⁵ տպագրութեան տարբերութիւնները, որոնք «կեղծ» կամ «խաթարում» են թուացել Հր. Աճառեանին նորագիւտ ձեռագրի համեմատութեամբ, գտնուած են զմիւռնեան սրբագրուած տպագրում: Ե. Փէշիկեանը հարցին մասամբ անդրադարձել է նաեւ 1930 թ. հրատարակած «Նգնիկի հարցը Նախան պատրիարքէն մինչեւ Իուրեան» յօդուածում (դարձեալ «Բագրատու»-ում):

բ. Նորագիւտ եւ զմիւռնեան ձեռագրերի յիշատակարանների քննութիւն

Այս երկու ձեռագրերը տարբեր համարելու հիմնական պատճառներից եւ դժուարութիւն յարուցող հարցերից մէկը Ե. Փէշիկեանի համար եղել է այն, որ նորագիւտ ձեռագրի գրչը Լուսեբն է ըստ իր յիշատակարանի, իսկ զմիւռնեանինը Թովմա վարդապետն է ըստ նրա յիշատակարանի, որ արտագրել է Գ. Տէր-Յովհաննիսեանը իր սրբագրած տպագրի էջ 272-ի վերջում: Եթէ այս Թովմա վարդապետը Մ 1097 ձեռագրում երկու յիշատակագրութիւն թողած Թովման է, ապա մենք Ա. Մաթեոսեանին հետեւելով մերժեցինք նրա ժամանակակցութիւնն անգամ ձեռագրի գրչութեան հետ (1280 թ.): Քննարկման համար այստեղ առաջարկում ենք Մ 1097 ձեռագրի գրիչ Լուսեբնի, նոյն ձեռագրի ընթերցող Թովմա (Մեծփեցու) եւ ըստ Գ. Տէր-Յովհաննիսեանի՝ զմիւռնեան ձեռագրի «գրիչ Թովմա վարդապետի» յիշատակարանները.

1. Լուսեբ գրչի յիշատակարան Մ 1097 ձեռագրում, էջ 145ա → «Շնորհաւ և ողորմութիւն այ կատարեցի զտառածաշունչ եւ փցուն և ապիկար գրող լուսեբ. ի վայելուամն քր և ամենագով. վիդն ներսէսի. աղաչեմ զդասալուսեբամից յիշել զբազմամեղ գրողիկս և զժառանկորդ գրիս զհոնտոր զվիզն և ան յիշողացտ ողորմեսցի. Ի թուիս հայոց. չիթ գրեցաւ.»
2. Թովմա վարդապետ (Մեծփեցու) յիշատակագրութիւն Մ 1097 ձեռագրում, էջ 145ա → «Ան իղմի ներսէս վրդապետին և ինձ թովմա վրդապետ որ զանարուեստ գիրս յաւարտ ածի. քս անձ այն աշկտին իղմեսցի. որ անկ ինքն ը մեզ տանջի ամէն:»
3. Գրիչ Թովմա վարդապետի յիշատակարան Գ. Տ.-Յովհաննիսեանի սրբագրած զմիւռնեան տպագրում, էջ 272 → «Շնորհոփ և ողորմութիւն այ կատարեցի գրիչս եզնրկայ եւ ապիկար թովմա վրդապետ ի վայելուամն ամենագով վրդապետ ներսէսի. ի թուիս հայոց. չիթ:»

Այս յիշատակարանների բաղդատութիւնը մեզ թելադրում է հետեւեալ դիտողութիւնները, որոնց հետ նշում ենք նաեւ բանասէրների կարծիքները:

- 1) Նորագիւտ կամ այժմեան Մ 1097 ձեռագրի վերոյիշեալ 1-ին եւ 2-րդ այս յիշատակարանների միջեւ ոչ մի ընդհանուր բան չկայ: Արդարեւ, դրանց հեղինակները տարբեր անձն են, Լուսեբը ձեռագրի գրիչն է, իսկ Թովմա վարդապետը՝ Լուսեբից դար ու կէս յետոյ ապրած ընթերցող է: Միակ իմաստային նմանութիւնը 1-ինի «կատարեցի», իսկ 2-րդի «յաւարտ ածի» արտայայտութիւններն են. սակայն Լուսեբն աւարտել է ձեռագրի գրչութիւնը, իսկ Թովմա վարդապետը՝ ընթերցանութիւնը (այն էլ տարիներ յետոյ). այս բոլորի մասին ասուեց վերեւում:
- 2) Լ. Մարիէսը համեմատելով վերոյիշեալ երեք յիշատակարանները՝ գրել է. «Տէր Յովհաննիսեանն ըստ երեւոյթին ոչ ճշտօրէն է ամփոփել [Մ 1097-ի] էջ 145ա-ի յիշատակարանները՝ դրանք

իրար միաձուլելով: Բայց քանի որ Թովմա եւ Ներսէս անունները նոյնն են, նոյնն է մանաւանդ 729 [մ. թ. 1280] թուականը, ուստի եւ ձեռագրի նոյնութիւնը յստակօրէն երեւան է գալիս»¹⁵⁵: Քանի որ Մարիէսը նկատի ունի նորագիւտ ձեռագրի երկու յիշատակարանները միասին վերցրած, որոնք, ինչպէս ասուեց, ոչ մի ընդհանրութիւն չունեն, ուստի նրա «միաձուլել» բայը չափազանցութիւն է. հետեւաբար Գ. Տ.-Յովհաննիսեանը նորագիւտ ձեռագրի 2-րդ յիշատակարանից, որ կար անշուշտ զմիւռնեանում էլ, փոխ առած պիտի լինի միայն «Թովմա վարդապետ» անունը:

3) Իրար հետ համեմատեմք բուն գրիչ Լուսեբի եւ Գ. Տ.-Յովհաննիսեանի գրիչ համարած Թովմա վարդապետի, այսինքն՝ երկու «գրիչների» յիշատակարանները: Յօդերը ոչ, բայց նախդիրներն էլ առանձին բառ հաշուած՝ Թովմայինը ունի 23 բառ, ՉԻԹ-ը հաշուելով երեք բառ: Բացի «գրիչս եզնրկայ» եւ «թովմա վրդապետ» 5 բառերից, նրա 18 բառերը նոյնութեամբ կան Լուսեբ գրչի յիշատակարանում: Երկու յիշատակարանների բովանդակային կամ էական տարբերութիւնները երկուսն են:

ա) Նախ եւ բնականաբար երկու գրիչների անունների տարբերութիւնը՝ 1-ինում Լուսեբ, 2-րդում Թովմա վարդապետ, սակայն առաջինը իրեն համարել է «փցուն եւ ապիկար», երկրորդը՝ միայն «ապիկար». այլուր ուրիշ վարդապետ իրեն համարել է արդեօք «ապիկար». նորագիւտ ձեռագրի իր յիշատակարանում Շասյի վարդապետ (Նչեցին) իրեն համարել է «նուսատ ոգի», որ միանգամայն ընդունելի է:

բ) Երկրորդ տարբերութիւնը երկու յիշատակարանների երկու գրիչների ընդօրինակած կամ «կատարած» գրիչի անուններն են, նոյնիսկ եթէ երկու երկերը իւրաքանչիւրի գրչագրած միեւնոյն ձեռագրում լինէին: Լուսեբը գրել է «կատարեցի գտառս աստուածաշունչ», որոնք, ինչպէս ասուեց, Ա. Գրբի առանձին գրքերի մեկնութիւններ են, իսկ Թովմա վարդապետը ուղղակի «կատարեցի գգիրքս եզնրկայ» (թերեւ իբրեւ մի առանձին ձեռագիր): Սա այդպիսով իր յիշատակարանը թողած պիտի լինի Հէնց Եզնրկի երկի գրչութեան աւարտից անմիջապէս յետոյ: Սակայն Գ. Տ.-Յովհաննիսեանն այս մասին ոչինչ չի ասել, ոչ էլ իր տեսած ձեռագիրն է նկարագրել:

Յիշատակարանների այս նոյնութիւններն ու տարբերութիւնները մեզ կարծել են տալիս, թէ Թովմա վարդապետ «գրիչը» կամ Գ. Տէր-Յովհաննիսեանը յայտնաբերել են առաջ իր յիշատակարանը Լուսեբ գրչի յիշատակարանից: Այլ կերպ գրեթէ անկարելի է, երբ այն ժամանակ պատրաստի բանաձեւեր չկային, որ երկու տարբեր գրիչներ նոյն անձի (տուեալ դէպքում՝ Ներսէս վարդապետի) համար իրենց գրչագրած երկու տարբեր գրիչի (բայց նոյն ձեռագրի) գրչութեան իրենց գաւ-գաւ գրած յիշատակարանների մէջ պատահականօրէն օգտագործէին նոյնական 18 բառ, նոյն շարադասութեամբ եւ նոյն շարահիւսութեամբ: Մարիէսի բառով ասած՝ այս «միաձուլումը» կարելի է գուցէ բացատրել հետեւեալ ենթադրութիւններով:

Գ. Տ.-Յովհաննիսեանը, որ մեզ հաղորդել է Թովմա վարդապետ «գրչի» յիշատակարանը, դա կամ նոյնութեամբ է կարդացել եւ ընդօրինակել զմիւռնեան ձեռագրից, եւ սրա գրիչն իրօք մի Թովմա վարդապետ է եւ ձեռագիրը գրել է 1280-ին (ինչպէս Լուսեբ գրիչը՝ իրենը), կամ էլ Գ. Տ.-Յովհաննիսեանը ինքն է «կազմել» Թովմա վարդապետ «գրչի» յիշատակարանը իր առաջ ունեւնալով նորագիւտ ձեռագրի էջ 145ա-ի 1-ին եւ 2-րդ յիշատակարանները, որոնք զմիւռնեան Ձ-ում էլ կային: 2-րդ ենթադրութեան դէպքում այդ ձեռագիրը նոյնը պէտք է եղած լինի ինչ որ նորագիւտը, եւ սա էլ իր հերթին պէտք է եղած լինի զմիւռնեան տպագրութեան հիմքը, որով եւ վենետիկեան տպագրիչը: Սակայն ի՞նչ հիման վրայ մեղադրել Գ. Տ.-Յովհաննիսեանին իբրեւ յիշատակարան «սարքողի» կամ յիշատակարաններ միաձուլողի, կամ ինչպէս նրան անվերապահօրէն հաւատ ընծայել, քանի որ, բացի 1280 թուականից, նա ուրիշ ոչինչ չի յայտնել իր տեսած բուն ձեռագրի մասին: Դեռ անբաւարար է նրա հաւաստիացումը, թէ դա եղել է այն նոյն ձեռագիրը, որից տպել էին Ջմիւռնիայի հրատարակութիւնը:

4) Մեր ուշադրութիւնը գրաւեցին նաեւ զմիւռնեան ձեռագրի Թովմա վարդապետ «գրչի» յիշատակարանի ուղղագրական եւ քերականական հետեւեալ փաստերը:

¹⁵⁵ De Deo, էջ 208: Մարիէսն իր այս աշխատութեան մէջ կասկածում է նաեւ, որ Գ. Տ.-Յովհաննիսեանը ոչ միշտ ճիշտ սրբագրած լինի իր տպագիր օրինակը զմիւռնեան ձեռագրից: Մենք այժմ ի վիճակի ենք հաստատելու այս կասկածը, ինչպէս վկայում են մեր հրատարակութեան էջատակերի այլընթերցումները:

ա) Լուսերի յիշատակարանում կարգում ենք «չնորհաւք», -աւ- -ով, որ դասական գրաբարեան է: Ամբողջ Եզնիկի երկում, ինչպէս ասուեց, Մ 1097 ձեռագրում -օ- չենք գտնում: Իսկ յիշատակագրութիւններից միայն էլ 108բ-ի հետեւեալ տողում կայ -օ-. «Կատարեցաւ մեկնութիւն թագաւորութեանն շնորհօքն ան», որը, տեսանք, Լուսեր գրչից է: Իսկ Գ. Տ.-Յովհաննիսեանը թովմա վարդապետ «գրչի» յիշատակարանում (Լուսեր գրչի) շնորհաւք բառը ներկայացնում է -օ- տառով: Արդ, Զմիւռնիայի տպագրութեան մէջ -աւ- -ն գրեթէ միշտ փոխարինուած է -օ- -ով, եւ Գ. Տ.-Յովհաննիսեանը չի միջամտել. ուստի եւ թերեւս նա է յիշատակարանի այս տատակումը փոխարինել -օ- տառով:

բ) Մ 1097 ձեռագրի ոչ մի ներքին յիշատակարանում չկայ միջնադարեան «զգիրքս» հայցակաւնը, ինչպէս զմիւռնեան ձեռագրի գրչի յիշատակարանում ենք կարգում եւ գտնում նորագիւտ ձեռագրի վերջին նորոգող տանուտէր Պաւլոսի յիշատակագրութեան մէջ՝ «քթ գիրքս» («Քննութիւն», էջ 5) ու տեսնում Եզնիկի երկի առաջին հրատարակիչ Յակոբ Նալբանի «Առաջաբանութեան» մէջ: Գ. Տ.-Յովհաննիսեանը ազդուեց իր արդեօք տպագրից թովմա վարդապետ «գրչի» յիշատակարանը արտագրելու կամ կազմելու:

Յարդ կասկածի ենթակայ չի եղել զմիւռնեան ձեռագրի թովմա վարդապետ «գրչի» յիշատակարանը՝ Գ. Տ.-Յովհաննիսեանի ընդօրինակութեամբ: Գ. Գալէմբարեանը երբ այն կարդացել է 1897 թ., հաւատացել է, թէ դա «թովմա գրչին է»¹⁵⁶. Նա ի՞նչ կը մտածէր արդեօք, եթէ տեսած լիւնէր նաեւ նորագիւտ ձեռագրի Լուսեր գրչի յիշատակարանը: Ե. Փէչիկեանը, որ ծանօթ է եղել երկուսին էլ, ոչ միայն հաւատացել է թովմա «գրչի» յիշատակարանի իսկութեանը, այլ եւ այն դարձրել է իր գլխաւոր փաստերից մէկը՝ նորագիւտ եւ զմիւռնեան ձեռագրերի տարբերութիւնը ապացուցելու համար եւ եզրակացնելու, թէ «նոյն թուակիր Ձիթ ձեռագիրները տարբեր օրինակներ են եւ իրենց կարգին տարբեր խումբերէ կամ օրինակներէ առաջ եկած են» («Բազմավէպ», 1928, էջ 290), թէեւ «Երկուքին ալ գրչութեան թուականին նոյնութեան մասին կասկած չկայ» (ն. տ., էջ 292): Նա նոյնիսկ փորձել է ենթադրաբար բացատրել, թէ թովմա վարդապետը ինչպիսի՜ հանգամանքներում եւ ինչի՜ց զրոգուած գրչագրել է իր ձեռագիրը, այսինքն զմիւռնեանը, դարձեալ նոյն ներսէս վարդապետի համար: Սակայն նա, չգիտես ինչ հիման վրայ, թովմա գրչին համարել է ներսէս վարդապետի աշակերտը, երբ սա նման բան չի յայտնել իր յիշատակարանում, այդ ո՛չ էլ ասուած է նորագիւտ ձեռագրի՝ թովմա վարդապետի երկու յիշատակագրութիւնների մէջ: Նրա ենթադրութիւնը հետեւեալն է. երբ Լուսեր գրչի գրել վերջացրել է իր ձեռագիրը, «թովմա Վ. աշակերտ ներսէսի»¹⁵⁷ Լուսերի գործին թերութիւնը տեսնելով, համեմատած ու սրբագրած է գայն մեծ աշխատանքով. եւ ահա այսպէս յառաջ եկած է նորագիւտ ձեռագիրը [. . .]: Բայց մէկ կողմէն սրբագրուած, քերուած, աւելցուած օրինակը պատշաճ չհամարելով իր վարդապետին, միւս կողմէն՝ լաւագոյն օրինակներ գտնելով¹⁵⁸ փափագել է նոր մը գաղափարել եւ կատարել է գա՛յն ալ «Շնորհօք Աստուծոյ . . . Ձիթ» թուին: Որով կ'ունենանք երկու տարբեր ձեռագիրներ, երկուքն ալ Ձիթ = 1280 թուականով. նախկինը՝ այժմեան Աձ - Գ.Տ.Մ.ի նորագիւտ ձեռագիրը. վերջինն ալ¹⁵⁹ անմիջական նախագաղափարը Զմիւռնեան տպագրին եւ միջնորդաբար՝ Վենետիկեան-Բագրատուոնեանին» («Բազմավէպ», 1928, էջ 293-294): Ե. Փէչիկեանը այս ամբողջ ենթադրութիւնը հարկադրուած արել է զմիւռնեան ձեռագրերի գրչիների յիշատակարանների «յարուցած դժուարութիւնը [. . .] կերպով մը» մեկնելու համար: Մասամբ նոյն նպատակով նա դիմել է «զմիւռնեան տպագրութեան, բագրատուոնեան-գէորգեան սրբագրութեան եւ Աճառեան-Տ. Մկրտչեան ձեռագրի» ծանօթագրուած իր օգտակար համեմատութեանը («Բազմավէպ», 1928, էջ 296 եւ յաջ. ու 1929): Այս բոլորը ամրապնդել է նրա համոզումը, թէ նորագիւտ ձեռագիրը չի կարող լինել զմիւռնեանը կամ թովմա վարդապետի գրչագրածը. «Հիմնական պատճառը որ կը ստիպէ մեզ

¹⁵⁶ Նորագոյն աղբիւր, «Յաւելուածք», էջ 18:
¹⁵⁷ Թովմա վարդապետի՝ ներսէսի աշակերտ լինելու մասին Ե. Փէչիկեանը գրել է հետեւեալը. «Համաձայն են [ո՞վ] սակայն, ներսէս Վ.ի եւ անոր աշակերտ թովմա Վ.ի մասին» («Բազմավէպ», 1928, էջ 293). ո՛վ էլ համաձայն լինէր, դա ճիշտ չէ:
¹⁵⁸ Զմոռնեանը, որ այս բոլորը իբրեւ ենթադրութիւն է ներկայացնում Ե. Փէչիկեանը:
¹⁵⁹ Այսինքն թովմա վարդապետի գրչագրածը կամ «լաւագոյն» ձեռագիրը, որից տպագրուել է, իբր, Զմիւռնիայի հրատարակութիւնը:

իրարմէ գատ եւ անկախ դնել այդ Ձիթ թուակիր ձեռագիրները՝ իրենց մէջ գոյութիւն ունեցած մեծ տարբերութիւնն է» («Բազմավէպ», 1928, 294):

Մենք մերժում ենք հաւատ ընծայել, ըստ Գ. Տ.-Յովհաննիսեանի յիշատակագրութեան, ինչ-որ թովմա վարդապետ «գրչի» եւ Լուսեր գրչի ձեռագրերի նոյնութեանը: Համեմատեցինք Մ 1097 ձեռագրի եւ Գ. Տ.-Յովհաննիսեանի սրբագրած տպագրի ընթերցումներ. բայց նախ այն մասին, թէ սա ինչպէ՛ս է սրբագրել իր օրինակը զմիւռնեան ձեռագրից:

գ. Գէորգ Տէր-Յովհաննիսեանի ինչպէ՞ս է սրբագրել զմիւռնեան հրատարակութեան մի օրինակը

1. Զմիւռնեան տպագրի ի՞նչն է ուղղել եւ ինչպէ՞ս

Ուղղումների թանաքը եղել է սեւ, գրչածայրը՝ բարակ, գիրը՝ մանր եւ լաւ ընթեռնելի: Ուղղել է հէնց տողի վրայ կամ լուսանցքում, սխալը լրիւ սեւացնելով, սխալի վրայ գիծ քաշելով, առանց սխալը քերելու: Գրեթէ բոլոր ուղղումները յստակ են: Շատ քիչ անգամ կարելի է տեսնել, թէ տպագրի սխալը ո՛րն է եղել:

էջ 1-ում գծերով է ջնջել ամբողջ խորագիրը (տե՛ս այս տպագրութեան նկարագրութեան մէջ վերեւում), «Երանելոյն Եզնակայ Կողբացոյ . . .», ինչպէս նաեւ «Ճառ. Ա: Յաղագս անքննութեանն Այ:» եւ սրա տակ մանրատառ ու հատ-հատ գրել է «Երանելոյն Եզնակայ վրդապետի Կողբացոյ:», 2-րդ «Ճառ»-ի վերնագրի վրայ գիծ է քաշել եւ ալ լուսանցքում գրել «չիք», այսպէս մինչեւ 6-րդը ներառեալ. այնուհետեւ՝ ո՛չ գիծ, ո՛չ «չիք», ենթադրելով, որ ընթերցողը հասկացել է արդէն միւսների էլ աւելորդութիւնը:

Ուղղել է բնագրի տառեր ու բառեր, ինչպէս տպագրական ռոռոջ վրիպակներ, որոնք կարող էին թիւրիմացութիւն առաջացնել, ինչպէս «ոչ բնութիւն հիւթաբեր ի պետս նորա» հատուածի պետս վրիպակը ուղղել է պէտս: Բոլոր սրբագրութիւնները բնութագրութեամբ արուածի տպագրութիւն են թողնում եւ վստահութիւն ներշնչում առաջին հայեացքից:

Նա ուղղել է նաեւ Նեղոսի «Խրատ»-ի տպագրութիւնը, որոնք Յ. Նալբանը գետնել է հատորի վերջում: Այս սրբագրութիւնը տրամաբանօրէն ենթադրել է տալիս, թէ սրանք էլ զմիւռնեան նոյն ձեռագրում էին, քանի որ իր ծանօթագրութեան մէջ, որ տպագրի էլ 272-ի վերջում անմիջապէս կցուած է թովմա վարդապետ «գրչի» յիշատակարանին, Գ. Տ.-Յովհաննիսեանը գրել է. «Ձեռագիր օրինակն այն էր, յորմէ գտպեալն հանեալ էին ի թուականուն հայոց ումթա. յիզմիր քաղաքին» (ընդգծումը մերն է): Իսկ Մ 1097 ձեռագրում «Խրատ»-ը չկան. սա կարեւոր է անշուշտ ձեռագրի տարբերութեան համար:

2. Ինչ որ Գ. Տ.-Յովհաննիսեանը չի սրբագրել զմիւռնեան տպագրում

1. Տպագրի 1-ին եւ 2-րդ անուանաթերթերը (տե՛ս վերեւում նկարագրութեան մէջ) թողել է նոյնութեամբ, քանի որ դրանք չէին կարող Եզնիկին համարուել: Նոյն պատճառով ձեռք չի տուել անստորագիր «Առաջաբանութեան» եւ «Յիշատակարան»-ին:

2. Փակագծերը, որոնց մէջ երբեմն առնուած են բնագրի որոշ միջանկեալ համարուած բառեր, մնացել են:

3. Բնագրում իր-ից յետոյ նոտրատառ նշուած են սուրբգրային վկայութիւնների կամ ակնարկումների որոշ աղբիւրներ այսօրուայ ձեռով. նշումները չէին կարող հեղինակային լինել, եւ դա ասուած է «Յիշատակարան»-ում. դրանք մնացել են:

4. Տպագրի յապաւումները թողնուած են նոյնութեամբ, բացի մի քանիսից, որոնք գուցէ բոլորի համար յստակ չէին, ինչպէս (էջ 4) «գրանաւորս եւ գանբ.նս» բառերից երկրորդի Գ-ի տակ դրել է յատուկ «ծունկ» նշանը եւ նոյն նշանով աւելացրել է լուսանցքում «աւոր», որով կարդալու է «գանբանաւորս», որ գուցէ եւ իսկական սրբագրութիւն է: Ինչպէս այս, այնպէս էլ այլ յապաւումներում եւ նոյնիսկ ամբողջ գրուած բառերում ա տառը տպագրում յաճախ առկայ է իր մի աստամով միայն. դրանք մնացել են, եւ ինքն էլ է օգտագործել իր սրբագրութիւններում:

5. Տպագրի կետագրութիւնը մնացել է նոյնը, բացի մի քանի միջամտութիւնից:

6. Մեծ ուշադրութիւն չի դարձրել տպագրի վրիպակներին. օր.՝ զօրավիսն յապաւման ա-ն չի դարձրել ո (զօրութիւնսն): Մրանք կասկածելի են դարձնում նրան: Հատորի վերջի վրիպակների ուղղումը չի մտցրել բնագրի մէջ:

7. Ենթամնաները տպագրում յաճախ պակասում են տողադարձի ժամանակ. սրբագրողը դրանց չի անդրադարձել, նոյնիսկ թիւրիմացութիւն յարուցող բառերում:

8. Տպագրութեան որակը շատ ցածր է, նոյն բառի տառերի միջեւ նկատելի են անտեղի բացեր. օր.՝ «Նւ արդ՝ զիւ՞րդ էր/և էր»-ը (էջ 37) թողել է նոյնութեամբ՝ բացի նրա սխալ է-ի ե սրբագրութիւնից, սակայն բառը երեւէր է, առանց (')-ի:

9. Ը, յ եւ օ տառերի գործածութիւնը. Մ 1097 Ձեռ-ում նկատելի են դասական ուղղագրութեամբ աւելորդ Է-եր (խօսքը տողադարձի մասին չէ), ա եւ ո ձայնաւորներից յետոյ անհրաժեշտ յ-ի պակաս, իսկ օ տառը գործածուած չէ: Զմիւռնեան տպագրութեան մէջ աւելորդ Է-երը քիչ չեն, օր.՝ Խարխըլի (էջ 6), անհրաժեշտ յ-երը սովորաբար իրենց տեղերում են, աւ-ը գրեթէ միշտ փոխարինուած է օ-ով: Գ. Տ.-Յովհաննիսեանը այս երեք դէպքերում չի միջամտել. ուստի կա՛մ նրա ձեռագրում էլ դրանք այդպէս են եղել, կա՛մ դրանք Յ. Նալեանի կազմած բնագրում են եղել, կա՛մ էլ սրբագրողը անհրաժեշտ չի համարել վերականգնել ձեռագրի վրիպակները կամ ձեռագրային իսկական վիճակը, հաւանութիւն տալով հրատարակչի այդ «սրբագրութիւններին», քանի որ իր նպատակն էլ սրբագրել է եղել:

դ) Եզրակացութիւն Գ. Տ.-Յովհաննիսեանի սրբագրութեան եւ ձեռագրերի տարբերութեան մասին

Ըստ երեւոյթին նա զմիւռնեան ձեռագրից հարազատօրէն եւ բծախնդրութեամբ կամ ուշադրութեամբ է սրբագրել իր տպագիր օրինակը: Նրա մեծ ու փոքր սրբագրութիւնները հարիւրաւորների են հասնում եւ դրանք ձեռագրի «սխալների» վերականգնում կամ նշում չեն: Սրբագրուածները միայն Յ. Նալեանի փոփոխութիւնները չեն անշուշտ. դրանց աւելացել են նրա կազմած բնագրին ընդօրինակող Մեարոպ վարդապետի եւ տպագրութեան վրիպակները: Սակայն Գ. Տ.-Յովհաննիսեանը որքա՛ն էլ ուշադիր լինէր սրբագրելիս, որքա՛ն էլ «աւելորդ և կամ և մ՛անգամ ջնջեր է բնանկատած չլինի որոշ վրիպումներ: Ա. Բագրատունին^օ, որ իբրեւ ձեռագիր է ընդունել նրա սրբագրած տպագիրը, անհրաժեշտ է համարել ուղղել «յանխորշելի վրիպակաց տառիցն՝ որ ինչ ուրեք յայտնի գուշակէրն» («Ձեկուցումն», 1826-ի տպագրութեան), եւ սա ճշմարտութիւն է: Գ. Տ.-Յովհաննիսեանի տառային կամ բառային սրբագրութիւնները յաճախ համընկնում են նորագիւտ ձեռք չի տուել ձեռագրային կամ ճիշտ համարելով անշուշտ, չկան այժմեան ձեռագրում. այսպիսով առաջանում է երկու հարց: Ի տես նոյն բնագրի մեծամասնութեան նոյնութեան՝ մարդ հակուած է նոյնացնել ու զմիւռնեան եւ այժմեան ձեռագիրը. բայց նրանց հական տարբերութիւնները գալիս են ոչ միայն կասկած յարուցելու, այլ եւ երկու տարբեր ձեռագրեր ընդունել տալու, եթէ երբեք ամեն-մեկն չկասկածենք արուած սրբագրութիւնների վրայ եւ այդպիսով ամբողջովին վստահենք Գ. Տ.-Յովհաննիսեանին, ինչպէս արել է Ն. Փէչիկեանը, եւ նրանից առաջ՝ Ա. Բագրատունին^օ որպէս հրատարակիչ: Ելնելով ստորեւ տրուող եւ մեր աշխատանքի ամբողջ ընթացքում նկատած բնագրային նոյնութիւններից եւ տարբերութիւններից՝ մենք նոյն վստահութիւնը չունենք նրա նկատմամբ. դրանք հարկադրում են պնդելու, որ Եզրակի զմիւռնեան տպագրի եւ այժմեան Մ 1097 ձեռագրերը նոյնը չեն: Ասացինք նաեւ, որ զմիւռնեանն ունեցել է նեղօսի «խրատ»-ն էլ, որոնք չկան Մ 1097-ում: Նկատենք նոյնպէս, որ Գ. Տ.-Յովհաննիսեանի սրբագրութեան եւ նորագիւտ ձեռագրի խորագրերը նոյնը չեն (որոնց մասին աւելի մանրամասն կը խօսուի ստորեւ «Երկին տրուած վերնագրերը եւ մերը» հատուածում):

Կարող է օգտակար լինել հետեւեալ ցանկը:

ե. Զմիւռնեան տպագրի, Գ. Տ.-Յովհաննիսեանի սրբագրութեան եւ Մ 1097-ի բնագրային նոյնութիւններից ու տարբերութիւններից

Զմիւռն. տպ.	Գ. Տ. Յով. սրբագրութիւն	Ձեռ. Մ 1097
էջ 3	ամեմայն ի նմանէ երեւել եացն էութեանն ժամանեցուցանել միայնոյ նեպիականեալ զանձին	ի նմանէ երեւել եաց էութեանն միայնո անձին
4	խորհիցէր խորհիցէ ինքն մնայ անխախուտ որք Այսինքն՝ զբանաւորս	խորիցէ ինքն անխախուտ որ զբանաւորս
8	խոնարհագունիւք	խոնարհագունաւք
19	ուրեմն էր	էր
21	ոչ միայն յարգս ոչ միայն արդս	ոչ արդս
24	անձանց և չար	անձանց
24	լինին ուրեմն	լինին
30	թէպէտ մերձաւորութիւնն	մերձաւորութիւնն
33	զի եթէ	եթէ
38	ցուցանել կարէ ոք	ցուցանել
39	մի՞թէ պատճառ	պատճառ
39	միւսուցն	միւսուցն
41	գայն յառաջադրեաց մարդոյն (այս բայը դասական չէ)	(չիք)
41	ի դերեւս ի թեթուս	ի թեթուս
42	որպէս զի	զի
45	զապատամբ (4 ×)	զապատամբ (4 ×)
46	ըստ ձեզ	(չիք)

եւ այլն:

Այս տարբերակներից մի քանիսը ձեռագրի այնպիսի տողերում են, որոնց համար բանասէրները սրբագրութիւններ են առաջարկել, գտնելով, որ ձեռագրի բնագրում ինչ-որ բան կաղում է: Կարո՞ղ է լինել, որ այս նոյն թերիները կային նաեւ զմիւռնեան ձեռագրում, եւ Յ. Նալեանը լրացրել է դրանք իր կողմից, ու Գ. Տ.-Յովհաննիսեանը դրանք տեղին համարելով՝ թողել է նոյնութեամբ: Ի՞նչ էլ լինի, եւ Գ. Տ.-Յովհաննիսեանը որքանո՞վ էլ վստահելիօրէն սրբագրած լինի տպագիր օրինակը, մեր հրատարակութիւնը հիմնուած է Մ 1097 ձեռագրի բնագրի վրայ, որ տեսանելի եւ ստուգելի իրականութիւն է:

(Շարունակելի)